



**ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ
ՈՒՍՄՈՒՆՔԸ ԵՎ
ԴՐԱ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

9(47.923)

9-34

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ
ՈՒՍՍՈՒՆՔԸ
ԵՎ ԴՐԱ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածների ժողովածու

Հրատարակիչ՝ Հայաստանի Հանրապետական
կուսակցություն

4126

ԵՐԵՎԱՆ - 2009



Սույն ժողովածուն ամփոփում է Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից վերջին տարիներին պարբերաբար անցկացվող՝ «Գարեգին Նժդեհի ուսմունքը եւ դրա արդիականությունը» թեմայով հոդվածների մրցույթներին ներկայացված լավագույն աշխատանքները:

Կարելորելով Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության նշանակությունը մերօրյա հայ հասարակական, քաղաքական կյանքում՝ հեղինակների կողմից փորձ է կատարվում ներկայացնելու նժդեհյան գաղափարախոսության հիմնական դրույթները, արդիականությունը՝ այն վերլուծելով Հայաստանի եւ հայության առջեւ XXI դ. ծառայած մարտահրավերների համատեքստում:

Գրքում ամփոփված հոդվածները տպագրվում են առաջին անգամ:

Հայ ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում հայ մեծանուն գորավար, Լեռնահայաստանի սպարապետ, հրապարակախոս, պետական գործիչ եւ ազգային մտքի ռահվիրա Գարեգին Նժդեհի ուսմունքին եւ դրա արդիականությանը նվիրված հոդվածների ժողովածուն: Այն ամփոփում է Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից վերջին տարիներին կազմակերպված՝ «Գարեգին Նժդեհի ուսմունքը եւ դրա արդիականությունը» թեմայով հոդվածների մրցույթներին ներկայացված եւ մրցանակային տեղ զբաղեցրած հեղինակների աշխատանքները: Նշենք, որ արդեն ավանդական, ամենամյա դարձող այդ մրցույթը անց է կացվում երիտասարդ գիտնականների եւ ուսանողների շրջանում:

Հեղինակները հանգամանալից կերպով վեր են հանում նժդեհյան գաղափարախոսության հիմնական, առանցքային գաղափարները, ներկայացնում դրանց արդիականությունը, կյանքի կոչելու անհրաժեշտությունը՝ այդ ամենը վերլուծելով XXII դ. Հայաստանի եւ համայն հայության առջեւ ծառայած մարտահրավերների համատեքստում:

Ինչպես ամեն ճշմարիտ առաջնորդ՝ Նժդեհը մշտապես գտնվել է իր ժողովրդի կողքին: Երբ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր, Խմբ.) հայ զինվորական ղեկավարության շրջանում իշխում էին խուճապային տրամադրությունները, իսկ հուսահատված զինվորները բռնել էին նահանջի ճանապարհը, Նժդեհը հանդիսացավ այն ոգեփոխիչ ուժը, որն իր հմայիչ խոսքով առաջնորդեց բարոյալքված բանակը դեպի ճակատ, դեպի ազատություն եւ հաղթանակ: Տարիներ անց այդ հերոսամարտի մասին նա գրում է. «Հայը միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին հաջողվում է կռվի ընթացքում հավաքական սիրտ ստեղծել: Նման սրտի գործ էր Ավարայրը, իսկ մեր ժամանակներում՝ Ղարաքիլիսայի ճակատամարտը»:

Նժդեհի ռազմական, կազմակերպչական, մարտավարական բարձր կարողություններն արտահայտվեցին դեռ Բալկանյան պատերազմի տարիներին, որտեղ նա, զորավար Անդրանիկի հետ, Բուլղարական բանակի կողքին, ղեկավարում էր հայկական

կամավորական ջոկատը: Սակայն, պետք է խոստովանել, որ Նժդեհի ռազմական բացառիկ տաղանդն իր ամբողջ փայլով դրսևերովեց Սյունիքի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Վստահաբար կարելի է արձանագրել, որ Սյունիքում վարած ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ հաջողվեց ոչ միայն ստիպել խորհրդային իշխանություններին Չայոց այդ երկրամասը թողնել Չայաստանի կազմում, այլ նաեւ փրկել տեղի հայությանը կոտորածից եւ ապահովել Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո մազապուրծ եղած մտավորականության, զինվորականության եւ բազմահազար գաղթականների ապահով նահանջը Սյունիք, այնուհետեւ Պարսկաստան: Մխալված չենք լինի, եթե ասենք՝ չլիներ Նժդեհի եւ նրա հերոս զինակիցների սխրագործությունը Սյունիքում, չէր լինի նաեւ հայկական այդ երկրամասը մերօրյա Չայաստանի Չանրապետության կազմում, որով, մեր կարծիքով, կվտանգվեր Չայաստանի Չանրապետության գոյությունն ընդհանրապես, թեկուզ որպես խորհրդային հանրապետություն:

Չայրենիքին եւ հայությանը անմնացորդ նվիրվածությամբ Նժդեհը ծառայեց նաեւ գտնվելով տարագրության մեջ: Սփյուռքում նա շարունակեց իր հայապահպան գործունեությունն արդեն քարոզչական ճակատում՝ ճանապարհ բանալով հայ նորահաս սերունդը ուժացումից, անվերահաս ծուլումից փրկելու եւ հայրենատեր դարձնելու համար: Ահա հենց այդ հիմնախնդիրների լուծմանն էին միտված անցյալ դարի 30-ական թվականներին նրա կողմից նախաձեռնված Ցեղակրոն, ապա Տարոնական շարժումները եւ դրանց հայրենասիրական գաղափարախոսությունը:

Երբ բռնկվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը՝ եվրոպական երկրներում բնակվող եւ թուրքական յաթաղանից մազապուրծ եղած հայերի գլխին կախվեց հերթական եղեռնի վտանգը: Պատերազմի օրերին Ադոլֆ Հիտլերը գրում էր. «Չնայած Ռոզենբերգի պնդումներին, ես վստահություն չեմ տածում հայերի նկատմամբ»: Ահա այդ ժամանակ, իր ճշմարիտ հայրենասերի կոչմանը հավատարիմ՝ Նժդեհը չմնաց կրավորական դիտորդի դերում եւ իր ձեռքը վերցրեց գերմանական բանակի գրաված տարածքներում բնակվող հայության փրկության գործը:

Նույնիսկ խորհրդային իշխանությունների կողմից հանիրավի ձերբակալվելուց եւ բանտարկվելուց հետո՝ գտնվելով խորհրդային զնդաններում, Նժդեհը փորձում էր ուղիներ գտնել Չայրենիքին ծառայելու համար: Մասնավորապես, նշենք, որ այդ ժամանակ հավաստի աղբյուրներից համառ լուրեր էին ստացվում, որ պատերազմի ավարտից հետո խորհրդային Միությունը պատրաստվում է ներխուժել Թուրքիա: Չաշվի առնելով պատմական պահը՝ Նժդեհը խորհրդային իշխանություններին ուղղված իր բազմաթիվ դիմումներում առաջարկում է իր քառասնամյա հակաթուրքական պայքարի փորձը՝ Արեւմտյան Չայաստանի ազատագրման գործում, թեկուզ խորհրդային Չայաստանին միացման պայմանով, քանզի վստահ էր, որ խորհրդային բռնապետության շենքը մի օր փլուզվելու է եւ դրա տեղում հառնելու է Միացյալ եւ Ազատ Չայաստանը:

Նժդեհը խորհրդային իշխանություններին է ներկայացնում իր կողմից մանրամասն մշակված՝ Արեւմտյան Չայաստանի ազատագրման ծրագիրը: Նժդեհի կարողություններն օգտագործելու համար նրան փոխադրում են Երեւանի բանտ: Նժդեհին հարցաքննած ԽՍՀՄ Պետանվտանգության նախկին աշխատակիցների վկայությամբ՝ Նժդեհի եւ Պետանվտանգության մարմինների հարաբերություններն աննախադեպ էին: Բերենք նրանցից մեկի՝ Վարդան Մելքունովի վկայություններից մի հատված. «Նա ինքն էր միշտ մեզ առաջարկներ անում, եւ մենք իր հետ աշխատում էինք ոչ թե մեր առաջարկներն իր հետ համաձայնեցնելու, այլ՝ ի՞ր առաջարկները Մոսկվայի հետ համաձայնեցնելու վրա: Դրա համար ես այն կարծիքին եմ, որ Նժդեհի հետ Պետանվտանգության մարմինների հարաբերությունը աննախադեպ էր, եզակի եւ նմանը չունեցող... Նրա հետ մեր համագործակցությունը բացառիկ էր նաեւ մեզ համար: Ամեն ինչ չափից ավելի հասկանալի, բաց ու հստակ էր: Չգիտեմ՝ նման դեպք երբեւէ եղե՞լ է Պետանվտանգության պատմության մեջ: Ես որ՝ չեմ հիշում»: Սակայն աշխարհաքաղաքական իրադրության եւ ԽՍՀՄ արտաքին քաղաքականության գերակայությունների փոփոխության պատճառով՝ Նժդեհի եւ համայն հայության փափագին այս անգամ էլ վիճակված չի լինում իրականություն դառնալ. խորհրդային գորքերը Թուրքիա այդպես էլ չմտան:

Խորհելով Նժդեհի կերպարի եւ նրա հերոսական կյանքի մասին՝ հաճովում ես նրան իր գաղափարակից, փիլիսոփայության դոկտոր Յայկ Ասատրյանի կողմից տրված բնութագրին. «Մենք գործ ունենք փոթորկալից անցյալի տեր մի անհատի, հայկական չափանիշներով վերցրած պատմական մի անծնավորության հետ»:

Գարեգին Նժդեհի ապրած կյանքն ու թողած տեսական ժառանգությունը իրենց խորհրդով մի շտեմարան են մեր սերնդի հայեցի դաստիարակության, նրա՝ Յայրենիքին նվիրվելու եւ ծառայելու համար: Յուսով ենք, որ այս գրքույկը իր համեստ ներդրումը կունենա մեծ հայորդու հավիտենարժեք գաղափարախոսության տարածման գործում:

Վարդան Աթոյան

(ԳԳԿ Երիտասարդական կազմակերպություն)

ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵՅ.
ԱՆՑՅԱԼ, ՆԵՐԿԱ ԵՎ ԱՊԱԳԱՍ՝

Յայոց պատմությունը մեզ մի հատիկ բան է սովորեցնում – այն, որ հայն իր պատմությունից բնավ չի սովորում:

Գարեգին Նժդեհ

Սեփական ճակատագիրն ազգի ճակատագրից չզատած, առ այսօր էլ շատերի կողմից վերագնահատման եւ հասկացման պահանջ զգացող «*հայտնի-անհայտ*» ազգային գործիչն ու մտածողը՝ *Գարեգին Նժդեհը*, արդիական լինելու հայտ է ներկայացնում ոչ միայն իր պատմաստեղծ հերոսականով, այլև գործառնական կենսունակությամբ աչքի ընկնող ստեղծագործական հղացումներով: Գարեգին Նժդեհը հայոց պատմության այն եզակի դեմքերից է, որի գործունեությունն ու իմաստասիրական հայացքները կազմում են ներդաշնակ, օրգանական միասնություն: Ավելին, Նժդեհի տառապաշատ ոգու ստեղծագործական ակտիվության հղացումը նրա ուսմունքն էր, իսկ այդ ուսմունքը՝ իր կենսագործունեության, պատմաստեղծ կյանքի մեծագույն ուժավորողն ու «սնող» զարկերակը: Եթե Նժդեհի իմաստասիրությունն իր կյանքի, գործունեության ու ապրելակերպի իմաստուն «խորհրդատուն» էր, ապա վերջիններս՝ նրա ուսմունքի իրագործելիության խորհրդանիշները: Այլ կերպ՝ «*Նժդեհին փիլիսոփայութիւնը՝ Նժդեհը ինքն էր*»²:

Նժդեհի իմաստասիրական հայացքները, դրանց շրջանակներում արծարծված բազմաթիվ բարոյափիլիսոփայական, հասարակագիտական հիմնախնդիրներ կարելուրություն են ներկայացնում հայ մշակույթի պատմության ուղղությամբ համապատասխան ուսումնասիրությունների իրականացման հրամայականի տեսանկյունից, իսկ դրանց լուծումները պահպանում են իրենց հրատա-

պությունը *Նաե* մերօրյա հայ իրականության բազմաթիվ թերիների ախտորոշման եւ հաղթահարման առումով: Նրա իմաստասիրական խորհրդածությունների ծիրում մարդն է՝ իր տկարություններով եւ արժանիքներով, իր թաքնախորհուրդ տւթյամբ եւ «ոչինչ չասող» վարքով, իր ստեղծագործական արարումներով եւ առօրյա «մեծագործություններով», իր հայրենասիրությամբ եւ ազգադավ կեցվածքով, իր ազգասիրական ճառերով եւ ապազգային գործերով, իր գաղափարապաշտությամբ եւ նյութապաշտական կողմնորոշումներով, իր առաքինություններով եւ անդիմագիծ բարոյականով: Այս առումով պատահական չեն բարոյափիլիսոփայական հիմնախնդիրների հանդեպ Նժդեհի ցուցաբերած հետաքրքրությունները, անհատների բարոյական կատարելագործման, ժողովուրդների հոգեվերանորոգման հիմնախնդիրների հետ կապված մտորումները, քանզի ինքնագերազանցող, ինքնահաղթահարող եւ ինքնակատարելագործման հեռանկարից չխուսափող անհատներն ու ազգերն են, որ կարող են հավակնել սեփական դիմագծի եւ գոյության պահպանմանը, մարդկությանը սեփական ստեղծագործական արարումների նվիրաբերմանը:

20-րդ դարի առաջին կեսի եղեռնապատ հայ իրականությունը, հայ ժողովրդի ողբերգական ներկան եւ ստեղծագործ ապագայի կերտման պատասխանատվությունը, Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմները, անմարդկային դաժանություններն ու մշակութային, հոգեւոր կյանքի միօրինակացման ջանքերը, նյութապաշտական կողմնորոշումների արմատավորումը, ապազգային եւ մարդատյաց գաղափարաքաղաքական հոսանքների զանգվածային բնույթ ստանալու միտումները, քաղաքական կյանքում եւ գործընթացներում մաքիավելիզմի հաղթարշավը, բազմաբնույթ եւ բազմաբովանդակ արժեքային գերակայություններն ու քառսային բազմազանություն ներկայացնող ուսմունքները յուրովի ապրվել են նաեւ Գարեգին Նժդեհ մտածողի ներաշխարհում եւ համապատասխան իմաստավորում ստանալով՝ արտահայտություն ստացել նրա ուսմունքի մեջ: Այլ կերպ՝ սեփական ժողովրդի «գորշ» ներկայի եւ ոչ հուսադրող ապագայի, մարդկության բարոյական անկատարության գիտակցմամբ էր նաեւ պայմանավորված Նժդեհի «տառապաշատ» ոգու ստեղծագործական բարձր կենսունակությունը:

Եթե Նժդեհի հասարակական-քաղաքական գործունեությունը ազգային ինքնության պահպանման հիմնահարցի առումով գրեթե միշտ հավանություն է ստացել, ապա 20-րդ դարում ձեւավորված եւ լայն տարածում ստացած որոշ ցեղապաշտական հոսանքների ու շարժումների (խտալական ֆաշիզմ, գերմանական նացիզմ) հետ ցեղակրոն ուսմունքի առանցքային գաղափարներից շատերի ունեցած զուտ արտաքին, ձեւական ընդհանրությունները հետք են թողել ցեղակրոնությանը տրված գնահատականների վրա, որոնց հետեւանքով ցեղակրոնությանը ներկայացվել եւ ներկայացվում են բազմաթիվ մեղադրանքներ: Հարկ է փաստել, որ հասցեագրված մեղադրանքները հաճախ ուղեկցվել են նաեւ մեթոդաբանական անգրագիտության դրսեւորումներով, քանզի նացիստների հետ Նժդեհի համագործակցությունը երբեմն անարդարացիորեն ներկայացվել է որպէս գաղափարական ընդհանրության աներկբա դրսեւորում եւ անտեսվել է համագործակցության *անայլընտրանք* լինելը հայափրկության գործում: Այդ մեղադրանքների տրամաբանական շարունակությունն է այն տեսակետը, թե զարգացման ժողովրդավարական ճանապարհը որդեգրած Հայաստանի Հանրապետության համար Նժդեհ-մտածողն այլեւս «ասելիք» չունի, նրա ստեղծագործություններն իրենց դարն ապրել են, իսկ հետահայացությունն առ Նժդեհ արդարացված է միայն եւ միայն Նժդեհի քաղաքական գործունեության մանրամասների վերհանմանը կոչված պատմագիտական ուսումնասիրությունների խորացման համար: Ավելին, ցավալի է նաեւ այն, որ Նժդեհի ստեղծագործական ժառանգությունը համապատասխան գնահատականների է արժանանում առանց բազմակողմանի ուսումնասիրության, ինչպէս նաեւ կարծրատիպային մոտեցումների ու որոշ գաղափարների «արտահամատեքստային» մեկնաբանության դիրքերից: Բննադատության արժանի երեւույթ, որն առ այսօր էլ իր կնիքն է թողնում *ոչ թե արդարացման, այլ հասկացման* կարիք ունեցող մտածողին ըստ արժանվույն գնահատելու գործում: Այս իմաստով թերեւս հիշատակման արժանի է 18-րդ դարի գերմանացի մտածող, արվեստագետ Գ. Լիխտենբերգի հետեւյալ միտքը. «*Գիրքը հայելի է: Եվ եթե նրա մեջ կապիկ է նայում, ապա անհնարին է, որ դրանից առաքյալի դեմք երեւա*»³: Այսինքն՝ խնդրո առարկա հիմնահարցը կարիք ունի անաչառ ուսումնասիրության, քանզի «*այդպիսին չէին*

հետազոտողները խորհրդային տարիներին, նրա անձի նկատմամբ ծեւավորված թշնամական վերաբերմունքի պատճառով, իսկ հետխորհրդային տարիներին «անաչառությանը» խանգարում է նրա անձի հանդեպ ծեւավորված գրեթե «պաշտամունքային» վերաբերմունքը»⁴: Վերջինս, հարկ է նկատել, անընդունելի էր նաեւ Նժդեհի համար, որը խորապէս մերժում էր մտավոր ստրկութիւնն ու դոգմատիզմը եւ, ըստ էության, ապագա սերունդներին զգուշացնում էր նաեւ իր իսկ գաղափարների դոգմատիկ յուրացման վտանգների մասին: «Իր խորքի մէջ, - գրում է Նժդեհը, - մոլար է անէն վարդապետութիւն, կրօնական թէ ընկերային, որը մտաւոր կուրուքիւն է պահանջում իր դաւանողներից: Այո՛, կեղծ է, հակամարդկային նմանը, որով եւ՝ մերժելի»⁵: Այսինքն՝ Նժդեհը ոչ թէ պահանջում է պարտադրում է անվերապահորեն դառնալ մոլեռապետական, այլ «առաջարկում» է իր ուսմունքն օգտագործել համապատասխան ճշմարտութիւնների որոնման գործում, որոնց հարազատումը յուրաքանչյուրի ազատ ընտրութեանն է բաժին ընկնում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նժդեհի ուսմունքի բնորոշ գծերի եւ արդիականութեան հիմնահարցը հնարավոր չէ բազմակողմանիորեն եւ մանրակրկիտ լուսաբանել փոքրածավալ հոդվածի շրջանակներում, ուստի նպատակահարմար է հատուկ ուշադրություն դարձնել հիմնահարցի առավել առանցքային կողմերին: Հարկ է նշել, որ թեզիսների ծեւով ստորեւ կներկայացվեն տարբեր հիմնահարցերի մոլեռային այն ըմբռնումները, որոնք մի կողմից միտված կլինեն նրա ուսմունքի դիմագծմանը, մարդասիրական բովանդակության վերհանմանը, մյուս կողմից՝ մերօրյա հայ իրականության թերիների ախտորոշման եւ հաղթահարման գործում դրանց հրատապության բացահայտ եւ ենթատեքստային ներկայացմանը:

- ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ Նժդեհի կարծիքով առաքինութիւնների թագն ու պսակն է: Սակայն ի տարբերութիւն «հայրենասիրության» ազգայնամոլական մեկնաբանութիւնների՝ Նժդեհի համար հայրենասիրական, ազգասիրական զգացումներն ու գիտակցութիւնը չեն կարող իրենց հիմքում ունենալ այլատյացութիւնը կամ ատելութիւնն առ օտարները: «Այդ նվիրական զգացումը (իմա՝ հայրենասիրութիւնը - Ա. Ս.), - գրում է Նժդեհը, -

զարգանում է աստիճանաբար: Սկզբում՝ բնազդական, զարգանալով՝ նա դառնում է իմացական՝ ոգիանում է նա: Առաջին դեպքում անհատը թելադրվում է, մղվում մի բնազդային զգացումից, երկրորդ դեպքում՝ նա գիտակցորեն կատարող է մի պարտականութիւնը»⁶: Եթէ հայրենասիրութիւնը բնազդային զգացումից վերաճում է գիտակցական երեւոյթի, ապա հարց է առաջանում՝ ի՞նչն է ապահովում այդ անցումը: Համաձայն Նժդեհի՝ այդ գործընթացի հիմքում ընկած է ինքնաճանաչողութիւնը, վերապրումը: Այսինքն՝ իրական հայրենասիրութիւնը խարսխված է սեփական մշակութի համամարդկային գծերի ճանաչման, ազգի պատմության լուսավոր էջերի վերապրման վրա: «Իմ հայրենիքը, - գրում է Նժդեհը, - դա մարդկայնորեն այն լավագույնն է, որ կա Հայաստանում»⁷: «Նժդեհյան» հայրենասիրութիւնը չի կարող իրապէս ուժեղանալ, ամրապնդվել թէ՛ այլոց, թէ՛ սեփականի նկատմամբ ատելութեան հողի վրա: Ազգային ինքնաճանաչողութեան, սեփականի նկատմամբ սիրո վրա կարող է հիմնված լինել հայրենասիրութիւնը, քանզի այդ սերն է ճանաչողութեան նախապայմանը, իսկ վերջինս՝ այդ սիրո խորացման առաջնաշարժիչ գործոնը, տվյալ դեպքում՝ հայրենասիրութեան գիտակցական մակարդակ բարձրացումը: Հետեւելով Բերգսոնի փիլիսոփայական հայացքներին՝ Նժդեհը գրում է. «Ըստ Բերգսոնի ներհայեցողական իմացականութեան՝ «Ատելութիւնը բաժանում է, որի հետեւանքով ճանաչումը դառնում է անկարելի կամ սխալ: Ծանաչել նշանակում է միութեանը մէջ լինել նրա հետ, որին ուզում ես ճանաչել, որով՝ ով ատում է՝ չգիտէ, չի ճանաչում»⁸: Այստեղից պարզ է դառնում այն, որ հայրենիքի, սեփական ազգի նկատմամբ տածած բնազդական սերը, դրական զգացումները հնարավորութիւն է տալիս նրա ճանաչման, իսկ դրանց ճանաչումն աստիճանաբար այդ բնազդական սերը կամ զգացումները բարձրացնում է մի նոր մակարդակ՝ գիտակցված հայրենասիրութեան: Անհաշտ թշնամիներից է աշխարհաքաղաքացիութիւնը կամ աշխարհաքաղաքացիական պատրանքապաշտութիւնը: Համաձայն Նժդեհի՝ աշխարհաքաղաքացիական վարդապետութիւնը սմանկ է, քանզի այստեղ հստակ ներկայացված չեն այն օբյեկտները, որոնց նկատմամբ կա աշխարհաքաղաքացու պարտականութեան դրսեւորման անհրաժեշտութիւնը: Վերջինիս բարոյական

պարտականության օբյեկտ կարող է լինել մարդկությունը, սակայն այն դեռևս վերացական հասկացություն է, քանզի «մարդկութունն իրենից չի ներկայացնում մի կազմակերպված միութիւն, ինչպիսին է ազգը, որպէսզի նրա նկատմամբ կարողանանք որոշել մեր անելիքը, մեր պարտականութիւնները»⁹: Աշխարհաքաղաքացիները, ըստ Նժդեհի, ընտրել են պարտականության այնպիսի տարբերակ, որը, ըստ էության, կոչված է «ազատելու» ցանկացած պարտականությունից: Նրանց մի մասը միամիտ ցնորապաշտներ են՝ զուրկ իրականության զգացումից, մյուս մասը՝ պարտականության փոքրոգի դասալիքներ, որոնք զանազան սոփեստություններով քողարկում են իրենց դավաճանությունը մարդկային առաքիլություններից գերագույնի՝ հայրենասիրության հանդեպ: Արտաքուստ աշխարհաքաղաքացիությունը եւ եսապաշտությունը միմյանցից միանգամայն տարբեր երկու ծայրահեղություններ են: Իրականում, սակայն, այս երկու երեւոյթները միեւնոյն արատավոր շրջանի միմյանց նկատմամբ ոչ անտարբեր կետերն են: Կարող ենք անգամ ասել, որ եթե եսապաշտի սիրո «տեսահորիզոնը» սահմանափակվում է սեփական ես-ի անձուկ քարանձավով, ապա աշխարհաքաղաքացու սիրո «լայն» տեսահորիզոնը փորձում է տեսնել այն, ինչ գոյություն չունի եւ, միեւնոյն ժամանակ, անտեսում է իր տեսադաշտում հայտնված իրերը, առարկաներն ու երեւոյթները: Աշխարհաքաղաքացիությունը հիմնականում եսապաշտի մարդասիրական «հագուստն» է, որը կոչված է մարդասիրության կարգախոսի ներքո քողարկել անհատի անձնապաշտական նկրտումները, այն նաեւ եսապաշտի զենքն է՝ պարտականության դասալիքի իր կոչմանը բարոյական արդարացվածությունն հաղորդելու համար: Այսինքն՝ աշխարհաքաղաքացին «իրականում մտնում է աւելի եսասերին քան այլասերին: Իսկ եթե եսասեր չէ, ապա ցնորապաշտ է, որի սերը դեպ մարդկութունը պլատոնական է, անարժէք»¹⁰ (ընդգ. իմն է - Ա. Ս.):

Համաձայն Նժդեհի՝ սեփական նպատակների իրականացման համար պահանջվող միջոցների նկատմամբ խտրություն չդնող եւ այլատոյաց «հայրենասիրությունը», ըստ էության, հայրենասիրությունն չէ: Չի կարելի ազգին, հայրենիքին ծառայել ստոր եղանակներով: Ստորությունները եւ բարոյական տկարությունները միմյանց հետ սերտաճած են. ստորություններով սնվում են

մարդկանց բարոյական տկարությունները, իսկ վերջիններից ծնունդ են առնում մարդկային ստորությունները: Եսապաշտը (նյութապաշտը), որի նպատակը բացառապես սեփական բարեկեցության ապահովումն է, որն աշխարհը տեսնում է միայն սեփական ես-ի քարանձավից, ում համար պարտականությունը պարտադրված դաժան իրականություն է, որը կյանքի է կոչվում բացառապես անձնական շահախնդրության կամ վախի դեպքում, իսկ իրավունքը՝ անձնական վայելքների ու հաճույքների բավարարման հետ է միայն զուգակցվում՝ բարոյապես տկար է: Նրա տկարությունն իր «պաշտամունքային օբյեկտներին» հասնելու համար պատրաստ է նաեւ ստորությունների, որովհետեւ նմանը գերին է իր կրքերի ու ցանկությունների, իսկ ստորություններն ավելի են խորացնում նմանի բարոյական տկարությունները, քանզի, Նիցշեի նման կարող ենք ասել (թեկուզ այլ մեկնաբանությամբ), որ «երբ երկար անդունդի մեջ ես նայում, ապա անդունդը նույնպես քո մեջ է նայում»¹¹:

ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ - Ժողովրդի անցյալը կամ պատմությունը ոչինչ չասող «անցավորների թանգարան» չէ, որին ներկա եւ ապագա սերունդները պիտի մոտենան կրավորական հանդիսատեսի կարգավիճակով, որոնք կարող են նայել, բայց չտեսնել, ունկնդրել, բայց չլսել, «հաղորդակցվել», բայց հոգեհաղորդակից չլինել: «Վա՛յ այն ժողովրդին, - գրում է Նժդեհը, - որի անցյալն իր համար լուր մի գերեզման է անխոս: Չկա՛ ավելի մեծ ծառայություն իր ժողովրդին, քան պատմագրումը նրա անցյալ կյանքի»¹²: Նժդեհի կարծիքով, պատմական ճանաչողությունը ոչ միայն ճանաչողական արդարացվածություն ունի, այլեւ դաստիարակչական եւ վերանորոգչական: Ոգեսպառ, տառապանքների «դատապարտված» ժողովուրդները հակված են սեփական պատմության մեջ տեսնել միայն բացասականը, պատմությունը նրանց համար շարունակական բացթողումների, դժբախտությունների եւ պարտությունների հետեւողական շղթա է, որտեղ իրենք անգոր են սեփական ճակատագրին նոր ընթացք տալու: Մինչդեռ ժողովուրդները չեն պարտվում, եթե չեն ուզում պարտվել:

«ԱՆՅԱՏԸ ՄԻՋՈՑ Է, ԱԶԳԸ՝ ՆՊԱՏԱԿ» – Նժդեհը մեծապես կարելուում է ինքնահաղթահարող, ինքնագերազանցող անհատների դաստիարակումը, քանզի անիդեալ անհատը, որն ապրում է

ներկայի այսպահականությամբ, փայլում է առօրյա «մեծագործություններով» եւ չի կարողանում դուրս գալ սեփական աղքատիկ «ես»-ի անձուկ քարանձավից՝ ակտիվորեն մասնակցում է ինչպես իր «ամենօրյա թաղմանը», այնպես էլ սեփական ժողովրդի ու պետության ոչ հուսալի ապագայի կերտմանը: Նժդեհյան ինքնահաղթահարող անհատն առաջնորդվում է *«անհատը միջոց է, իսկ ազգը՝ նպատակ»* կարգախոսով: Հապճեպ ընդհանրացումներից խուսափելու համար պետք է նշել, որ այս կարգախոսը էական ոչ մի ընդհանրություն չունի իր ֆաշիստական մեկնաբանության հետ: 20-րդ դարի քաղաքական իրականությանը բնորոշ են եղել այդ արտահայտության գործնական կիրառությունները: Ամբողջատիրական եւ ֆաշիստական ռեժիմների օրոք տարբեր պետությունների, կազմակերպությունների ղեկավար ատյանները պետության հզորացման նշանաբանի ներքո այդ կարգախոսը ոչ միայն կյանքի են կոչել, այլեւ փորձել են դրան մարդասիրական «զգեստ» հագցնել: Հետխորհրդային տարածաշրջանի երկրների ազգաբնակչության հիշողության մեջ դեռ թարմ են տպավորություններն առ այն, որ բոլշեվիկյան իշխանության գոյության եւ ստալինյան բռնատիրության օրոք սոցիալիստական պետության եւ կոմունիստական հասարակության կառուցման գործն ինչպիսի անդառնալի կորուստների, մարդկային ողբերգությունների զնով ուղեկցվեց: Իսկ *«անհատը միջոց է, ազգը կամ պետությունը՝ նպատակ»* կարգախոսը կյանքի կոչվեց պետության զարգացման գործում անհատի ոչնչության գաղափարի ներքո: Այսինքն՝ անհատն է պետության համար, այլ ոչ թե պետությունը՝ անհատի: *«Անհատը միջոց է, ազգը՝ նպատակ»* կարգախոսը *Նժդեհը հասցեագրում էր յուրաքանչյուր անհատի, սակայն հասցեագրման նպատակը ոչ թե այլոց նկատմամբ դրա կիրառումն էր, դիմացինին որպես միջոց դիտելը կամ օգտագործելը, այլ՝ սեփական անձի նկատմամբ խստապահանջության ձեւավորումը: Միով բանիվ՝ այդ կարգախոսը չէր նշանակում անգամ հանուն ամենամակիրական իդեալների դիմացինին որպես միջոց դիտարկող անհատի ներքին արդարացման կոչ, այն նշանակում էր հանուն ազգի, մարդու, իդեալի՝ սեփական անձը զրկված չէ՝ «միջոցի» կարգավիճակով ներկայանալու պարտավորեցնող իրավունքից:* Այլ կերպ ասած՝ ինքնահաղթահարող անհատը

նվիրաբերվում է կամ պարտավոր է նվիրաբերվել ազգին, մարդկանց ոչ թե նրա համար, որ ինքն անարժեք միջոց է, իսկ նրանք՝ նպատակ, այլ նրա համար, որ այդ է պահանջում իրեն եւ այլոց որպես նպատակ դիտելը: *«Ամենուրեք, - գրում է Նժդեհը, - անհատ թե դասակարգ - կամուսին սահմանափակում են իրենց անձնական իրավունքներն ու շահերը՝ հանուն ցեղի եւ հայրենիքի: Ու նման ինքնասահմանափակումը - զոհաբերության այդ գերազույն ակտը - ոչ թե նվաստացնում, դիմազրկում է մարդկային անձնավորությունը, ընդհակառակը, դա մեծապես ուժավորում, հարստացնում է նրա հոգեւոր կյանքը»*¹³: Նժդեհի համար սակավարժեք էր ազգանվեր այն ծառայությունը, որն այս կամ այն անհատի կողմից իրականացվելու էր *պարտադրված պարտականության տարբերակով*: Այսինքն՝ ազգասիրական եւ պետականանվեր գործունեությունն արդարացված է, եթե այն գիտակցված է եւ արդյունք է ներքին համոզմունքի, մտքի եւ սրտի ներդաշնակ համագոյության: *«Գերազույն արժեքների համար՝ ներքին մղումով, - գրում է Նժդեհը, - մեռնում է ոչ թե ձեւական օրենքի հպատակը, այլ մարդը՝ ներքնապես ազատագրված մարդը»*¹⁴:

- **ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՓԱՆԻՇԻ ՀԻՄՆԱՀԱՐՈՅԸ** – Հայ մտածողը քննադատում է որպես հետեւանք դրական արդյունք ունեցած այս կամ այն ազգօգուտ վարքը կամ գործողությունը (*դրանց «բարոյական» բնույթը*), որոնց շարժառիթը ոչ թե *պարտականության գիտակցումն* է, այլ նեղ անձնային շահը, որը կարող է թաքնվել *չգիտակցված, բայց իրականացված պարտականության ներքո*: Եթե այլաբանորեն ասենք, ապա *եկեղեցու պատերի ներքո աթեիստի աղոթքը Նժդեհի համար ոչ մի արժեք չունի*: Նժդեհի խորին համոզմամբ՝ բարոյականը նպատակադրության հետ սերտորեն շաղկապված է, որ «ի՞նչ արեց» - հարցի պատասխանը «ինչի՞ համար արեց» հարցի անտեսման դեպքում՝ բարուց եւ չարից անդին է, բարոյականի նկատմամբ գտնվում է չեզոք դաշտում¹⁵:

- **ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ** փոխհարաբերության հարցում Նժդեհը ցուցաբերում է դիալեկտիկական մոտեցում: Նժդեհի ժառանգության մեջ կարելի է նկատել *պարտականության իրավունքի* հասկացությունը, որը, սակայն, նա բացահայտ կերպով չի օգտագործում: Ըստ նրա, սեփական պարտական

նություններին պետք է մոտենանք ինչպես մեր իրավունքներին, իսկ դրանց իրականացման համար մղվող պայքարին՝ որպես պայքարի հանուն մեր իրավունքների: Հակառակ պարագայում՝ պարտականության եւ իրավունքի հակադրման դեպքում, հնարավոր չի լինի խուսափել պարտականության հարկադրական բնույթի մասին պատկերացումներից, այն կդառնա անցանկալի եւ անընդունելի երեւոյթ, քանզի կիրականացվի ոչ թե այն պատճառով, որ «ե՛ս եմ ուզում», այլ այն պատճառով, որ «ես ստիպված եմ»: Պարտականությունը, իր հերթին, նաեւ իրավունք է, որի *իրականացումը հնարավորություն է տալիս դառնալու անձնադիր եւ հայրենասեր քաղաքացի, լավ մարդ, առաքինի կերպար*: Այսինքն՝ կարող ենք ասել, որ *յուրաքանչյուրը զուրկ չէ հայրենասեր լինելու իրավունքից, բայց ոչ ամեն մեկն է հայրենասեր լինելու պարտականությունն իր իսկ կյանքի ընթացքում դարձնում այդ իրավունքի իրականացում*: Յուրաքանչյուր ազգ, պետություն իրավունք ունի ուրույն տեղ զբաղեցնել երկրի վրա, իրավունք ունի ինքնիշխանության, սակայն այդ իրավունքը կամա թե ակամա ենթադրում է իրավունքը կյանքի կոչելու պարտավորեցնող հանձնառություն կամ պատասխանատվություն: Այլ կերպ՝ «երկնային իրավունքը» դառնում է «երկրային» միայն եւ միայն այն ժամանակ, երբ կա վճռականություն եւ համոզմունք նման անցումն իրականացնելու համար: «*Իրավունքն առանց ուժի*, - գրում է Նժդեհը, - *պարզ արստրակցիա է*»¹⁶:

Իհարկե, պարտականության իրավունքի գիտակցության ձեւավորման հարցում կարելի է նկատել որոշակի ուտոպիականություն, քանզի դժվար է հասու լինել այն բանին, որ պարտականությունները բոլորի կողմից գիտակցվեն որպես իրավունք, որպես ինքնարտահայտման եւ ինքնադրսեւորման հնարավորություն: Եվ պատահական չէ, որ այստեղ կարող է օրինական հարց առաջանալ. եթե հնարավոր չէ այս դրական իդեալը ամբողջությամբ եւ անվերապահորեն կյանքի կոչել, ապա ինչո՞ւ է այդ գաղափարը խիստ կարեւորվում կամ ո՞րն է դրա դրական նշանակությունը: Խնդրո առարկա հարցում Նժդեհի դրական ավանդը կարելի է բացատրել հետեւյալ գործոնների համատեքստում.

1. Նժդեհը փորձում է ցույց տալ, որ հասարակական, ազգային կյանքում դրական փոփոխություններ իրականացնելը կամ դրանց երկարատեւությունն ապահովելը անհնարին է հարկադրանքի ուժի միջոցով: Հարկադրանքը կարող է որոշակի դրական արդյունք ապահովել, սակայն հարկադրանքի սկզբունքը չի կարող ձեւավորել պարտականությունների կատարման մշակույթ: Մինչդեռ եթե պարտականությունը գիտակցված է եւ այն դարձել է ներքին համոզմունք, ապա այն կյանքի կկոչվի ոչ թե արտաքին ազդեցությունների պատճառով, այլ այն պատճառով, որ *պարտականության սուբյեկտն է դա ցանկանում*: Արտաքին սպառնալիքներով, վտանգով, հարկադրանքով եւ վախով պայմանավորված պարտականությունների կատարմանը բնորոշ է անհատին որպես պարտականությունների օբյեկտ դիտարկումը, մինչդեռ Նժդեհի համար անհատը պարտականության սուբյեկտ է կամ, ավելի ճիշտ, պետք է անցում կատարի *պարտականության օբյեկտի կարգավիճակից պարտականության սուբյեկտի կարգավիճակին*:

2. Նժդեհն այն համոզմունքին է, որ պարտականության գիտակցման գործում չափազանց կարեւոր եւ բարդ խնդիր է գիտակցության փոփոխության իրականացումը, համապատասխան արժեքային գերակայությունների հաստատման ապահովումը: Ավաժի համատեքստում ժամանակավրեպ չի կարելի համարել այն, որ «*ես մեղավոր չեմ, պետությունն է մեղավոր*» կամ «*մենք պարտավոր չենք, պետությունն է պարտավոր*» կարգախոսները, որոնք ցայսօր էլ տիպական են հայ իրականությանը, լուրջ վերանայման եւ հաղթահարման կարիք ունեն: Վերջինիս շրջանակներում չկա այն բանի գիտակցումը, որ «*պետությունը պարտավոր է*» դրույթը հիմնականում կարող է արդարացվել այն դեպքում, երբ մենք պարտավորված ենք զգում պետության զարգացման գործում եւ դրանով նպաստում այն պարտավորությունների իրականացմանը, որոնք պետությունը պիտի իրականացնի: Կարելի է ասել, թե «*պետությունը պարտավոր է, երբ նրան պարտավորեցնում են*», իսկ դրա համար անհրաժեշտ է հայրենասիրական, պետական մտածողության զարգացում, քաղաքացիական ինքնագիտակցության, պարտականությունների կատարման մշակույթի ձեւավորում եւ զարգացում. այլ խոսքով՝

անհրաժեշտ է հոգեփոխում, հոգեվերանորոգում: «Յանրապետություն սահմանադրելը, - գրում է Նժդեհը, - հեշտ է, դժվար է սահմանադրականներ ստեղծելը»¹⁷: Այլ կերպ՝ կարելի է լավ օրենքներ մշակել, սակայն դրանք կմնան սոսկ որպես «արժեքավոր գրառումներ», եթե չլինեն դրանք կյանքի կոչելու կամքն ու գիտակցությունը կամ մշակույթը: Կարելի է քաջատեղյակ լինել օրենքներին, լինել իրավապաշտպան առաքելության ձեռական սուբյեկտ, սակայն չլինել այդ առաքելության իրական, գիտակից դերակատար: Եթե, օրինակ, հարցին մոտենանք ժողովրդավարության¹⁸, իրավական եւ սոցիալական պետության կերտման հիմնախնդրի տեսանկյունից, ապա պետք է նշել, որ չի կարելի ստեղծել իրապես ժողովրդավարական հասարակություն կամ սոցիալական պետություն առանց ժողովրդավարական մշակույթի կրողների ստեղծման: Կարելի է ստեղծել ժողովրդավարական համակարգին բնորոշ կառույցներ, քաղաքացիական հասարակության ինստիտուտներ, ապահովել վերջիններիս հետ կապված մի շարք ձեռական պահանջներ եւ, միեւնույն ժամանակ, ստեղծված կառույցները ծառայեցնել մեղ անձնական, կուսակցական շահերի¹⁹ իրականացմանը, հակապետական կամ ապագային գործունեության ծավալմանը: Այսինքն՝ կարելի է ունենալ ձեռն առանց իրեն ներդաշնակ բովանդակության, կարելի է որդեգրել զարգացման ժողովրդավարական ուղին, սակայն չունենալ այդ ուղով անցնելու վճռակառնություն, կարելի է լինել հայրենասեր, բայց անգործության մատնվել հայրենիքի, ազգի զարգացման գործում, կարելի է լինել համապատասխան արժեքների տարածող, բայց չլինել այդ արժեքների կրող. այլ կերպ՝ կարելի է թվալ, բայց ոչ լինել: Յամպատասխան գաղափարախոսության, օրենքների կամ մշակութային արժեքների ոչ թե «թղթային սեփականաշնորհում», այլ՝ գիտակից յուրացում ու դրանց կյանքի կոչման ինքնավերարտադրվող համակարգի կամ մշակույթի ձեռավորում: «Օրենքները փոխելուց առաջ անհրաժեշտ է փոխել մարդկանց»²⁰, - գրում է Նժդեհը՝ վկայակոչելով Օ. Կոնտին:

- ԱԶՍՏՈՒԹՅԱՆ հիմնահարցը Նժդեհը քննարկում է ինչպես քաղաքական իրողությունների, այնպես էլ բարոյագիտական մոտեցումների համատեքստում: Խնդրո առարկա հարցում շարունակելով հայ իրականության մեջ որոշակի ավանդույթ դարձած

հակաճակատագրապաշտական մոտեցումները՝ նա չի ընդունում այն տեսակետը, որի համաձայն ազգերի, մարդկանց բախտի որոշման գործում որոշիչ դեր են խաղում բնակլիմայական պայմանները կամ արտաքին ուժերը: Արտաքին ուժերին ապավինող ժողովուրդը, համաձայն Նժդեհի, խուսափում է սեփական գործողությունների պատասխանատուն լինելուց, իր պարտություններն արդարացնում է իրենից դուրս գտնվող հանգամանքներով: Մինչդեռ ազգի ճակատագիրը իրենց պատասխանատու կամ անպատասխանատու գործունեությամբ «կերտում» են ազգի ներկայացուցիչները, այլ ոչ ինչ-որ այնկողմնային, խորհրդավոր ուժեր, որոնք *հանդիսատեսի կարգավիճակով նայում են իրենց իսկ մտահոգացմամբ ստեղծված թատերական գործի բեմականացման փորձերին*: Այսինքն՝ ազգի ճակատագրի նկատմամբ անտարբերությունը, կրավորականությունն ու ներքին պատասխանատվության գիտակցման, փոփոխությունների իրականացման կամքի բացակայությունը կերտում եւ սերունդներին են ժառանգում ազգի՝ մեր կողմից ստեղծված ճակատագիրը, որը կարող է ողբերգական լինել, եթե սերունդները նաեւ ժառանգորդն են նախորդների անտարբերության, չեզոքության, երկպառակությունների, ներքին անազատության եւ այլ թերիների: Չմերժելով արտաքին ազատության կարեւորությունը՝ Նժդեհը, այնուամենայնիվ, առանց ներքին, բարոյական ազատության վերջինս համարում էր ոչ կայուն: Կարելի է արտաքին ազատություն վայելել, սակայն մնալ որպես հոգեւոր ստրուկ, քարշակել անազատության բեռը եւ տկարի հոգեբանության քայքայիչ ազդեցության թիրախ լինել, կարելի է ապրել նաեւ արտաքին անազատության մեջ, սակայն կրողը լինել ներքին ազատության ստեղծագործ ուժի: Այլ կերպ՝ *եթե ստրուկ ես, ապա անվերապահորեն չի կարելի պնդել, թե անազատ ես, կամ եթե ազատ ես, ապա աներկբա չի կարելի ասել, թե ստրուկ չես*: «Ընթերցող, - գրում է Նժդեհը, - ես տեսա հոգով ազատը ստրկության մեջ, եւ սիրեցի մարդը: Ես տեսա ստրուկին ազատության մեջ եւ գարշեցի մարդուց»²¹: «Պետք է ազատվել եւ ոչ թե միայն ազատագրվել»²², - մեկ այլ առիթով ավելացնում է Նժդեհը: Այսինքն՝ կարելի է արտաքին ազատություն ձեռք բերել, սակայն վերջինս ինքնին չի կարող վկայել ներքին ազատության մասին: Հիրավի, եթե հարցը դիտարկենք թեկուզ մերօրյա հայ իրակա-

նության համատեքստում, ապա կարող ենք ասել, որ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալուց հետո, Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր, երբ ազատագրվեցինք արտաքին տիրապետության կրավորական թիրախի կարգավիճակից եւ արտահայտեցինք ինքնիշխանությամբ հանդես գալու կամք, այնուամենայնիվ, չազատվեցինք այն բարդություններից, որոնք ծեւավորվել էին կամ էլ զարգացել նաեւ ԽՍՀՄ-ի գոյության օրոք: «Ճիշդ է միայն մի բան, - Նժդեհի տեսակետին միանգամայն համահունչ գրում է Հ. Ասատրյանը, - *այն, որ քաղաքականօրէն մենք բացարձակապաշտ ենք, միայն նրա համար, որ գործելու, մարտնչելու տրամադրութիւն չունենք*»²³: Այո՛, արտաքննապես ազատագրվեցինք, սակայն ներքնապես դեռ չենք կարողանում ազատվել ստրուկի եւ սարսափի հոգեբանությունից, չենք կարողանում ազատվել մեր անկարողության եւ դիմացինի ամենակարողության թելաթափիչ գիտակցությունից, չենք կարողանում ազատվել մեր զարգացումը, առաջընթացը եւ հավաքական անվտանգությունը ընդմիջտ արեւմտակենտրոն կամ ռուսակենտրոն փրկարար կողմնորոշումներով պայմանավորելու հոգեբանությունից: «Քաղաքականությունն ընդհանրապես, - գրում է Նժդեհը, - սարսափում է մենակությունից, իսկ կողմնորոշումների քաղաքականությունն այլ բան չէ, եթե ոչ մենակության սարսափը»²⁴:

ՎՃՈՒԿԱՆ ՄԵՆԱԿ – Նժդեհը համոզված էր, որ մեր պատմության ընթացքում մենք բազմիցս ենք հասել հաջողության, երբ լինելով հավաքականորեն մենակ՝ հանդես ենք եկել վճռական մենակի հոգեբանությամբ: Անդրադառնալով Կարսի անկման պատճառներին՝ նա նշում է, որ մենք ունեինք բնական եւ արհեստական դիրքերի գերազանցություն, թվական առավելություն, ավելի լավ պարենավորում, սակայն պարտվեցինք, քանզի «*չունեինք վճռական մենակի հոգեբանություն, ինքնուրույն կերպով որեւէ բան անելու հավատ*»²⁵: Նժդեհյան վճռական մենակն իրականության հրամայականների կրավորական թիրախը չէ, որը գարշելով տիրող անարդարությունից, բարոյագուրկ մթնոլորտից՝ փորձում է սեփական սփոփանքը գտնել իրականությունից փախուստով պայմանավորված ինքնակատարելագործման մեջ: Նա նաեւ հասարակական կամ միջազգային «ճգնափոր» չէ, որ իրականությանն ընդդիմանում է բացառապես իր բարոյական կամ առաքինի

կերպարի մեջ ներամփոփ մնալով: **ՎՃՈՒԿԱՆ ՄԵՆԱԿը ոչ թե կողմնորոշումների դաշտում է որոնում ինքնորոշման իր իրավունքը, այլ ինքնորոշվածության դիրքերից է սահմանում հնարավոր կողմնորոշումների իր համար ցանկալի տարբերակը: Նա իր «ոչ»-երի կամ «այո»-ների հեղինակն է եւ ոչ թե դիմագինի պարտադրած մտահղացումների կրավորական «համահեղինակը»:**

- **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ** փոխհարաբերության հարցում Նժդեհը հանդես է գալիս Մաքիավելիի հայացքների եւ մաքիավելիզմի քննադատության դիրքերից: Եթե Մաքիավելիի ուսմունքի շրջանակներում «*Նպատակն արդարացնում է միջոցները*» կարգախոսը ենթադրում էր միջոցների կիրառման խտրականություն՝ կախված նպատակի բնույթից, իսկ մաքիավելիզմի եւ դրա քաղաքական դրսևորումների շրջանակներում (մի՞թե հայաստանյան քաղաքական իրականությունը վտանգված չէ մաքիավելիզմի «հաղթարշավի» ազդեցության ոլորտում հայտնվելուց) քաղաքական իրատեսության դիրքերից թույլատրելի էր համարվում միջոցների անխտրողական կիրառումը՝ անկախ նպատակի բնույթից, ապա Նժդեհի մոտ այս կարգախոսը զուրկ է գործառնական ակտիվության դաշտից: «Եւ, - գրում է Նժդեհը, - մերժում եմ այն բարոյագուրկ հասկացողությունը, թե հայրենիքի շահը սրբագործում է ամեն միջոց: Ստորությունը չի դադարում ստորություն լինելուց եւ՛ այն դեպքում, երբ այն կատարվում է անգամ հայրենիքի համար: ...Բարոյական տկարության ծնունդ է ամեն կարգի ստորություն: ...Ստորությամբ չեն պաշտպանում հայրենիքը»²⁶ (ընդգ. իմն է - Ա. Ս.): Առանձնահատուկ կարեւորություն տալով մարդկանց բարոյական կատարելագործման, մարդկայնացման հիմնախնդրին՝ Նժդեհը կարծում էր, որ *հայրենասիրական առաքելությունը, ազգանվեր գործունեությունը ենթադրում է մարդկային առաքինությունների, բարոյական բարձր որակների առկայություն, սակայն հայրենիքի կամ ազգի համար դրական նշանակություն ունեցած գործողությունն անհրաժեշտաբար չի վկայում բարոյական կամ առաքինի լինելու մասին*: Նժդեհի համար կարեւոր էր ոչ միայն ազգի զարգացումը, պետության հզորացումը, այլեւ մարդկանց բարոյական նկարագրի պահպանումը: «Միջոցների անխտրականությամբ շահած ամեն մի հաջողություն, - մեկ այլ տեղ գրում է

Նժդեհը, - պղծում է, ապականում մարդկային բարոյական աշխարհը: Մարդկայնության առաջին թշնամին է անխտիրը»²⁷ (ընդգ. իմն է - Ա. Ս.): Նժդեհը գտնում էր, որ իրական հայրենասիրությունն ու ազգանվեր ծառայությունը չեն կարող կյանքի կոչվել բարոյական թերիների հիմքի վրա, մարդկանց բարոյական նկարագրի հաշվին: Քաղաքականության եւ բարոյականության միջեւ սկզբունքորեն կամ տեսականորեն չկան հակասություններ, իսկ դրսեւորվող հակասությունները հետեւանք են մարդկային անկատարության ու եսապաշտական հակումների: Նժդեհը հանդես է գալիս քաղաքականության եւ բարոյականության «հաշտեցման» իդեալի դիրքերից, որի իրականացման հեռանկարը պետք է լինի «հավերժ» արդիական: Պետք է նաեւ հավելել, որ խնդրո առարկա հարցի լուծումը Նժդեհը չէր խորշի բանաձեւել Ի. Կանտի հետեւյալ արտահայտությամբ. «Քաղաքականությունն ասում է՝ «եղեր խորամանկամիտ, ինչպես օձերը», բարոյականությունը հավելում է (որպես սահմանափակող պայման)՝ «եւ մարուր, ինչպես աղավհները»»²⁸ (ընդգ. իմն է - Ա. Ս.):

- ՊԱՍԵՐԱԶՍ – Նժդեհի կարծիքով, մարդկության պատմությունը ռազմական բախումների, ազգամիջյան հակամարտությունների, պատերազմների պատմություն է: Եվ քանի դեռ չեն փոխվել մարդու բնությունը եւ մարդկային փոխհարաբերությունների բնույթը՝ պատերազմը մնալու է հակասությունների լուծման միջոցներից մեկը: Իսկ մտածել, որ կարելի է խուսափել պատերազմներից՝ ատելով եւ քննադատելով պատերազմը՝ նշանակում է սխալ պատկերացում ունենալ դրա մասին: Իհարկե, հայ ժողովուրդը իր էությանը ռազմամով, պատերազմասեր չէ եւ ի բնե ունի արարելու, կառուցելու, ստեղծելու հատկություն: Սակայն որպեսզի կարողանա իր էությունը դրսեւորել, հայը պետք է միշտ պատրաստ լինի պատերազմելու՝ հանուն իր ինքնապաշտպանության եւ մարդասիրական առաքելության իրականացման, քանզի «ժողովուրդները վերջ ի վերջո տեր են մնում ոչ թե նրան՝ ինչ որ նրանց տրվում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան, ինչի որ արժանի են, ինչ որ սեփական ուժերով կարողանում են ապահովել»:

Համաձայն Նժդեհի՝ պետությունների ղեկավարներն առաջնորդվում են իրենց ազգային, պետական շահերով եւ տիրող անարդարությունների դեմ պայքարում են այն դեպքում, երբ պայ-

քարը բխում է պետական շահից, այլ ոչ թե աշխարհը բարեփոխելու անհրաժեշտությունից: Հայ ժողովուրդը պիտի հասկանա այս ամենը, այլ ոչ թե անիծի աշխարհը: Նա պետք է հասկանա, որպեսզի կարողանա իր մեջ գտնել սեփական ճակատագիրը վարելու ուժը եւ իր փրկությունը չպայմանավորի այլ պետությունների մարդասիրական մղումների եւ արդար վերաբերմունքի գործոնով: Սա պետք է հասկանանք մենք, քանզի «մեր սեփական տրամադրությունները դրել էինք եւրոպացու հոգու մեջ եւ ամենախոր կերպով հաւատացել, թէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները նոյն զգացումներն ունին մեր հանդէպ, թէ բոլոր պատերազմները մղում են յանուն մեր փրկութեան»: Այո՛, պետությունները կնքում են պայմանագրեր, ստորագրում են միջազգային իրավունքով սահմանված բազմաթիվ փաստաթղթեր, սակայն հիմնականում ոչ թե խաղաղության հաստատման, աշխարհի բարեփոխման, այլեւ սեփական պետության անվտանգությունն ու կենսական շահերը պահպանելու նպատակադրումով: Միջպետական պայմանագրերը ապրում են այնքան ժամանակ, որքան ապրում են նրանց ծնունդ տվող պայմանները: Հանուն խաղաղության չեն կնքում պայմանագրերը, այլ հանուն պետության օրվա կենսական շահերի: Պետությունները հաշվի են առնում միջազգային իրավունքը եւ հարգում իրենց ստորագրած պայմանագրերը, քանի դեռ շահում են գոյություն ունեցող դրությունից. սակայն հենց որ մի ուրիշի թղթ բարեկամությունը իրենց ավելի շահավետ թվաց՝ նրանք թքում են պայմանագրերի վրա, լքում իրենց նախկին զինակիցներին եւ սպառնում աշխարհի խաղաղությանը: «Այս է իրերի առարկայական դրությունը, - գրում է Նժդեհը, - այս է իրական աշխարհը եւ ոչ այն, որի սխալ եւ խաբուսիկ պատկերացումով օրորվել եւ օրորվում է մեր զգացմունքային ազգը»²⁹: Սա պետք է հասկանանք, գիտակցենք, որպեսզի մեր փրկությունը «չաղերսենք» դրսից, արտաքին ուժերի բարյացակամությունից, որպեսզի «միամտօրէն չպահանջենք, որ աշխարհը լինի այն, ինչպէս որ մենք ենք ուզում, այլ՝ ազգովին մենք դառնանք այն, ինչպիսին լինել դա՛ է թելադրում»³⁰: Իսկ իրերի առարկայական դրությունը պահանջում է հոգեփոխում, տկարի, նվաստի, քաղաքական մուրացկանի ու լալկանի հոգեբանության հաղթահարում, եւ, որպես արդյունք, ուժեղի նկարագրի կերտում, վճռական

մենակի որակների զարգացում: «Մուրացկանություն եւ լալկանություն, - գրում է Նժդեհը, - մի ամբողջ ժամանակի հոգեբանություն, քաղաքական մեր միակ զենքը: Լալկանությունը, սակայն, ապացույց է հոգեւոր տհասության կամ անարիության: Մուրացկանությունը զգվելի է ընդհանրապես: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդված, այլեւ հաճախ զգվանքից: Ավելի սարսափելի է քաղաքական մուրացկանությունը, քանի որ քաղաքականության մեջ կարեկցանք չկա, իսկ զգվանք՝ շատ քիչ»³¹: Այսօրինակ տեսակետ է արտահայտել նաեւ Դ. Ասատրյանը՝ գրելով. «Չայր վարժվել է իր իրավունքը սպասել օտարների արդարամտությունից: Դրա համար էլ նա բարեկամներ չունի, որովհետեւ կանխավ մատնում է մուրալու իր տկարությունը»³²:

Ուժեղ լինել, ըստ Նժդեհի, չի նշանակում նվաճողական քաղաքականությամբ առաջնորդվել, ծավալապաշտական նկրտումներին գործնական արտահայտություն տալ, կարողանալ բռնություններ գործադրել եւ անպատիժ մնալ, «փայլել» դաժանություններով եւ հպարտանալ ստացված արդյունքից: «Ուժեղը նա չէ՛, - գրում է Նժդեհը «11-րդ Կարմիր բանակի գորահրամանատարին՝ Բազվում» խորագրով նամակում, - որ ուտող բերաններ, երկոտանի մեքենաներ, թալանչիներ, կամ թնդանոթներ ու արժիժ շատ ունի, բայց սիրտ եւ հոգի չունի եւ սրբություններ չի ծանաչում: ...Ուժեղը նա չէ՛, որ հանում իր աննշան հաջողությունների, իր այլուռոսյան³³ հաղթությունների, դաշնակցում է անգամ սատանայի հետ, որը լինելով Նապոլեոնի խեղանկարը, Մաքիավելլին է իսկական: ...Ուժեղը նա չէ՛, որի «հաղթությունները» ոչ ռազմական են, ոչ էլ բարոյական»³⁴:

ժողովուրդներն իրենց ինքնապաշտպանության գործի կազմակերպման ընթացքում բազմիցս ստիպված են լինում պատերազմելու, իսկ վերջիններս քանիցս ուղեկցվել եւ ուղեկցվում են բազմաթիվ գազանություններով ու դաժանություններով: Ինքնապաշտպանությամբ թելադրված պատերազմների ժամանակ էլ Նժդեհը չի ընդունում անմարդկային դաժանությունների արդարացման ջանքերը, մի բան, որով գրեթե միշտ «փայլել» են հայ ժողովրդի թշնամիները: «Ըստ Շոպենհաուերի, - գրում է Նժդեհը, - մարդս գավ է պատճառում ուրիշներին, իր սեփական գավը մեղմագնելու համար: Այդ դեպքում՝ վայրագությունը մի տեսակ

դարման է իր սեփական գավի դեմ: Թուրքական գազանությունն էլ պետք է բազատրել անհատ, թե հավաքական թուրքի հոգեկան տկարությամբ: Նաեւ՝ այդ տկարության նվաստագուցիչ գիտակցությամբ»³⁵ (ընդգ. իմն է - Ա. Ս.):

Մարդասիրական մոտեցում պետք է ցուցաբերել ոչ միայն խաղաղության պայմաններում, այլեւ պատերազմների ժամանակ: Ավելի՛ն, պատերազմների ժամանակ էլ ռազմարվեստի ներկայացուցիչները պետք է հանդես գան ասպետական կեցվածքով, հարգեն քաջության օրենքը, իրենց մեջ սպանեն իր կաշվի համար դողացող «անասունը»՝ վախը: «Մի՛, մի՛ սպանիր թշնամուդ անգամ, - գրում է Նժդեհը, - եթե կարելիութիւն կայ սպանելու նրա մարտունակութիւնը - կռիւը շարունակելու նրա ցանկութիւնը: Այլ կերպ վարուող մարդասպան է հասարակ, եւ ոչ մարտիկ: ...Խնայիր տկարներին, եթե թշնամիդ իսկ լինի: Յարգիր քաջութեան օրէնքը - մնա՛ մարդ, մարդ մնա՛ բոլոր դէպքերում: Եւ, զարկ միայն նրանց, որոնք կարող են պատասխանել զարկիդ»³⁶ (ընդգ. իմն է - Ա. Ս.):

Մարդասիրական ոգին չպետք է լքի մարդուն անգամ պատերազմի դաշտում, որտեղ թեպետ անխուսափելի են զոհերն ու վիրավորները, սակայն հնարավոր են նաեւ մարդկայնորեն վեհի, ասպետականի եւ մարդասիրականի դրսևորումները: «...Չկա աստվածորեն ավելի վսեմ եւ գեղեցիկ շարժումեւ, - գրում է Նժդեհը, - քան մեր սրից ու զնդակից զարնված հակառակորդի վերքերը կապելը: Ինչպես չկա ավելի բարբարոս արարք, քան վիրավորներին նոր վերքեր հասցնելը»³⁷:

ԵՐՉԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ - Չայ մտածողն անհատական երջանկության ճշմարիտ տարբերակը հասկանում էր ընդհանուր երջանկության կայացման գործում անհատականի զոհաբերման պատրաստականության ձեւով: Անհատական երջանկությունն իր արդարացումը կարող է գտնել ընդհանուրի երջանկության համատեքստում: Անհատը, հաղթահարելով սեփական ես-ը, գերազանցելով ինքն իրեն եւ ինքնաճանաչողության ու ներապրման ճանապարհով ապահովելով ազգի, ցեղի, մարդկության տառապանքի հետ իր իսկ ծուլումը, ի վերջո վերադառնում է իր ինքնահզորացմանը, ինքնահսկայացմանը, ինքնագիտակցմանը: Այս ես-ը ոչ թե անձնապաշտական, այլ մնայուն արժեքների

ստեղծման ու պահպանման, իրականության բարեփոխման նպատակով կրկին ու կրկին իրեն հաղթահարող ես-ն է:

Ընդհանուրի երջանկությանը սեփական ես-ի նվիրաբերումը Նժդեհը դիտում էր որպես ներդրում անհատների երջանկության կայացման հեռանկարային գործին: Այսինքն՝ ընդհանուրի երջանկությանը սեփական ես-ի նվիրումը ինքնանպատակ չէ, այն նպատակ ունի ընդհանուրի երջանկության մեջ տեսնել իրական մարդկանց, անհատների երջանկությունը, այլ ոչ սոսկ պարզ վերացարկում: *«Ընդհանուր բարիքը, - գրում է Նժդեհը, - դառնում է չարիք, երբ չի արտագոյում մասնավոր բարիքը»*³⁸ (ընդգ. իմն է - Ա. Ս.):

Ի տարբերություն էպիկուրի եւ ի ընդհանրություն Սենեկայի ու Կանտի՝ Նժդեհը գտնում էր, որ *մարդ պետք է լինի առաքինի, սեփական կրքերն ու կարիքները առաջնորդող սկիզբ չդարձնի ոչ թե անձնական երջանկության հասնելու շարժառիթներից դրդված, երջանկությամբ «վարձատրված» լինելու նպատակադրումով, այլ այն պատճառով, որ դա՝ է թելադրում պարտքը, բարոյական օրենքն առ ի մարդկություն, առ ի ազգ, եւ առ ի անձնական կատարելություն:* Այսինքն՝ *լինել առաքինի ոչ թե հանուն երջանկության, այլ հանուն «մարդ» կոչման, հանուն երջանկության իրավունքի «նվաճման»:*

Եթե «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր հերոսը՝ Դավիթը, մանուկ հասակում ոսկի վերցնելու ցանկության պատճառով հրեշտակի անմիջական միջամտությամբ այրում է իր մատը, հետո՝ լեզուն, ապա սա, համաձայն Նժդեհի մեկնաբանության, խորհրդանիշն է հայի անընչասիրության, հականյութապաշտական կողմնորոշման կամ իդեալի՝ որպես բարոյական, առաքինի կեցվածքի պայմանի: Սա բնավ էլ չի նշանակում, որ հայ իրականության մեջ չկան նյութապաշտներ, սա նշանակում է, որ հայ իրականության մեջ չպետք է լինեն այդպիսիք, մարդիկ, որոնց հիմնական նպատակը եւ ակտիվության նախապայմանը բացառապես նյութական հարստության, անձնական կարիքների եւ կենսաբանական պահանջների բավարարման կենդանական մոլուցքն է: *«Կընկենն, - կարծես մեր օրերի համար գրում է Նժդեհը, - կպարտվեն, կմեռնեն ժողովուրդները, երբ կթունավորվեն անասնացող նյութապաշտությամբ, երբ նրանց մեծամասնությունը իր Աստվածը կդարձնի անձնական կաշին, երբ կժխտի այլասիրական ամեն տեսակի*

*պարտականություն եւ վախով ու անվստահությամբ կնայի իր ապագային»*³⁹: Եթե հայկական էպոսը բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով խորհրդանշում է հայի հականյութապաշտական իդեալը, ցույց է տալիս, թե ինչպիսին չպետք է լինի հայը, ապա Նժդեհի մոտ այս խորհրդանիշը, կարելի է ասել, նաեւ մարդուն ուղղված պատգամ է՝ ապրելու հականյութապաշտական իդեալներով, ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի մարդը կամ *«ի՞նչ աստղերով պետք է նա ապրի»:*

ԱՌԱՋՆՈՐԴ, ԹԵ՝ «ԱՌԱՋՆՈՐԴՈՂՆԵՐ» - Նժդեհն իր ստեղծագործական ժառանգության մեջ մշակել է կատարյալ առաջնորդի մասին ուսմունք: Վերջինիս շրջանակներում Նժդեհն ինքնատիպ բանաձեւումներով եւ լուծումներով ներկայացնում է առաջնորդի բնորոշումը, ներազգային կամ ներպետական կյանքում առաջնորդի կարելի դերակատարությունը⁴⁰:

*«Ամենաբարձր իրավունքը, - գրում է Նժդեհը, - որ կարող է ունենալ մի քաղաքացի - դա իր ծնող ժողովրդին առաջնորդելն է: Քչերին է տրվում այդ իրավունքը, եւ շատ քչերն են արդարացնում դա»*⁴¹: Առաջնորդը, համաձայն Նժդեհի, այն մարդն է, որն իր նմանությամբ ու կերպարով դիմակերտում է իր ժողովրդին: Ուստի, ամենաբարձր իրավունքը՝ սեփական ժողովրդին առաջնորդելը, պահանջում է այնպիսի որակների եւ բարոյականի առկայություն, որոնք հնարավորություն կտան նպաստել ժողովրդի հոգեվերանորոգմանը, նրա ինքնապաշտպանության ապահովմանը, ազգային ոգու ինքնադրսեւորմանն ու պատմական «թռիչքին»: Իսկ այս ամենը պահանջում է, որ առաջնորդը լինի կրողն ու ուսուցիչը «ազգային բարոյականի», լինի ազգային ոգու արտահայտիչը: Չարկ է նշել, որ Նժդեհը չափազանց խստապահանջ է առաջնորդի հարցում: Շատերն են դրսեւորում առաջնորդության հատկություններ եւ դրա համար պահանջվող որոշ առաքինություններ, սակայն ճշմարիտ առաջնորդի կերպարին հավակնելու համար դրանք չի կարելի բավարար համարել: Գձմարիտ առաջնորդ չի կարող լինել եսապաշտը, ընչասերը, հոգով փչացածը: Առաջնորդ լինելու համար բավական չէ նաեւ արտակարգ իմացականությունը: *«Քաջությունն էլ, - գրում է Նժդեհը, - որ բարձր հատկություն է զինվորի եւ քաղաքացու համար, բավական չէ մեկին*

Ճշմարիտ առաջնորդ դարձնելու: Քի՞չ եսասերներ, ընչաքաղցներ կան, որ քաջ են»⁴²:

Ճակատագրական է առաջնորդների դերը ժողովուրդների, ազգերի կյանքում: Համաձայն Նժդեհի՝ եթե ժողովուրդների մեծությունը հաճախ վերջ է գտնում կատարյալ առաջնորդի մահվամբ, ապա, ավաղ, նրանց դժբախտությունը չի վերջանում ծախավեր առաջնորդի հետ: Խեղճ է այն ժողովուրդը, որի առաջնորդը ավելի փառասեր է, քան հանճարեղ, ժողովրդի համար անեծք է նաեւ առաջնորդի տգիտությունը, եսականությունը, նախանձը: *«Չի՛ եղել ավելի զարհուրելի թույն, - գրում է Նժդեհը, - քան վատ օրինակը առաջնորդի, որը միշտ էլ վարակիչ է: Ազդում է նրա ամեն մի խոսքը, շարժումները, ակնարկը: ...Եսակա՞ն է (իմա՛ առաջնորդը - Ա. Ս.)՝ անասնանում են նրա հետ առնչվողները: Ծո՞ւյլ է մտավորապես՝ հոգեւոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները: Անհայրենապա՞շտ է՝ հակահայրենիք հրեշներ են վխտում նրա շուրջը: Իսկ երբ անարի է՝ զգվելիորեն երկչոտ են դառնում նրա իշխանությունը վայելողները»⁴³:*

Այն, որ ժողովուրդներն իրենց գոյության ընթացքում ունեցել են «առաջնորդներ», բնավ չի վկայում այն մասին, որ վերջիններս ճշմարիտ առաջնորդի կերպարի մարմնացումներ են: Նրանք, կարելի է ասել, առաջնորդ են միայն անվանական տեսակետից, միայն իրենց վերապահած կարգավիճակի տեսանկյունից, բայց ոչ՝ ըստ էության: *«Շատերը սպաներից, - գրում է Նժդեհը, - այլ բան չեն, քան մի զույգ ուսադիր, մի աստիճան, մի տիտղոս: ...Մեկը կարող է աստիճանով զորավար լինել, բայց ոչ՝ առաջնորդ: Մի ուրիշը, կրելով պարզ հարյուրապետի ուսադիրներ, կարող է կատարյալ առաջնորդ լինել»⁴⁴:* Այսպիսով, հարց է առաջանում. ո՞վ կարող է հավակնել իրական կամ ճշմարիտ առաջնորդի կոչման, ի՞նչ որակների կրող պետք է լինի նա: *«Ուժեղ իմացականություն, մեծ սիրտ եւ բոլորանվեր ծառայություն - ահա՛ նա (իմա՛ կատարյալ առաջնորդը - Ա. Ս.): Նրա մեջ եթե դեռ չի մեռել, ապա հոգեւարում է ես-ը»⁴⁵,* - գրում է Նժդեհը: Վերջինս, համաձայն Նժդեհի, պարզատես է, վշտակիր, հերոս, որը հայտնվելով այս կամ այն միջավայրում՝ հոգեբանորեն փոխում է դա: *«Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, աղամանդ ճակատ»,* - գրում է Նժդեհը, - *ահա՛ կատարյալ առաջնորդը»⁴⁶:* Կատարյալ առաջնորդը ազնվաց-

նում է հոգիները, թեւածում, գոտեպնդում, նրա շնորհիվ *«անկարելի համարվածը դառնում է դժվարին, դժվարինը՝ կարելի: Շքեղ երազները դառնում են նպատակ եւ երջանիկ իրականություն: Նրան հաջողվում է փոխել իր ժողովրդի հոգեբանությունը, ճակատագիրը, պատմությունը: Սահման չի դրված նրա սիրելու եւ զոհաբերելու կարողության»⁴⁷:* Նժդեհի համար առաջնորդը միաժամանակ նաեւ հերոս է, որը հավիտենաբժեք բաների առջեւ ոչինչ է համարում իր կյանքը, որի համար կյանքն արդարացում ունի, երբ դա ապրում է ոչ թե իբրեւ նպատակ, այլ իբրեւ մի սրբազան բանի ծառայեցնելու կամ զոհելու միջոց:

- ՅԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅՈՒՆ – Նժդեհի ուսմունքը պատմության գիրկը «նետողները» հաճախ իրենց փաստարկների խարխուլ զինանոցը լրացնում են ցեղակրոն ուսմունքի եւ Նժդեհի դավանանքի ապաքրիստոնեական եւ «վայրենի» հեթանոսական բնույթի վերաբերյալ տեսակետներով: Տեսակետներ, որոնք ոչ միայն չեն համապատասխանում իրականությանը, այլեւ չգիտակցված «տուրք» են դավանանքի ազատությունը շեփոհարող տարաբնույթ եւ տարատեսակ աղանդավորական շարժումների ու կրոնական հարանվանությունների ապազգային եւ մարդատյաց գործունեության ակտիվացմանը: Քրիստոնեության եւ Քրիստոսի մասին Նժդեհի մտքերը բնավ էլ վկայություն չեն Նժդեհի քրիստոնեամեծ դիրքորոշումների: Իսկ հայոց հեթանոսական անցյալի, կրոնի լուսավոր էջերի նժդեհյան փառաբանումները չէին նշանակում դարձ դեպի անցյալ, Քրիստոսի եւ քրիստոնեության անտեսում: *«...Նժդեհը, - արդարացիորեն նշում է Մ. Լալայանը, - չի հակադրում Վահագնին եւ Քրիստոսին, կամ՝ հայկականն ու քրիստոնեականը, այլ՝ դրանք խորքում տեսնում է համադրելի»⁴⁸:* Նժդեհն ընդգծված դրական վերաբերմունք է ունեցել քրիստոնեության հանդեպ, որ Նժդեհը ոչ թե շեմքից մերժում էր քրիստոնեությունը, այլ փորձում էր վերհանել դրա իրական բովանդակությունը, ոգին, վերաբժեքավորման եւ վերագնահատման ճանապարհով հասնել դրա ճշմարիտ հասկացմանը՝ հիմք ընդունելով Քրիստոսի կենսագործունեության բնորոշ գծերը, նրա արտահայտած բարոյականը: Նժդեհը քննադատել է մեռյալ ծիսակատարություններով զբաղվող եկեղեցին, սակայն չի հրաժարվում եկեղեցու անհրաժեշտությունից: Նա,

հիարկե, ընդունում է այն տեսակետը, որ քրիստոնեության հետ կապված որոշ երեւոյթներ բացասական ներգործություն են ունեցել հայ իրականության մեջ, նպաստել են հայ ժողովրդի պայքարունակության թուլացմանը, պայմանավորել են ինքնապաշտպանության գործում ունեցած էական բացթողումները, խոչընդոտել են ինքնուրույնությամբ հանդես գալու կամքի արմատավորմանն ու արտահայտմանը: Ասվածը բացառություն չէ նաեւ քրիստոնեական սիրո դեպքում, որի սխալ հասկացման եւ դրա բացասական հետեւանքների դեմ պայքարից անմասն չպետք է մնա հայ եկեղեցին: «Ղա (իմա՝ եկեղեցին - Ա. Ս.), - գրում է Նժդեհը, - վերագնահատումի պետք է ենթարկի քրիստոնեական սիրո իր սխալ ըմբռնումը, որպեսզի դադարի թուլությունը առաքինություն համարել եւ սպանել մեր ժողովուրդի կամքը: Սխալ է ըմբռնել դա քրիստոնեական սիրո խորհուրդը եւ դրա հետեւանքով ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովուրդի անօրինակ ողբերգության: Սխալվել, չարաչար սխալվել է մեր եկեղեցին՝ «տնանկների» եւ «սնանկների» բարոյականություն քարոզելով: Սրանից հետո սիրո եւ զոհաբերության ընդունակ արի ժողովուրդի մասին պիտի խոսի, եթե ուզում է, որ քրիստոնեության հետքերը մնան Փոքր Ասիայում եւ Հայաստանում»⁴⁹:

Հարկ է փաստել, որ ներկայացված նյութը բնավ էլ չի կարող սպառել Նժդեհի ստեղծագործական ժառանգության մեջ արտացոլված արդիական գաղափարների ու մոտեցումների ողջ հարստությունը: Սույն հոդվածում հեղինակը նման խնդիր չի էլ դրել՝ գիտակցելով դրա անհնարինությունը: Խնդրո առարկա հիմնահարցին առավել ամբողջական եւ սպառիչ պատասխանելը պահանջում է ինչպես Նժդեհի ուսմունքի բազմակողմանի վերլուծություն, այնպես էլ մերօրյա հայ իրականության թերիների հավուր պատշաճի իմացություն: Սակայն ներկա շարադրանքում հիմնահարցին այս կամ այն չափով տրված պատասխանը Նժդեհի ուսմունքի մարդասիրական եւ հայրենասիրական բովանդակության, դրանում արտահայտություն ստացած գաղափարների ու մոտեցումների այժմեականության հիմնավոր ուրվագծման փորձ է:

19-20-րդ դարերի ֆրանսիացի մտածող Ա. Մորուան ժամանակին նշել է, որ *կյանքի նպատակը ոչ թե անմահ փառք ձեռք բերելու, այլ դրա յուրաքանչյուր օրը փոքրիկ հավերժության*

վերածելու մեջ է: Այս խոսքերը, համոզված ենք, համահունչ են Նժդեհի անցած հասարակական-քաղաքական եւ ստեղծագործական ճանապարհին, քանզի քաղաքական եւ այլատիպ վայրիվերումներ տեսած հարազատ ժողովրդի համար նա *գործեց որպես հավերժության «մարտիկ», իսկ փառքը ոչ թե Նժդեհի գործունեության տեսադաշտում էր, այլ այդ գործունեության ստվերը, որն անբաժան ուղեկցի պես հետեւեց նրան:*

¹ Սույն հոդվածը տարիներ առաջ ՀՀԿ կողմից հայտարարված «Գարեգին Նժդեհի ուսմունքը եւ դրա արդիականությունը» խորագրով մրցույթին ներկայացված զեկույցի վերամշակված տարբերակն է, ուր տեղ են գտել տողերիս հեղինակի «Գարեգին Նժդեհի փիլիսոփայական հայացքները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մի շարք գաղափարներ, առանցքային դրույթներ:

² Գ. Մանուալեան, Նժդեհի փիլիսոփայությունը, «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1963, սեպտ. 13:

³ Цит. по Таранов П.С. Философский биографический словарь иллюстрированный мыслями, М., 2004, с. 357.

⁴ Յու. Հովականյան, Գարեգին Նժդեհի կենսափիլիսոփայությունը, «Նժդեհյան իմաստաբանություն»/Հոդվածների ժողովածու: Նժդեհի տեսական ժառանգության իմաստավորման փորձ, Եր., 2006, էջ 82:

⁵ Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 260:

⁶ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 24:

⁷ Նույն տեղում, էջ 254:

⁸ Գ. Նժդեհ, Ամերիկահայությունը. ցեղը եւ իր տականքը, «Ազգայնական միտք», ք. 7, Եր., 2000, էջ 54:

⁹ Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 39:

¹⁰ Նույն տեղում, էջ 39:

¹¹ Ֆ. Նիցշե, Բարուց եւ չարից անդին, Եր., 1992, էջ 69:

¹² Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 246:

¹³ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 389:

¹⁴ Նույն տեղում, էջ 268:

¹⁵ Բարոյականի չափանիշների նժդեհյան ըմբռնման բնորոշ գծերի վերհանման տեսանկյունից առանձնահատուկ կարեւորություն է ներկայացնում 1930թ. «Նոր Արաքս»-ի համարներում տպագրված «Բաց նամակ Մայրը Արլենին» խորագրով հոդվածաշարը, որը, կարելի է ասել, հրապարակախոսական կաղապարների ներքո «թաքնված» բարոյախոսություն էր,

որի նպատակն էր հարց ու պատասխանի, երկխոսության ձևով զգուշացնել բարոյական վարքի մասին մտղեհյան պատկերացումները բացառապես ազգօգուտ կամ հանրօգուտ գործողությունների և դրանց արդյունքների շրջանակներում սահմանափակելու վտանգի մասին: Պետք է նշել, որ այդ հողվածում տարբեր թեմաներ են արծարծվում, և Նժդեի բազմիցս համաձայնում է Մայքլ Արլենի (*Իսկական ազգանունը և անունը՝ Գոյունժյան Տիգրան (1895-1956)*) հայ իրականության բնութագրական գծերի, հայ ժողովրդի պատմական անցյալի և ներկայի թերիների վերաբերյալ տեսակետների հետ: Սակայն որոշ հարցերում դրսևորած համաձայնության հետ մեկտեղ՝ Նժդեի չի դադարում քննադատության առանցքում պահել վերջինիս: Նժդեին անբարոյական չէր համարում հայոց թերիների հարցի արծարծումը, անբարոյական չէր համարում դրանց բնութագրական գծերի, առանձնահատկությունների վերհանման փորձերը: Ավելին, ազգային թերիների վերհանումն ու քննադատությունը նաև խիստ պատասխանատու պարտականություններ են, քանզի դրանց հաղթահարման դեպքում հնարավոր կլինի տեսնել «ճակատագրի» հետագա բարյացակամ վերաբերմունքը ազգի, պետության նկատմամբ: Այստեղից առաջանում է արտաքուստ եթե ոչ հասկանալի, ապա գոնե անհասկանալի մի իրավիճակ. եթե ազգի թերիների թվարկումը և դրանց բացահայտումը խիստ կարեւոր ու ազգօգուտ նշանակության աշխատանք է, ապա ինչո՞վ պետք է բացատրել Արլենի հասցեին ուղղված բարոյական բնույթի մեղադրանքներն ու քննադատությունը նմանատիպ աշխատանք կատարելու դեպքում: Ինչո՞ւ թեկուզ վերհանված թերությունների ձևով մեզ ներկայացված միեւնույն արդյունքը, որը կարող է հանրօգուտ նշանակություն կամ գործառույթ ունենալ, մի դեպքում քննադատվում է, իսկ մյուս դեպքում՝ ոչ, մի դեպքում դատափետվում է, մյուսում՝ ոչ: Սա բացատրվում է նրանով, որ Նժդեի համար այս կամ այն արարքի ազգօգուտ, հանրօգուտ նշանակությունը դրան բարոյական «լիցք» հաղորդելու համար չի կարող անհրաժեշտ և բավարար պայման հանդիսանալ, քանզի նրա համար կարեւոր է ոչ միայն և գուցե թե ոչ այնքան այն, թե «ի՞նչ արեցիր», այլ այն, թե «ինչո՞ւ արեցիր»: Այլ կերպ՝ ինչի՞ համար կամ ի՞նչ նպատակադրումով են դու դա իրականացնում: «Ա՛հ, - գրում է Նժդեի՝ ի պատասխան հայոց թերիների արլենյան քննադատության, - պիտի ուզեի, որ ձեզ ծնող ժողովրդի նվաստ վիճակը թելադրած լիներ ձեր հիստերիկ բացականչությունները: Դժբախտաբար, դա ոչ հայրենասիրական *de profundis* է, ոչ էլ պոռթկում՝ ի տես հայության անկյալ վիճակի» (Գ. Նժդե, Երկեր, հ. 1, էջ 332): «Չեզ համար, - մեկ այլ տեղ շարունակում է Նժդեի, - ներելի չէ, եթե չգիտեք, որ իրենց գեղի ստվերային կողմերի վրա հարձակվելու իրավունք և պարտականություն ունեն միայն նրանք, որոնք տեսնում, հասկանում և սիրում են իրենց ժողովուրդը իր բովանդակ մեծության և տկարությունների, իր բովանդակ ողբերգության մեջ» (ընդգ. իմն է - Ա. Ս.) (Նույն տեղում, էջ 335-336):

¹⁶ Գ. Նժդե, Նորահայտ մասունքներ, Եր., 2002, էջ 11:

¹⁷ Գ. Նժդե, Երկեր, հ. 1, էջ 513:

¹⁸ Չարկ է նշել, որ իր որոշ հողվածներում Նժդեի հակիրճ անդրադառնում է ժողովրդավարության հիմնախնդրին՝ մի քանի դատողություններով ներկայացնելով սեփական վերաբերմունքը վերջինիս հանդեպ: Ավելացնենք նաև, որ Նժդեին այս խնդրին հանգամանորեն չի անդրադառնում, սեփական տեսակետները մանրամասնորեն չի հիմնավորում: Ժողովրդավարության մտղեհյան գնահատականների մակարդակում գործ ունենք (*միզուցե արտաքուստ*) որոշակի հակասականության հետ: «Չայի ծամբան. Մեծ զղբումի ծամբան» հողվածում դեմոկրատիան ներկայացվում է «ազգերը խուժանացնող»-ի բնորոշումով: «Պատերազմ՝ հեղափոխություն» հողվածում Նժդեի նշում է, որ դեմոկրատիան սնամեջ հասկացություն է, այն միջավայրի և նախանձի, ինչպես նաև մարդկային բանականության և բարոյականի կողմից ժխտված անիշխանացուցիչ և ապականարար վարչածե է, որին հատուկ արատներից է զեղծարարությունը: Այսինքն՝ այստեղ նկատելի է բացասական և մերժողական վերաբերմունք դեմոկրատիայի նկատմամբ: Սակայն նշված հողվածներից վերջինում Նժդեի ցուցաբերում է նաև դրական վերաբերմունք ժողովրդավարության նկատմամբ՝ տարբերակելով *թրիկական և թվաբանական* դեմոկրատիաները, որոնց բովանդակությունը, ցավոք, Նժդեի կողմից ընթերցողին չի ներկայացվում «վերհանված» տարբերակով: «*Թրիկական դեմոկրատիան*, - գրում է Նժդեի, - *մարդկային արարածի անկատարելության պատճառով, կմնա երազ, ինչպես երազ մնաց ճշմարիտ քրիստոնեությունը: Իսկ թվաբանական դեմոկրատիայի ղեկավարները՝ թղթի վրա, տեսականորեն, ենթարկվելով հանրության կամքին գործնականում - պառակտելով և աղավաղելով ազգի ոգին - նրան ծառայեցնում են իրենց անձնական և խմբակցական շահերին*» (Գ. Նժդե, Երկեր, հ. 1, էջ 456):

¹⁹ Ցավալի իրողություն է, որ մերօրյա հայ իրականության մեջ հաճախ կուսակցական շահերը հասկացվում են ազգային-պետական շահերի համատեքստից դուրս: Այլ կերպ ասած՝ մտղեհյան «*կուսակցության հետ՝ ազգիս համար*» կարգախոսի մերօրյա մետամորֆոզն է «*կուսակցության հետ՝ կլանիս, խմբիս, ընտանիքիս*» ... *համար*» կարգախոսը:

²⁰ Գ. Նժդե, Երկեր, հ. 1, էջ 509:

²¹ Գ. Նժդե, Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 196-197:

²² Գ. Նժդե, Երկեր, հ. 1, էջ 109:

²³ Յ. Ասատրյան, Չատրնոսի, Եր., Ամարաս, 2004, էջ 21:

²⁴ Գ. Նժդե, Երկեր, հ. 1, էջ 121:

²⁵ Նույն տեղում, էջ 122:

²⁶ Նույն տեղում, էջ 286:

²⁷ Նույն տեղում, 293:

²⁸ И. Кант, Кант И. О разногласиях между моралью и политикой, «Философия от античности до современности», Электронная библиотека, ООО ДиректМедиа Паблшинг, М., с. 46-47.

ՆԺՂԵՅՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Գաղափարը երբեք չի թաղվում...

Ես Նժդեհին չեմ տեսել, բայց միշտ զգացել եմ իր ներկայությունը: Երբ Հայաստան եկա, հասկացա, որ Նժդեհները չեն մեռնում: Իսկապես, ժամանակներն են ծնում հերոսներ: Իսրայելի տառապանքից եւ սրբությունից ծնվեց Մովսես մարգարեն: Նժդեհը շատ դժվարություններ ունեցավ, չհասկացվեց, տառապեց, գաղտնի պահվեց, բայց այսօր ամբողջ ազգն է խոնարհվում նրա հիշատակի առջեւ...

Հպարտ եմ նրանով, նրա գործով, նրա հիշատակով...

Մեսրոպ արքեպիսկոպոս ԱՇՃՅԱՆ

Հայ ժողովրդի մեծերի շարքում, ինչպես ամեն ճշմարիտ առաջնորդ, իր արժանի տեղն է գրավում Գարեգին Նժդեհը (Տեր-Հարությունյան): Անգնահատելի է այդ մեծ հայորդու դերը Ղարաքիլիսայի ու Ջանգեզուրյան հերոսամարտերում, նրա քարոզչական, հայապահպան եւ հայանպաստ գործունեությունը Սփյուռքում եւ Հայրենիքում: Գարեգին Նժդեհի պատմական ժառանգությունն իր խորհրդով հայ սերնդի հայեցի դաստիարակության, Հայրենիքին նվիրվելու եւ ծառայելու շտեմարան է: Նժդեհն այն բացառիկ պատմական անհատներից է, որ բնորոշվում է որպես փայլուն ռազմագետ ու քաղաքագետ, գաղափարական, ազգային, պետական ու հասարակական գործիչ, ինչպես նաեւ՝ իբրեւ XX դ. հայ իմաստասիրական մտքի հանճարեղ ներկայացուցիչներից մեկը: Նժդեհյան գաղափարախոսության ամբողջական ներկայացումը չի կարող ամփոփվել մեկ հոդվածի շրջանակներում, ուստի փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել նժդեհյան ուսմունքի առանցքային գաղափարները, ապա եւ ցույց տալ դրանց արդիականությունը մեր օրերում.

- ²⁹ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 116:
- ³⁰ Նույն տեղում, էջ 111:
- ³¹ Նույն տեղում, էջ 120:
- ³² Հ. Ասատրեան, Վերանորոգչական շարժում (խորհրդածուրծներ), Եր., 2002, էջ 17:
- ³³ Պյուռոսն էպիրյան արքա էր (մ. թ. ա. 319-272), հին ժամանակների հայտնի զորահրամանատար, որը, նպատակ ունենալով ստեղծել հզոր տերություն, խառնվում է հռոմեացիների եւ հույների միջեւ պատերազմին: 280թ. տանելով իր առաջին հաղթանակը հռոմեական լեգեոնների նկատմամբ Հերակլեայի մոտ՝ Պյուռոսը մտահղանում է նոր արշավանք իրականացնել եւ 279թ. Աուսկուլայի մոտ ջախջախում է հռոմեացիներին: Սակայն այս երկրորդ պատերազմի արդյունքում Պյուռոսն այնքան զոհեր եւ մարդկային, նյութական ռեսուրսների կորուստ է ունենում, որ բացականչում է. «Եւս մեկ նման հաղթանակ եւ ես կործանված եմ»: Իրականում, հաջորդ ճակատամարտի ժամանակ՝ 278թ., Պյուռոսը գլխովին ջախջախվում է հռոմեացիների կողմից եւ իր զորքերի մնացորդի հետ փախչում է Էպիր: Այստեղից է առաջացել «այլուրոսյան հաղթանակ» արտահայտությունը, որն օգտագործվում է փոխաբերական իմաստով՝ նշանակելով պարտության հավասարազոր հաղթանակ, այսինքն՝ հաղթանակ, որը տրվում է ահռելի չափերի հասնող զոհերի եւ անդառնալի կորուստների գնով:
- ³⁴ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2, էջ 123-124:
- ³⁵ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 360:
- ³⁶ Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 286-287:
- ³⁷ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 106-107:
- ³⁸ Նույն տեղում, էջ 511:
- ³⁹ Նույն տեղում, էջ 319:
- ⁴⁰ Այս մասին հիմնականում տես «Ցեղի ոգու շարժը» (1932թ.), «Էջեր իմ օրագրեն» (1924թ.) աշխատություններում, «Ժողովուրդ եւ առաջնորդ» (1941թ.), «Մեռնելու կամք» (1939թ.) հոդվածներում:
- ⁴¹ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 432:
- ⁴² Նույն տեղում, էջ 422:
- ⁴³ Նույն տեղում, էջ 164:
- ⁴⁴ Գ. Նժդեհ, Հավատամք, Եր., 1991, էջ 74-75:
- ⁴⁵ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 165:
- ⁴⁶ Նույն տեղում, էջ 166:
- ⁴⁷ Նույն տեղում, էջ 165:
- ⁴⁸ Մ. Լալայան, Ցեղակրոն եւ տարոնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունեությունը, Եր., 2001թ., էջ 34:
- ⁴⁹ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 125:

• Գեղեցիկի ուսմունքի հիմնաքարը ՅԵՂԻ գաղափարն է: Այդ հիմքի վրա է կառուցվում նրա ցեղակրոնության գաղափարախոսությունը՝ հետագայում ամբողջանալով տարոնականության մեջ: Այստեղ անհրաժեշտ են գտնում մի փոքր խոսել Նժդեհի կողմից մշակված եւ ցեղակրոնության փիլիսոփայության մեջ արտահայտված՝ «ցեղակրոն» բառի իմաստի եւ նշանակության մասին: Առ այսօր, այդ կապակցությամբ տարբեր հետազոտողների կողմից, մասնավորապես՝ Մուշեղ Լալայանի [20, էջ 29], Արամ Սարգսյանի [40, էջ 28-29], տրվել են տարբեր մեկնություններ եւ բացատրություններ, որոնք հիմնականում հանգում են նրան, որ «ցեղակրոն» բառի մեջ «կրոն» վերջավորության օգտագործումը ոչ մի առնչություն չունի կրոնի ավանդական ըմբռնման հետ: Համաձայնելով հեղինակների հետ՝ պարտավոր ենք նշել նաեւ Նժդեհի տեսակետը, ըստ որի ցեղակրոնությունը «...որեւէ հանգիտություն չունի այլ ուսմունքների հետ. իսկ եթե կրոն է դա, ապա դա կրոն է ցեղային հպարտության, ուժի եւ արիության, դա քո՝ կրոնն է նորահաս սերունդ» [35, էջ 91]: Պետք է նշել նաեւ այն հանգամանքը, որ Նժդեհն իր աշխատանքներում հաճախ ցեղ բառը օգտագործում է նաեւ ազգ իմաստով: Հիշենք, որ հայերենում այդպիսի բառեր եւս կան, որոնց մեջ ցեղը կարող է ունենալ երկակի իմաստ ու օգտագործվել նաեւ ազգ, ազգություն իմաստով, մասնավորապես՝ ցեղասպան, ցեղասպանություն, ցեղափոխություն եւ այլն: Ըստ իս՝ *Նժդեհի փիլիսոփայության մեջ ցեղը պետք է դիտվի ավելի շատ ոգու, ոգեղեն իմաստով, իսկ ցեղակրոնությունը՝ որպես որոշակի ապրելակերպ, աշխարհընկալում, աշխարհայացք, որը միտված է ազգային ինքնության, արժեքների, մշակույթի, լեզվի, ավանդության պահպանմանը, ազգակենտրոն մտածելակերպով օժտված հասարակության ձեւավորմանը*: Ընդհանրապես՝ դժվար է տալ ցեղի ամբողջ էությունը եւ բնույթն ընդգրկող սահմանում: Ժամանակին ցեղի սահմանման փորձեր են արվել նաեւ Նժդեհի կողմից, մասնավորապես՝ «Ցեղային արթնություն» աշխատանքում եւ Ցեղակրոն շարժման գաղափարական ժառանգորդ՝ Տարոնական շարժման գաղափարախոսներից փիլիսոփայության դոկտոր եւ Նժդեհի ամենամտերիմ գործակից՝ Հայկ Ասատրյանի կողմից՝ «Դարձ դեպի ոգին», «Տարոնական աշխարհայեցողութիւն», «Նախնական ծանօթութիւններ Ցեղի մասին»

աշխատանքներում եւ այլն: Ինչպես նշում է Նժդեհը. «Մարդաբանության ցարդ տաճ սահմանումներից եւ ո՛չ մեկն ընդունելի չէ ինձ համար: Ցեղ հասկացողությունը սահմանելու համար բավական չեն հին եզրերը: Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողությունը... Դժվար է դա սահմանել գիտական լեզվով: Այստեղ միայն հարաբերական գիտականության մասին խոսք կարող է լինել» [35, էջ 501]: Հատկանշական են նաեւ ցեղի մասին Նժդեհի հետեւյալ դիտարկումները. «Ոչ ցեղաշունչ ժողովուրդը ընդունում է օտար մշակույթը՝ ապագայնանալով: Ցեղը ազգայնացնում է ընդունածը [35, էջ 506]... Ցեղն է ժողովրդի հոգեւոր զինարանը... երբ ցեղն է գործում, գարահիսարցի մի հյուսն դառնում է Անդրանիկ, եւ սեբաստացի մի շինական՝ Մուրադ... Որքան տիրական է ցեղի ազդեցությունը ժողովրդի կյանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանվում վերջինս [35, էջ 508]»: Չափազանց բնորոշիչ է նաեւ Հայկ Ասատրյանի հետեւյալ դիտարկումը. «Ցեղը՝ դա են արիւն է, են ոգի: Դա են կամք է, են բանականութիւն: Դա են առաջնորդ է, են ռազմիկ: Դա են խորհուրդ է, են ստեղծագործութիւն: Դա են տառապանք է, են հաղթանակ: Ցեղը միայն կարող է փոխել պատմութեան ընթացքը» [8, էջ 64]: «Ցեղ» եզրը նժդեհյան տեսության մեջ, իմ դիտարկմամբ, օգտագործվում է որպես արյան, ոգու, դիմագծի, ավանդության, մշակույթի համախումբ, որը կարող է արտահայտվել ժողովրդի սերուցքի, նրա ընտրանու մեջ, այսինքն՝ այստեղից կարելի է եզրակացնել, որ ժողովուրդը այնքանով է առողջ, մարտունակ, ստեղծագործող, որքան շատ է նրանում այդ սերուցքի տեսակարար կշիռը, որը կատարում է նրան համախմբողի, միաբանողի, այն առաջ մղող եւ կենտրոնաձիգ ուժի, իսկ վտանգի դեպքում՝ նրա պաշտպանությունը, անվտանգությունը (եւ՝ ֆիզիկական, եւ՝ հոգեւոր) ապահովողի, ինչպես նաեւ՝ ժողովրդի կազմակերպչի, շարքերը «ցեմենտողի» դեր: Հենվելով ցեղակրոնության փիլիսոփայության վրա՝ կարելի է մեկնել, որ ցեղակրոնները հայ հասարակության այն հատվածն են, որոնց մեջ առկա են ազգային գիտակցության բարձր մակարդակը եւ ազգային պարտականության խոր զգացումը: Ցեղի մեջ է ամփոփված նաեւ ազգի հոգեւորը եւ իմաստությունը արտահայտող էությունը: Բանաձեւելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ ցեղակրոնը վերոնշված արժեքային համակարգի կրողն է:

• ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ՝ սեփական ճակատագրից դասեր քաղելու, պատմության խորհուրդը հասկանալու կարողություն;

• ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄ. կապվածությունը սեփական ազգին եւ նրա ճակատագրին: Ազգի համար վճռական պահին պատրաստ լինել կյանքը զոհաբերելուն եւ սրբորեն հետեւել Մամիկոնյանների ուխտին. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի եւ մեր ազգի համար, եւ թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների եւ մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինել, պղծվելը, այլ՝ թշնամիների սուրը թող նախ եւ առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն՝ ինչ կամենան: Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի եւ ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք»¹:

¹ VIII դարի հայոց պատմիչ Ղեւոնդի վկայությամբ՝ երբ 775թ. զորավար Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ հայ 5000-անոց զորքը Բագրեւանդ գավառի Արձնի բնակավայրի մոտ անհավասար մարտի դուրս եկավ արաբ Ամր իբն Իսմայիլ զորավարի 30 հազարանոց բանակի դեմ՝ հայ ապստամբական ուժերը նախընտրեցին քաջությամբ մեռնել, բայց չտեսնել իրենց ազգի հալածանքները եւ ստորացած կյանքը: Սիսայո մահասարսուռ պահին հայ քաջերը միմյանց քաջալերում էին այս խոսքերով. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի եւ մեր ազգի համար, եւ թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների եւ մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինել, պղծվելը, այլ՝ թշնամիների սուրը թող նախ եւ առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն՝ ինչ կամենան: Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի եւ ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք»: Եվ շարունակում է. «Այսպես իրար քաջալերելով՝ իրենց աչքերն ի բարձունս կարկառեցին, Բարձրյալից օգնություն էին հայցում՝ ասելով. «Աստված, քո հայացքը մեզ ուղղիր եւ փութա մեզ օգնության: Թո՛ղ մեծապես ամաչեն նրանք, որ մեր անձերն են ուզում զոհել, իսկ մենք, Տեր, քո անունն ենք արտասանում մեր նեղության մեջ եւ քո անունն ենք փառավորում մեզ պաշարող անձկության մեջ, քանզի ահա՛ մեզ շրջապատված են պահում չարերը, որոնց թիվ չկա, եւ մահվան երկունքն է մոտենում մեզ»: Սիսայո կենաց եւ մահու ճակատամարտում, Ղեւոնդ պատմիչի վկայությամբ՝ հայ զորքը թողեց 3000 հերոս նահատակ, որոնց թվում էին զորավար Մուշեղ Մամիկոնյանը, Սմբատ սպարապետը եւ Դաշույն Վահանը [29, էջ 119-120]:

• ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ. հոգեւոր կապ ներկա եւ անցած սերունդների միջեւ, ինչպես նաեւ՝ հայ ազգի հերոսական էջերը վերապրելու եւ ողբերգական էջերը հիշելու կարողություն ունենալ;

• ԿՐՈՆԻ, ԼԵԶՎԻ՝ որպես ինքնապահպանման կարելորագույն համակարգերից մեկի, ՄՇԱԿՈՒԹԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, արյան անաղարտության ավանդության արմատավորումը: Վերջին դրույթը, իմ համոզմամբ, Նժդեհի կողմից կարելորդվել է հայության միջեւ ամուսնության ավանդույթի պահպանման միջոցով նրա աշխարհասփյուռ բեկորները ուժացումից փրկելու համար, այլ ոչ թե՛ այլ ազգերին ստորադասելու կամ գերադասելու նկատառումով;

• ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ, որի միջոցով միայն, ըստ Նժդեհյան փիլիսոփայության, հնարավոր է բռնկեցնել հայ ազգի ուժերը եւ իրականացնել մեր միասնական նպատակները: Նժդեհի փիլիսոփայության մեջ հստակ արտահայտված է հատվածականության եւ կույր կուսակցամոլության մերժման գաղափարը, միաժամանակ՝ բոլոր այն վարդապետությունների, քաղաքական, կրոնական, հասարակական հոսանքների մերժումը, որոնք օտարացնում են մեր սերունդը ազգային արժեքներից;

• ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅՎԱԿԱՆԻ ՈՂԵՎՈՂՈՒՄԸ. այդ տեսակետից հատկանշական է Նժդեհի հետեւյալ բնութագրումը. «Ազգային բարոյականի տեսակետից՝ մի Գյուլբենկյան ավելի չարժի, քան՝ Հայաստանի մի գեղջուկ, եւ մի զորավար, մի ուսուցչապետ, քան՝ մի համեստ արհեստավոր, էականը հավիտենական հայկակա-նությունն է, որ ազգությունը նվիրագործում է իր ամեն մի անդամի մեջ... ճակատագրի եղբայր է ամեն հայ: Ավելին՝ ամեն հայ՝ դա դո՛ւ ես - ահա՛ ազգային բարոյականի անխախտելի օրենքը» [35, էջ 499];

• ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ;

• Հայրենիք վերադառնալու, Հայրենիքին տիրելու, այսինքն՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ վեհ ԳԱՂԱՓԱՐԸ, որը, ըստ Նժդեհի, ուժացումից խուսափելու միակ ճանապարհն է: Զարգացնելով գաղափարը՝ նշենք, որ հայրենատիրությունը նաեւ՝ Հայրենիքում ստեղծագործելու, հոգեւոր, պետական, տնտեսական շինարարությամբ զբաղվելու, Հայրենիքը շենացնելու, հզորացնելու հայրե-

նասիրական ձգտումն է՝ ազգերի, պետությունների հանրությունը Հայաստանի եւ յուրաքանչյուր հայի արժանապատիվ տեղն ու դերը ապահովելու համար;

- ՀԱՐԳԱՆՔ ԵՎ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ ՀԱՅ ԱԶԳԻ ՄԵԾԵՐԻ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՎԵՐԺ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՈՋԵՎ;

- ՈՒԺԻ ԵՎ ԱՐԻՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՇՈՒՄԸ, ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՄԱՐՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ;

- ՊԱՐՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԻ, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՋՈՂՄԲԵՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐՍԱԾԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆԴԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ, ԵՍԱԿԵՆՏՐՈՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ անձնականի նկատմամբ;

- ՀԱՐԳԱՆՔ ԴԵՊԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ;

- ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ;

- ՍՈՑԻԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ. «Սոցիալապես որքան արդար, այնքան զորավոր է հայրենիքը: Գերերջանիկ է մարդը, որ կարող է ասել. «Իմ հայրենիքում արելը ծագում է բոլորի եւ ամեն մեկի համար. այնտեղ երկիրը մշակելու եւ հոգեպես մշակվելու ազատություն ունեմ ես» [35, էջ 253], - գրում է Նժդեհը;

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱԿԻՏԵՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ;

- ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԾԻԳ. ըստ Նժդեհի դա կյանքի առաջադիմության օրենքն է: Նախ պետք է նվիրումով, աշխատանքով, հայրենասիրությամբ, հանուն Հայրենիքի զոհաբերության պատրաստակամությամբ գերազանցել նախորդ սերունդներին, որից կախված է նաեւ արտաքին թշնամիներին եւ նոր մարտահրավերներին հաջողությամբ դիմագրավումը: Իմ պատկերացմամբ՝ գերազանցելու ձգտումը պետք է արտահայտվի ո՛չ միայն ստեղծագործական, կրթական, գիտական եւ այլ ոլորտներում, այլեւ, իհարկե, դա պետք է տարածել նաեւ տնտեսական դաշտ, որով պետք է հասկանալ մեր Հայրենիքի, պետության տնտեսական հզորացումը եւ հարատեւ զարգացումը, որով այս սերունդը

պարտավոր է գերազանցել իր նախորդներին: Ահա դրանում է տեսնում Նժդեհը ամեն նոր սերնդի ճշմարիտ ճանապարհը, որը նա սահմանում է որպես կյանքի առաջադիմության օրենք. «Բավական չէ հիացիկ վերաբերմունք, անգամ պաշտամունք ունենալ դեպի անցյալ սերունդը՝ պետք է գերազանցել նրան: Հենց սա է կյանքի առաջադիմության օրենքը, եւ հարգանքի այն պսակը, որ յուրաքանչյուր հետնորդ պարտավոր է դնել նախնյաց հիշատակների կոթողին» [35, էջ 224]: Մեկնելով Նժդեհի փիլիսոփայությունից՝ պետք է նշել հետեւյալը. ունենալով գերազանցելու գաղափարը, ամեն նոր սերնդի դաստիարակության գործում մենք կունենանք այլ հատկությունների թվում նաեւ տնտեսապես մրցունակ պետություն, որով կարող ենք դիմագրավել բազմաթիվ ներքին ու արտաքին մարտահրավերներին: Դա կնպաստի նաեւ մեր երկրի անկախության, տնտեսական եւ ռազմական անվտանգության ապահովմանը. «Բոլոր ժողովուրդները լուսավորյալ թե վայրենի, ձգտում են արելի տակ հարմար եւ կայուն մի տեղ գրավել: Նրանք զենքի են դիմում երբեմն ռազմասիրությունից, երբեմն մրցակցությունից, երբեմն կույր ատելությունից մղված: Պատերազմում են, երբ պետք է նորանոր շուկաներ ձեռք բերել, ծովերի տեր դառնալ, երբ պետք է ինքնապաշտպանվել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախությունը [35, էջ 19]... անկախությունից զուրկ ժողովուրդները դատապարտված են մահվան, ծառայելով գերիշխան ազգերի համար որպես պարարտացուցիչ աղբ, ապավառ... Անկախ հայրենիք ունենալը իրավունք լինելուց բացի եւ պարտականություն է [35, էջ 51]»: Այստեղ, նույնպես, Հայրենիքի անկախության գաղափարի տակ, պետք է հասկանալ նաեւ տնտեսական անկախությունը, քանզի, *պետք է արձանագրել, որ պետության տնտեսական անկախությունը անմիջականորեն կապված է նաեւ պետության քաղաքական անկախության հետ, քանզի տնտեսական մրցապայքարում պարտված եւ տնտեսապես ամբողջովին կախյալ պետությունը, վաղ թե ուշ, պետք է տեղի տա նաեւ քաղաքականապես: Վստահ եմ, որ Նժդեհը՝ լինելով հեռատես եւ լայնախոհ պետական, հասարակական, ազգային գործիչ, անկախություն ասելով նկատի ուներ այն իր բոլոր դրսեւորումներով, սակայն, հաշվի առնելով այդ պահի հրամայականը՝ նա աշխարհասփյուռ հայությանը*

փորձում էր համախմբել համազգային ամենամեծ, առաջնային խնդրի լուծման համար՝ նախ տիրել Հայրենիքին եւ հասնել քաղաքական անկախության:

Ահա այս վերոնշյալ դրույթներն են, իմ կարծիքով, այն հիմնական հենարանը, որի վրա կառուցվում է մեծ հայորդու հայրենասիրական գաղափարախոսությունը, որը ընդհանուր առմամբ կարելի է բանաձեւել հետեւյալ կերպ. *ազգային ինքնապաշտպանական համակարգ, միաժամանակ՝ հայ ազգի հարատեւմանը, բնականոն զարգացմանը, հոգեւոր եւ ֆիզիկական անվտանգությանը, նրա բնական Հայրենիքի վերատիրմանը միտված պերմանենտ գործունեություն, որը, ելնելով Եփեսոսյան փիլիսոփայությունից, հնարավոր է լիարժեք իրականացնել միայն հայ ազգին կենսաբանորեն, հոգեբանորեն եւ պատմականորեն հարազատ միջավայրում՝ Միացյալ եւ Անկախ Հայաստանում:*

Ավելորդ չէ նշել, որ նրա բազմաթիվ դիտարկումները՝ կապված դպրոցի, մամուլի, հայ կնոջ, մտավորականության հետ, արդիական են հնչում նաեւ այսօր եւ, հատկապես, երիտասարդության համար ունեն անզնահատելի դաստիարակչական նշանակություն եւ կարող են անզնահատելի դեր կատարել հայակրթության գործում: Մասնավորապես՝ խոսելով դպրոցի մասին եւ քննադատելով իր ժամանակաշրջանի հայկական դպրոցների կրթական գործընթացի բացթողումները, թերությունները, Նժդեհը գրում է. «Շեշտված նպատակը, ջերմությունը, հոգին է պակասում մեր արդի դպրոցին: Նա չէ, բայց պիտի լինի հայրենագիտության ամբիոն, տաճար: Դեռ այնտեղ հայ մանուկը պիտի ծանաչի եւ սովորի սիրել հայրենի ժողովուրդն ու երկիրը» [35, էջ 45]: Ինչպես տեսնում ենք, Նժդեհը հատկապես կարեւորում է հայկական դպրոցներում հստակ որոշակիացված նպատակը, դասավանդման համակարգված բնույթը, հայրենասիրական մթնոլորտը: Միեւնույն ժամանակ, նա չափազանց մեծ ուշադրություն է դարձնում դպրոցներում կիրառվող դասավանդման եղանակին, ոճին, նյութի մատուցման ձեւին: Ազգային դաստիարակության նպատակը, ըստ նրա, ազգային գիտակցության ձեւավորումն է: Նժդեհի բնորոշմամբ՝ պետք է կրոնական երկյուղածությամբ դասավանդել հայրենագիտությունը, սրտի եւ մտքի կրակով պետք է խոսել հայրենի երկրի մասին՝ հրահրելով Հայրենիքի պաշտամունքը մանուկների

հոգիներում: Փաստերի հետ, ըստ նրա, պետք է տրվեն նաեւ գաղափարներ, որոնք կհարստացնեն մանուկների, պատանիների հիշողությունը, կբեղմնավորեն միտքը եւ կջերմացնեն սրտերը: Այստեղ նպատակահարմար եմ գտնում մեջբերել նրա կողմից իր ժամանակաշրջանի պատմության ուսուցչի հետեւյալ փայլուն նկարագրությունը. «Մեկից ավելի անգամ դժբախտություն եմ ունեցել լսելու ազգային պատմություն դասավանդող հայ ուսուցչին եւ խորապես ցավել եմ մեր աշակերտող սերունդի համար: Մի կենդանի մեռել, մեռյալ շեշտերով խոսում է մեռելների մասին: Պատմությունը նրա համար անհոգի կմախք է եւ ո՛չ թե բաբախուն սիրտ: Նա հետեւակ գիտելիքներ ունի մեր պատմության այս կամ այն շրջանի մասին. գիտի ցամաք անցքեր, թվեր, անուններ, այսքանը միայն: Նա սիրտ չունի եւ սիրտ չի՝ դնում իր դասերի մեջ: Միեւնույն տրամադրությամբ նա խոսում է եւ Տիգրան Մեծի, եւ Վեստ Սարգիսի մասին: Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թե ինչպես պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործություններից հիացած, ամեն անգամ երբ գինու բաժակը շրթունքներին կմոտեցնե՛ր՝ կոժվարանար չբացականչել՝ «Ճերմակածին գինի խմի»: Ամոթի զգացումը չի՛ այրում նրան, երբ իր խոսքը հայ խռովասեր նախարարի չարագործությունների մասին է: Սեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չի՛ նրա ավանդած պատմությունը, այլ՝ անհոգի հնախոսություն, քանզի իրեն կպակասի ազգային հպարտանքի նվիրական զգացումը: Գերազանցորեն հայրենապաշտ - ահա՛ թե ինչպիսին պիտի լինի պատմության դասատուն: Այդպիսին չի՞՞ - ասել է՝ նրա տեղը դպրոցը չի: Ասել է՝ բարոյապես ազատ չի իր ձեռքն առնելու մեր ցեղի կյանքի սրբազան գիրքը» [35, էջ 331]:

Այսպիսով, ըստ Նժդեհի, դպրոցը՝ երիտասարդ սերնդի դաստիարակության, կրթության գործընթացը լավագույնս կազմակերպելու համար, պետք է ապահովի հետեւյալ պայմանները. ա) շեշտված նպատակի, ծրագրի առկայությունը, բ) պետք է ունենա դասավանդման հստակ մշակված համակարգ, գ) ձեւավորվի հայրենասիրական մթնոլորտ, դ) պետք է ունենա ազգային գիտակցության ձեւավորմանը նպաստող աշխատանքներ կազմակերպելու կարողություն, ե) պետք է կիրառվի առարկայի մատուցման ստեղծագործական, զգացմունքային եղանակը:

Երիտասարդության հայրենասիրական, ազգային արժեքների պահպանման գիտակցության դաստիարակության գործում Նժդեհը մեծապես կարեւորում է հայ կնոջ, մայրերի դերը. «Մոր ազդեցությունը – որպես դաստիարակչուհին եւ հոգեւորիչը մարտնչող սերունդների – նրա հրաշագործ ազդեցությունը այն ժողովուրդների համար, ինչպիսին է մերը, կմնա միակ լծակը, որ պիտի բարձրացնի եւ մեր ազգային դատը, որի ծանրությունը այսօր սարսափեցնում է միայն անհայրենասերներին» [35, էջ 93], - գրում է նա:

Նժդեհը հայ կնոջ միջոցով է տեսնում հայ ընտանիքի հոգեփոխման ճանապարհը, հայ ազգի հարատեւման եւ բնականոն զարգացման գրավականը. «Մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը», - ասում է նա [35, էջ 92]: Կնոջ միջոցով հոգեփոխել ընտանիքը, որի միջոցով էլ համայն հայությունը, ահա՛ Նժդեհի մատնանշած ճանապարհը, որով հնարավոր է առողջացնել եւ բարձրացնել աշխարհասփյուռ հայության տկարացած ազգային գիտակցությունը. «Սկսենք հայ կնոջից. աշխատենք անդուլ, մինչեւ որ սրա կաթը դառնա հայրենապաշտության սրբազան կաթը: Հայրենապաշտորեն դաստիարակենք հայ կինը եւ նրան թողնենք մեր մատաղ սերնդի դաստիարակության գործը» [35, էջ 95], - գրում է նա:

Հատկանշական է նաեւ Նժդեհի հայ ազգային հոգեկերտվածքին վայել եւ միեւնոյն ժամանակ՝ իր ժամանակի համար առաջադիմական դիրքորոշումը հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ, ըստ որի ժողովուրդների քաղաքակրթական մակարդակը մեծապես կախված է կնոջ հասարակության մեջ ունեցած դերակատարությունից. «Կան ժողովուրդներ, որոնք դեռ հեռու են անկախության եւ քաղաքակրթության բարիքները վայելելու բախտից, որովհետեւ կնոջ ազդեցությունը տկար է նրանց մեջ: Մի ժողովրդի բարբերը - գովելի, թե պարսավելի – կախում ունեն մայրերից» [35, էջ 94], - նշում է Նժդեհը: Իր ուսմունքով Նժդեհը փորձում է հայ նոր սերնդին տալ հոգեցեղային դաստիարակություն: Դիմենք իրեն. «Մի ժողովրդի ապագան կախված է ցեղային այն թթխմորից, որ դաստիարակության միջոցով դրվում է մարդեակի էության մեջ՝ սրա ամենաճկուն հասակում [35, էջ 231]... Մեր հետապնդած դաստիարակությունը նախ պիտի մշակի հայ մանուկի ցեղաշունչ սիրտը... Իսկ ցեղաշունչ սիրտ ստեղծելու

գործում դաստիարակչական բոլոր ազդակներից – ընտանիք, հասարակություն, ավանդություններ, դպրոց – մայրն է ամենավճռական դեր խաղացողը [35, էջ 232]»: Նժդեհը նպատակ ուներ ստեղծելու հոգեփոխված, ցեղահոգ մայր՝ արծվամայր: Նա բարձր էր գնահատում մոր դերը նոր սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում՝ վստահ լինելով, որ հատկապես նրա՝ ազդեցությամբ մանկան մեջ պետք է ներարկվի հայակենտրոն մտածելակերպ: Մայրը պետք է անսահման սեր եւ պաշտամունք ներշնչի դեպի մեր սրբազան Հայրենիքը: Ինչպես իրավամբ նշում է Վալերի Միրզոյանը. «Ինքնաճանաչման, ինքնադաստիարակության, ինքնազորացման իրենց վիթխարի ներուժով ցեղակրոնության իմաստասիրական վճռակներն անգնահատելի դեր կարող են խաղալ հայակրթության մեջ...» [40, էջ 130]:

Նժդեհը մեծապես կարեւորում է նաեւ մտավորականության դերը հասարակության մեջ: Հայ հասարակության այդ խավի, ավելի ճիշտ՝ ինչպես Նժդեհն է նշում, ճշմարիտ մտավորականության բնորոշ գծերն են՝ բարոյական նկարագիրը, բարձր գաղափարականությունը, ստեղծագործելու, նոր իդեալներ, արժեքներ ստեղծելու ընդունակությունը, սրբության զգացումը, տեսական խղճմտանքը, հոգեւոր արիությունը, ժողովուրդն իր ամբողջության մեջ սիրելու, նրա համար տառապելու անսահման կարողությունը. «Ինչ խոսք, - գրում է Նժդեհը, որ նման մտավորականը, իրերի բերումով, կարող է տեղ գտնել այս կամ այն քաղաքական կազմակերպության մեջ, բայց նրա նվիրումն ու գործը չեն կրի դասակարգային, հատվածական բնույթ: Նրա համար գոյություն ունի ամբողջությունը - ազգը, որին անշահասիրաբար կծառայի» [35, էջ 392]:

Նժդեհի բնորոշած մարդկային այս բարձր հատկանիշներն էլ, իմ կարծիքով, կարող են լավագույն օրինակ ծառայել երիտասարդության համար, միեւնոյն ժամանակ՝ դրան հասնելու ձգտում, տենչ դաստիարակել, պետական, ազգային հավաքական մտածելակերպ ձեւավորել եւ այլն: Չափազանց տպավորիչ է հնչում նաեւ Գարեգին Նժդեհի ստամտավորականությանը՝ կեղծ, անարժան, ստորաքարշ, չակերտավոր մտավորականությանը բնորոշող հետեւյալ հանճարեղ ձեւակերպումը. «Անզեղ է հայ ստամտավորականը. ի զուր անցան Ալիշանի ու Ռաֆֆիի, Ահարոնյանի ու

Վարուժանի եւ այլոց դյուցազնաշունչ ցեղականչերը, նրա համար անմատչելի մնացին հերոսականի բարձունքները: Նա չսիրեց վտանգը, փախավ հերոսներ կրթող ազնվական վտանգից եւ իր երկչոտությամբ՝ հաճախ վտանգեց իր ժողովրդի ապագան: Երեկ պարտվողական էր, այսօր, նաեւ երկչոտության քարոզիչ: *Նրա համար՝ հերոսը արկածախնդիր է, իդեալիստը՝ տխմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ: Քաղաքացիորեն անարի է նա, զգվելի՛որեն անարի. նրան, անգամ պաշտոնապես չի կարելի տեսնել արդարների ու լավերի կողքին: Եվ այդ է պատճառը, որ այսօր հայ իրականության մեջ, ամեն քայլափոխում վատությունն է դարանակալ, որ աղվեսները առյուծներ են խեղդում, սինլքորները՝ Հիսուսներ են խաչում* (ընդգծումը իմն է, - Վ.Ա.)» [35, էջ 394]:

Ժողովրդի, պետության կյանքում մտավորականության շարժիչ, վճռական, հոգեփոխիչ դերը շեշտելու համար Նժդեհը գրում է. «Պարտվում է մի ժողովուրդ, հենց որ իրեն պարտված է զգում իր մտավորականությունը: Կորած է այն ազգային դատը, որի ղեկավարները կորած են համարում այն: Պայքարում տեղի է տալիս այն կողմը, որի առաջնորդող տարրերն առաջինն են հուսահատվում: Այո՛, հանձին ժողովուրդների, միշտ էլ չափվում են իրենց մտավորականությունները, հաղթում կամ պարտվում իրենց առաջնորդող տարրերը: Եվ չի պարտվում այն կողմը, որ չի ուզում պարտվել» [35, էջ 102]:

Անդրադառնալով մամուլի դերին՝ Նժդեհը գրում է. «Նրա պարտականությունն է - խտացած ճշմարտություններ տալ ժողովուրդին: Նպատակը - այս ճշմարտություններով լուսավորել ժողովուրդին դեպի ապագան: Չունի՞ մամուլն այս կոչումը՝ ավելորդ մակարույծ է դա, եւ զուր տեղը ժողովուրդները կերակրում են այն իրենց հաշվին» [35, էջ 126]: Նժդեհը, հատկապես, շեշտում է մամուլի կրթիչ, դաստիարակիչ նշանակությունը, նրա մեծ դերը հայ ազգի հոգեբանական ինքնապաշտպանական համակարգի ստեղծման գործում. «Լրագրություն եւ ո՛չ մամուլ - այս նշանակում է, թե մենք դեռեւս տհաս ենք, թե չենք կարողանում մեր կյանքի ներքին կնճիռները գտնել, լուսաբանել դրանք եւ մեր միտքն զբաղեցնում ենք արտաքին եղելություններով, լուրերով... եւ ոչ ոք չի զգացել, թե այդպիսով մեղսակից է դառնում հայկական

ողբերգության՝ վրիպեցնելով ժողովուրդի ուշադրությունը իր փրկության միակ զենքից - ինքնապաշտպանությունից...» [35, էջ 126]:

Հայ ազգի կազմակերպման, երիտասարդության հայրենասիրական, հայրենապաշտական դաստիարակության գործում մամուլի առողջարար դերի մեծացման համար Նժդեհը դնում է հոգեփոխման պահանջ. «Լրագիր մենք շատ ունենք, նույնիսկ ավելորդ, հիմա պետք է վերադաստիարակիչ հրապարակախոսություն: Հրապարակախոսություն, որ անսխալ կերպով փխտանշի մեր ցեղի հոգեւորը եւ արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկի մեր անցյալը եւ նոր ճշմարտություններ որոնի, որ լուսաբանի մեր ժողովուրդի կնճիռները, որ կռահի իր ժողովուրդին սպառնացող վտանգը եւ դառնա նրա հոգեւոր սպառնազինումի ահագանգը: Մամուլ, վերջապես, որ ազատվի օտարահակ մտայնությունից եւ արիություն քարոզի, որ խոյակների փոխարեն հերոսական ժողովուրդի մասին խոսի եւ այդ այդպես, մինչեւ որ հայությունը՝ խրոխտաբար կանգնած իր բարձրավանդակի վրա, ապացուցի աշխարհին, թե ինքը արի է - տեր իր հայրենիքին եւ ճակատագրին» [35, էջ 127-128]:

Սեկնելով նժդեհյան գաղափարախոսությունից՝ նշենք հետևյալը. *մամուլի հիմնական գործառույթը, նպատակը, կոչումը պետք է լինի երիտասարդության հոգեբանական նվաճումը, հայրենասիրական դաստիարակությունը եւ մղումը համազգային նպատակների իրականացմանը*: Այդ գործը հաջողապես իրականացնելու համար մամուլը պետք է, նախ եւ առաջ՝ օտար, այլասերիչ, հակազգային գաղափարախոսություններից ազատագրի հայ մտածողությունը: Այս տեսանկյունից, հատկապես վտանգավոր են՝ ազգաքանդ աշխարհաքաղաքացիությունը (կոսմոպոլիտիզմ), աղանդավորական կազմակերպությունների հոգեորությունը՝ վերջին տարիներին, հիմնականում, արեւմուտքից ներթափանցող բարոյագուրկ վարդապետությունները, որոնք խաթարում են մեր ազգային արժեհամակարգը, աղավաղում ավանդույթները, պառակտում ընտանիքները: Այդ վարդապետությունների ազդեցության չեզոքացմանը զուգահեռ՝ մամուլը պետք է իր նպաստն ունենա Հայ Ազգային Գաղափարախոսության մշակման գործում: Հակառակ դեպքում, ըստ նժդեհյան տեսության, հայությունը կմնա

հոգեբանորեն պառակտված եւ պատրաստի որս Յայաստանում՝ իր հարեւանների, Յայաստանից դուրս՝ օտարացման վտանգի համար:

Հատկանշական է, որ հայ ժողովրդի ապագան Նժդեհը ճշմարտացիորեն կապում է երիտասարդ սերնդի Հայրենիքին նվիրվածության, հայրենասիրական ոգով դաստիարակության հետ. «...ով հայրենապաշտ, ով գաղափարապաշտ երիտասարդություն ունի, նա էլ ապագա ունի» [35, էջ 46], - գրում է նա: Միաժամանակ, ապագա սերունդների համար նա մատնանշում է հետեւյալ ուղին. «Հայրերի ուղիով, նշանակում է՝ ավելի մեծ թափով ու նվիրումով շարունակել նրանց գործը, եւ այդ դեպքում ոչ թե կրկնելով նրանց տկարությունները ու սխալները, այլ՝ սրբագրելով» [35, 437]:

Երիտասարդության փրկարար դերը գնահատելով հանդերձ՝ Նժդեհը զգուշացնում է դրա հնարավոր վտանգների մասին՝ պատգամելով պետական մակարդակով հոգ տանել եւ լուծում տալ երիտասարդության հիմնախնդիրներին. «Երիտասարդությունը - դա լեռներից իջնող ամեհի մի հեղեղ է, որ կարող է եւ օրհնաբեր, եւ ավերիչ լինել: Ահա՛ թե ինչու նրա պոթելնը - որ միշտ էլ կապ ունի տվյալ ժողովրդի ապագայի կառուցման խնդրի հետ - պիտի զբաղեցնի պետական եւ հասարակական գործիչների ողջ մտածումը» [35, էջ 439]:

Ամեն ազգային գաղափար, ուսմունք, գաղափարախոսություն արդիական է այնքան ժամանակ, որքան դեռ կարողանում է ծառայել իրեն հետեւող ժողովրդի ռազմավարական շահերին, նրա ներկա եւ ապագա բարօրության եւ անվտանգության ապահովմանը: Այդ տեսանկյունից, համոզված եմ, Նժդեհի տեսական ժառանգությունը, հատկապես՝ Ցեղակրոնության եւ դրա գաղափարական ժառանգորդ հանդիսացող Տարոնականության մեջ ամփոփված գաղափարները, հայ ժողովրդի համար ունեն ոչ միայն այժմեական, այլեւ՝ մշտական արդիականություն: Նժդեհյան գաղափարախոսությունը մի հիմնարար ազգային ծրագիր է, աշխարհընկալում, որը տրամադրում է հայ ազգի անվտանգության, հետագա զարգացման, նրա հիմնախնդիրների, ազգային նպատակների լուծման եւ ներազգային ախտերի բուժման համակարգված բանալին: Նժդեհյան գաղափարախոսության մեջ

ամփոփված դրույթները չափազանց արժեքավոր են՝ այսօրվա ազգերի հանրությունում հայ ժողովրդի արժանի տեղն ապահովելու համար: Այդ գաղափարները, իմ համոզմամբ, պետք է հանդիսանան մեր պետության ճակատագիրը տնօրինող ուժերի քաղաքականության ելակետը: Այս ուսմունքը Նժդեհի պատգամն է, որն ուղղված է հայ ժողովրդի բոլոր սերունդներին: Գարեգին Նժդեհի կյանքը, գործունեությունն ու գաղափարախոսությունը մեզ սովորեցնում են տիրապետել ժամանակին՝ ենթարկվելու փոխարեն: Նա հանդես է եկել համախմբվելու, հզորանալու եւ միասնականորեն պայքարելու կոչով, քանզի, վստահ էր, որ կենսական խնդիրները չեն լուծվում միայն խոսքերով, այլ նաեւ՝ երկաթով ու արյունով: Մեր փրկությունը մեր մեջ պետք է փնտրենք, քանզի աշխարհը հաստատում է բարձր սկզբունքներ, բայց ճանաչում է միայն ուժերի իրավունքը: Միայն ազգային արժեքները գնահատող եւ պահպանող հայը կարող է այսօր եւ վաղը դիմագրավել ներքին եւ արտաքին արհավիրքներին:

Նժդեհի գաղափարներն ազգինն են, դրանք բխում են ազգայինից եւ ազգի համար են: Իր ուսմունքով նա կոչ է անում կենաց եւ մահու պայքար մղել պարտվողականի, հակազգայինի, տականքի դեմ: Ազգի տականքը. սա, թերեւս, հասարակության այն տարրն է, որն առաջնորդվում է ազգուրացությամբ, նյութապաշտությամբ, երեսպաշտությամբ, ազգի, պետության եւ ամեն ինչի գնով իր սեփական «եսը» բավարարելու անհագ մոլուցքով:

Այսօր մենք ապրում ենք համաշխարհային պատմության մեջ նախադեպը չունեցող տնտեսական, տեղեկատվական պատերազմների եւ մշակույթների բախումների ժամանակաշրջան: Արագ փոփոխվող աշխարհում աննախադեպ թափ ստացած գլոբալիզացիոն գործընթացները, երբ պետությունների միջեւ զծված քաղաքական սահմանները կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, անընդմեջ նետում են նոր մարտահրավերներ, որոնք, նախ եւ առաջ, սպառնում են քանակապես փոքր ազգերին եւ անկախ պետականության կառուցման սկզբնական փուլում գտնվող պետություններին: Պետք է նշել, որ այդ ինտեգրացիոն գործընթացները ցանկացած պետության, այդ թվում՝ Յայաստանի Հանրապետության համար, անշուշտ, ունեն նաեւ դրական բաղադրիչ, մասնավորապես՝ գիտության, տնտեսության եւ մի շարք

այլ ոլորտների բնականոն զարգացումն ապահովելու եւ համաշխարհային հանրությանը զուգընթաց քայլելու տեսանկյունից: Սակայն այդ բնական գործընթացներն աշխարհի որոշ կենտրոնների կողմից, երբեմն, շահարկվում են՝ մնացյալ ազգերին համահարթեցնելու, միօրինակություն պարտադրելու եւ իրենց մշակույթն ու արժեքները հրամցնելու համար: Ահա այս տեսակետից նույնպես մտղեհյան ուսմունքի ոգեկոչումը կարելի է՝ այդ ազդեցություններին լավագույնս դիմակայելու, մեր ազգային դիմագիծը, ավանդույթները չկորցնելու եւ այլ նմանատիպ մարտահրավերներին դիմագրավելու տեսանկյունից: Մեջբերենք մի քանի դիտարկում՝ ժամանակակից հայ մտածողների աշխատանքներից. «Այդ գաղափարախոսությունը կամ փիլիսոփայությունը աշխատել է ոչ միայն 20-րդ դարի 30-40-ական թվականներին գաղթաշխարհի հայության միջավայրում, այլեւ շատ դրույթներ ուժի մեջ են այսօր եւ դրսում, եւ մայր հայրենիքում ապրողներիս համար (Արամ Սարգսյան) [40, էջ 25]... Մեր օրերում, երբ տեղի են ունենում ազգային արժեքների անկում ու այլափոխում, երբ գլոբալացումը՝ որպես գերտերությունների, հատկապես՝ ԱՄՆ որդեգրած քաղաքականություն, առաջին հերթին ուղղվում է փոքրաքանակ ազգերի ինքնության ու էթնոպատմաշակութային համակարգերի դեմ, մտղեհյան՝ վերը նշված գաղափարները, Հայրենասիրություն – Հոգեւոր հայրենիք, Հայրենիք – ճշմարտություն – Աստված սկզբունքները եւ նրա ողջ գաղափարախոսությունն ունեն արդիական նշանակություն: Դրանք ազգապահպան, օտարամուտ արժեքներին ու գաղափարախոսություններին, աղանդներին հակադրվելու անհրաժեշտ պայմաններից են, կարելի ուղեցույցներ յուրաքանչյուր հայի, հայության ու հայկականության ստեղծման ու ամրապնդման համար [40, էջ 59]... Ցեղակրոնությունը հանդես է գալիս նաեւ որպես մեթոդաբանական սկզբունք, որով Նժդեհը հիմնավորում է այլ ազգերի ու քաղաքակրթությունների հետ շփումների ու հարաբերությունների անհրաժեշտությունը, սակայն այնքանով, որքանով դրանք չեն հակասում ազգին ու ազգայինին: Եվ այդ սկզբունքն առավել կարելի է նաեւ մեր օրերում, երբ հայության եւ Հայաստանի համար մեծ վտանգ են գերտերությունների, հատկապես՝ ԱՄՆ որդեգրած համընդհանրացումը (գլոբալացումը), երբ ժողովրդի

զանգվածային գիտակցության մեջ ուժեղանում է Արեւմուտքի քաղաքակրթական ու մշակութային, հաճախ նաեւ՝ իրենց սպառած արժեքներին կուրորեն հետեւելու ձգտումը: Հասարակության որոշ շերտերում մեծանում է օտարամոլությունը՝ այն աստիճան, որ ազգայինն ամբողջովին անտեսվում է: Գերակայությունը տրվում է օտարամուտ գորշություններին, անճաշակությանը, հոգու աղքատությանը (Սուրեն Սարգսյան) [40, էջ 68]... Միօրինակություն քարոզող տեսությունների եւ դրանց հետեւում կանգնած ուժերի խնդիրն ակնհայտ է. շահարկելով ինտեգրման բնական գործընթացները՝ բոլոր ազգերին պարտադրել միօրինակ բարքեր, միօրինակ մշակույթ, մտածելակերպ, հասարակարգ, տնտեսածեւ, կարճ ասած՝ աշխարհաքաղաքացու համընդհանուր կենսակերպ (Մուշեղ Լալայան) [19, էջ 39]»: Ավելացնենք նաեւ, որ Նժդեհի ուսմունքը մեզ զինում է ազգային բարոյականով, որի միջոցով պետք է պայքարենք հայ հասարակության որոշ շերտերում գոյություն ունեցող մեկ այլ ախտի՝ ազգուրաց աշխարհաքաղաքացիության (կոսմոպոլիտիզմ) գաղափարախոսության դեմ, քանզի պետք է վերջապես հասկանալ, որ միայն ազգին ծառայող հայրենատերն է իրապես ծառայում նաեւ համայն մարդկությանը: Այստեղ պետք է շեշտենք, որ խոսելով աշխարհաքաղաքացիության մասին՝ Նժդեհը երբեք չի հակադրում հայրենասիրությունը եւ մարդասիրությունը. «Հայրենիքի եւ հայրենասիրության թշնամին աշխարհաքաղաքացին է՝ կոսմոպոլիտը: Սրա հայրենիքը, իր հայտարարությամբ, համայն աշխարհն է, ազգը՝ համայն մարդկությունը: Չկան ազգեր, կա մարդկությունը, - ասում է այդ միամիտ երազատեսը եւ հայացքն ուղղում դեպի անորոշ հեռուները: Պիտի սիրել, - ասում է սա. պիտի սիրել բոլոր մարդկանց՝ առանց ցեղի, զույնի, կուլտուրայի խտրության: Այո՛, պիտի սիրել, պիտի կարեկցել, ավելին՝ պիտի օգնության փութալ իր նմաններին: Մերը դեպի մեր նմանները եղել է եւ կմնա կրոնների եւ հեղափոխությունների հռչակած առաքինություններից գերագույնը: Պիտի ապրի մարդասիրությունը: Բայց մի՞թե մեր դեպի մարդկությունը ունեցած սերը ազատում է մեզ եւ մեր ժողովուրդը սիրելուց, հայրենասեր լինելուց [35, էջ 26]... Բացարձակ հաշտելի են հայրենասիրությունն ու մարդասիրությունը: Բարեկամներ են սրանք եւ ոչ թշնամիներ: Միայն ազգասերը կարող է սիրել եւ մարդկությունը...

Ծառայելով իր ազգին, հայրենասերը անուղղակի կերպով ծառայում է եւ մարդկությանը» [35, էջ 27]: Մեջբերենք նաեւ ռուս մեծ փիլիսոփա Բերդյաեւի կարծիքը աշխարհաքաղաքացիության վերաբերյալ. «Աշխարհաքաղաքացիությունը տգեղ եւ անիրականանալի երազանքի արտահայտությունն է եղբայրական եւ կատարյալ մարդկության մասին՝ կոնկրետ, կենդանի մարդկության փոխարինումը վերացարկված ուտոպիայով: Ով չի սիրում իր ժողովրդին եւ ում հաճելի չէ նրա պատկերը, չի կարող սիրել եւ մարդկությունը, եւ նրան հաճելի չէ կոնկրետ մարդկությունը... դա քարոզն է վերացարկված մարդու եւ վերացարկված մարդկության» [52, էջ 350]: Հատկանշական է նաեւ XIX դ. վերջի եւ XX դ. առաջին կեսի ռուսական ազգայնականության գաղափարախոս, անվանի բժիշկ, գիտնական, պրոֆեսոր, 1882-1897թթ. Վարշավայի համալսարանի ռեկտոր, իր՝ բժշկագիտությանը, պատմությանը եւ մանկավարժությանը վերաբերող մի շարք աշխատանքներով հայտնի Պավել Կովալենսկու խոսքը նշված խնդրի վերաբերյալ. «Մեր մանկավարժների գերխնդիրն է համառորեն կուլտիվացնել ռուսական ազգային գծերը ռուս երեխաներիւմ եւ հեռացնել այն ամենը, ինչը կշեղի նրանց դեպի աշխարհաքաղաքացիություն» [53, էջ 247]:

Այսօր Հայաստանի Հանրապետությունը բազմաթիվ տարածաշրջանային, եվրոպական, համաշխարհային կազմակերպությունների եւ կառույցների անդամ երկիր է: Իհարկե, համաշխարհային հանրությանը եւ ազգերի ու պետությունների ընտանիքին ինտեգրումը հույժ կարեւոր նշանակություն ունի մեր նորանկախ պետության կայացման եւ բնականոն զարգացումն ապահովելու համար, առանց որի անհնարին ու անտրամաբանական է պետության արտաքին քաղաքականությունը XXI դարում, իսկ դրա դեմ պայքարելը կամ ընդդիմանալը առնվազն դոքսիշոտություն է եւ անիմաստ: Սակայն, ինտեգրման գործընթացը չափազանց դրական եւ ողջունելի գնահատելով հանդերձ՝ ստիպված ենք ընդգծել, որ փոխադարձ պայմանավորվածությունների եւ պարտավորությունների շրջանակում մեզանում հաճախ ընդունվում են որոշումներ ու օրենքներ, որոնք սովորաբար այս կամ այն առաջավոր արեւմտյան երկրի օրինակով փորձվում է անմիջապես կիրառության մեջ դնել մեր հանրապետությունում: Սակայն քաղաքա-

կրթական, սոցիալական, հոգեբանական, պետականաշինության գործում ունեցած փորձի եւ այլ տարբերությունների պատճառով դրանք հաճախ մնում են հասարակությանը խորթ, քանի որ հասարակությունը պատրաստ չի լինում դրանց: Բարեփոխումների անցկացումը, ինչպես նաեւ՝ համապատասխան օրենքների ընդունման, դրանց փոփոխման անհրաժեշտությունը, նախ եւ առաջ պետք է հասունանան տվյալ հասարակության հոգեւոր եւ գիտակցական մակարդակներում, էվոլյուցիոն, փուլային բարեփոխումների, աստիճանական տրանսֆորմացման եղանակով, որ չվտանգվեն, չխեղվեն տվյալ ժողովրդի ազգային ավանդույթները, ոգին, բարոյականությունը եւ արժեքային համակարգը: Լսենք Նժդեհին. «Ոչ մի հասունացում հնարավոր չէ արիեստական ձեւով, առանց խեղելու դա (այդպես է բնության մեջ, նույնը՝ մարդկության) ... Պրոգրեսի նորմալ ընթացքը (ժողովրդի կյանքի կառուցման, պետական սարք ու կարգի հաստատման) – նախ օրենքները հաստատվում են ոգիների մեջ, վերջը՝ ընդունում սահմանադրության ձեւ: Այսինքն՝ հոգեւոր պրոգրեսի ճամփով դեպի արտաքին պրոգրեսը [35, էջ 509]... Գոյություն չունի արագ պրոգրես: Արիեստականորեն արագացված պրոգրեսը արիեստականորեն արագացված անկում է: Պատմությունը մի բան գիտի՝ աստիճանական տրանսֆորմացիա... Բոլոր վերանորոգումները պետք է հաշտեցնենք ավանդությունների հետ... Ամեն քաղաքա-սոցիալական բռնացում խեղում է ժողովրդի հոգին» [35, էջ 511]: Փորձենք մտածել այդ մասին:

Գարեգին Նժդեհի ուսմունքի արդիականությունը պետք է դիտարկել նաեւ Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական իրադրության համատեքստում: Դիմենք նախ Նժդեհին. «Ժողովուրդների համար խորապես ցեղորեն ապրելը (ներցեղային բարոյականով առաջնորդվելը) դառնում է անհրաժեշտություն հետեյալ պատճառներով.

ա) երբ իրենց վիճակվում է ապրել աննպաստ աշխարհագրական միջավայրում.

բ) երբ, կորցնելով իրենց պետական անկախությունը, նրանք կորցնում են բնականոն գոյության կարելիությունը.

գ) երբ իրենց վտանգ կսպառնան թվով ու քաղաքականապես ավելի հզոր, ցեղորեն ու կրոնապես օտար հարեւանները, եւ այլն» [35, էջ 467]:

Այժմ դիտարկենք Հայաստանի Հանրապետության արտաքին եւ ներքին քաղաքական կացությունը. Հայաստանի Հանրապետության քաղաքական քարտեզին ընդամենը մեկ հպանցիկ հայացք բավական է հասկանալու համար, թե ինչպիսի՞ բարդ տարածաշրջանում է իր առաջին քայլերն անում երկար մաքառումներից հետո կրկին պետականություն ձեռք բերած մեր երկիրը: Իր ներկայիս տարածքով եւ սահմաններով ներկայիս Հայաստանը, Նժդեհի բնորոշմամբ՝ «հայրենի անկյունը», հայտնվել է մի շարք բարդ խնդիրների առջեւ: Թուրքիան այսօր արտաքուստ ցույց է տալիս ժողովրդավարացման որոշակի նշաններ, իսկ վերջին ժամանակներում աշխարհաքաղաքական փոփոխությունների, երկու երկրների նախագահների, արտգործնախարարների մակարդակով շփումների ակտիվացման ֆոնին չնայած երեւում են Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի որոշակի փոփոխման նախադրյալներ, այնուամենայնիվ, կարծում եմ, Թուրքիան դեռեւս ամբողջովին չի հրաժարվել Հայաստանի նկատմամբ իր մոտեցումներից, որոնք միտված են տարածաշրջանային բոլոր տեսակի տնտեսական ծրագրերից Հայաստանի Հանրապետության լիակատար մեկուսացմանը, հայ-թուրքական սահմանի բացման վերաբերյալ ոչ կառուցողական դիրքորոշման պահպանմանը եւ, հատկապես, Թուրքիան դեռ չի պատրաստվում հրաժարվել Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ իր ժխտողական կեցվածքից: Ուստի արդեն քանի՞ տասնամյակ հայ հասարակությանը հուզող՝ «Փոխվել է, արդյոք, Թուրքիան» հարցին պետք է պատասխանել, որ բովանդակային առումով Թուրքիան չի փոխվել, փոխվել են նրա միայն պայքարի եղանակները, քանզի հայությունը, իսկ այսօր արդեն՝ անկախ, ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը, եղել է, կա՛, եւ կլինի՝ այն սեպը, որը խրված է թուրքալեզու ազգերի, Մեծ Թուրանի ճանապարհին: Հետեւաբար՝ պետք է հնարավորինս միաբանվենք՝ քաղաքականապես ու հոգեբանորեն, սպառազինվենք ազգային բարոյականով, իսկ Նժդեհի պատգամների ոգեկոչումը, վստահ եմ, լուրջ պատվար կարող է հանդիսանալ ժամանակակից պատերազմներին դիմակայելու

համար, մասնավորապես՝ հոգեբանական, տեղեկատվական ներազդման միջոցներին, որոնք ուղղված են հակառակորդի հոգեբանական քայքայմանը, արժեքային կողմնորոշումների եւ ազգային գիտակցության խեղմանն ու թիրախային պետության ներքաղաքական կայունության խարխիւմանը:

Գարեգին Նժդեհը փորձում էր հայության շրջանում գոյություն ունեցող հատվածականությունը, մասնատվածությունը եւ պառակտվածությունը արմատախիլ անել նախ եւ առաջ ազգային ինքնագիտակցության բարձրացման, ազգային արժեքների գնահատման, պահպանման ու քարոզման եւ ներցեղային բարոյականի ոգեկոչման միջոցով: Այս տեսանկյունից, համոզված եմ՝ Նժդեհի քարոզած միասնության գաղափարն ավելի քան արդիական է, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության այժմյան ներքաղաքական իրականության համատեքստում: Ներկայումս օր օրի ավելացող՝ մի քանի տասնյակ կուսակցությունները դրա վառ ապացույցն են²: Սիւս հենց այս հատվածականության դեմ էր հանդես գալիս Նժդեհը: Հասկանալի է, որ չկա եւ չի կարող լինել այդքան գաղափարախոսություն մեկ ազգի, մասնավորապես՝ մեզ պես քանակապես փոքր ազգի մեջ: Իսկ ի՞նչ է կատարվում այսօր: Հայաստանյան քաղաքական դաշտը լցված է զանազան օտար ու փոխառիկ, հաճախ՝ իրենց իսկ անհասկանալի գաղափարներ որդեգրած կուսակցություններով, մարդ-կուսակցություններով, տվյալ պահին ինչ-ինչ հարցեր լուծելու համար ստեղծված եւ թիթեռի կյանք ունեցող կուսակցություններով, որոնց ժամանակին լավագույնս բնութագրել է Նժդեհը. «Նրանց ծրագրերը – մեկը մյուսից մողայիկ – մի քիչ ռուսական, մի քիչ եվրոպական – միայն անունով են հայկական: Նմանվելու այդ ախտից – արդյունք՝ ազգային տկար ինքնագիտակցության – դեռ այսօր էլ զերծ չեն հայ կուսակցությունները» [35, էջ 478]: 1942թ. ասված այս խոսքերը մի՞թե այսօր էլ լավագույնս չեն բնութագրում Հայաստանի

² Ըստ ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում գետնից տվյալների՝ 01.01.2007թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված են 90 կուսակցություն, որոնցից 75-ի հիմնադիր փաստաթղթերը համապատասխանում են «կուսակցությունների մասին» ՀՀ օրենքին [59]:

Հանրապետության քաղաքական դաշտը: Այդ երեւոյթը առկա էր երեկ, առկա է եւ այսօր: Կարծում եմ, այստեղ տեղին է մեջբերել Նժդեհի գաղափարական ընկերոջ՝ Հայկ Ասատրյանի խոսքերը. «Ուր շատ միութիւններ կան - այնտեղ չկայ միութիւն, ուր շատ փառաւորեալներ կան - այնտեղ չկայ փառք» [8, էջ 158]: Իսկ ի՞նչ է մեզ սովորեցնում Նժդեհի ուսմունքը: Այդ ուսմունքը մեզ սովորեցնում է վեր կանգնել անձնական, խմբակային, հատվածական շահերից, երբ դրա կարիքը ունի մեր Հայրենիքը, եւ միասին արարել այն, ինչը բարի է Հայաստանի համար: Միասնական մղում դեպի պատմականորեն արդարացված հայկականություն, գաղափարավարություն: *Լինենք հանրապետական, թե դաշնակցական, ռամկավար, թե համայնավար, հնչակյան, պահպանողական թե ազատական, ընդմիջտ հիշենք, որ հայ մարդու էությունը հավիտենական հայկականությունն է, նպատակը՝ Հայաստանը:* Մեր կարծիքով, սա է այն ճանապարհը, որով հնարավոր է գոյատևել, արդյունավետ գործել եւ իրականացնել մեր ազգային միասնական նպատակները: Ուրեմն եկեք հետեւենք Նժդեհի կոչին եւ ամուր պահենք մեր ներքին ճակատը, որ առավել արդյունավետ պայքարենք արտաքին ճակատում: Մտածենք այդ մասին:

Հայ հասարակության հոգեւոր արժեքների անվտանգության ապահովման տեսանկյունից, իմ կարծիքով, չափազանց կարելոր է նաեւ հաշվի առնել Հայաստանում լայն տարածում ստացած եւ հիմնականում արտասահմանյան որոշ կենտրոնների կողմից ֆինանսավորվող զանազան կրոնական աղանդների ակտիվ գործունեությունը³: Անշուշտ, դրանց նման տարածումը լուրջ սպառնալիք է մեր ազգային անվտանգության համար, եւ լուրջ մարտահրավեր է նետում մեր հասարակության հոգեւոր միասնության պահ-

³ Ըստ ՀՀ արդարադատության նախարարության Պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում զետեղված տվյալների՝ 01.01.2007թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված է 19 կրոնական կազմակերպություն, սակայն, ինչպես նշված է կայքէջում՝ սույն թվի մեջ չեն ներառվում այլ լիազոր մարմինների կողմից գրանցված սուբյեկտները [59], իսկ ըստ «Ձվարթնոց» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի պաշտոնական կայքէջում զետեղված ցանկի՝ ՀՀ-ում գոյություն ունի 55 կրոնական կազմակերպություն [60]:

պանմանը: Ավելորդ չէ նշել, որ նրանցից շատերը քարոզում են կուրորեն հետեւել իրենց գաղափարներին, իսկ իրենց աղանդ նոր մարդկանց ներքաշելը հռչակվում է աստվածահաճո գործ: Պակաս կարելոր չէ նաեւ այն հանգամանքը, որ որոշ աղանդավորական կազմակերպություններ արգելում են իրենց հետեւորդներին զենք կրել, ինչը պատերազմի դեպքում կարող է լրջորեն վտանգել Հայրենիքի պաշտպանության արդյունավետ կազմակերպումը: Այդ վտանգին դիմակայելու համար պետք է սպառազինվել ազգային բարոյականով եւ ճշմարիտ Քրիստոնեական արժեքներով, որոնց տարածման ուղղությամբ այսօր մեծ աշխատանք է կատարում Հայ Առաքելական սբ. Եկեղեցին:

Մյուս կարելոր հանգամանքը. Գարեգին Նժդեհի ուսմունքի, նրա գաղափարների տարածումը չափազանց կարելոր եւ արդիական է աշխարհասփյուռ հայության հայապահպանման համար: Արեւմտյան Հայաստանում երիտթուրքերի կողմից մեկ ու կես միլիոն հայության բնաջնջումը, իսկ նրա մյուս մասի՝ աշխարհով մեկ սփռվելը նետեց նոր մարտահրավերներ՝ օտար երկրներում ծուլման վտանգի կանխման, ազգային ինքնության պահպանման եւ հայրենադարձության հրամայականի հետ կապված: Ահա՛ նաեւ այդ գերխնդիրը լուծելու էին կոչված Նժդեհի գործն ու գաղափարախոսությունը:

1990-ական թվականների սկզբի Հայաստանի Հանրապետության տնտեսական շրջափակումը, պատերազմը եւ խորհրդային Միությունից ժառանգած արտադրական կարողությունների ոչ բարեխիղճ տնօրինումը հանգեցրին նորանկախ եւ իր արդարացի պահանջների համար կենաց ու մահու պայքար մղող Հայաստանի տնտեսության լիակատար քայքայմանը, որին հետեւեց հայության արտագաղթի նոր ալիքը: Եվ այսօր մեր հին եւ նոր Սփյուռքը կանգնած է նույն մարտահրավերների առջեւ, ինչ նախորդ դարում: Մենք ունենք շուրջ երեք միլիոն հայություն Հայրենիքում, ում նույնպես մեծապես սպառնում են արեւմտյան՝ ազգություններ չճանաչող, կոստոպոլիտ արժեքների ներթափանցումը, ինչպես նաեւ՝ բազմամիլիոնանոց Սփյուռք, ում հայապահպանման եւ հայրենադարձման խնդիրն արդիական է եւ կլինի այդպիսին, քանի դեռ հայկական Սփյուռքը չի հայրենադարձվել եւ չի դարձել իրավապես ու հոգեբանորեն հայրենատեր:

Նժդեհյան ոգու կրողներն այն հայերն են, ովքեր մաքառել են հանուն իրենց ազգի, ինքնության, լեզվի, եկեղեցու եւ համա-մարդկային բարոյական արժեքների պահպանման, ինչպես նաեւ՝ դրանցից բխող ազգային նպատակների իրագործման: Նժդեհն առավել կարեւորում էր հայ երիտասարդի գիտակցության առողջացումը, քանզի հենց երիտասարդությունն է պետության ներուժը եւ ապագան: Երիտասարդությունն է, որ պետք է ստանձնի արժանավայել ապագա ստեղծելու առաքելությունը, նա՛ պետք է մարտնչի նորանոր բարձունքներ հաղթահարելու համար՝ հանուն Հայրենիքի եւ Հայոց ապագա սերունդների: Երիտասարդությունն է, որ ճշմարիտ արժեքներ արարելու եւ դրանցով առաջնորդվելու հնարավորություն ունի: Հակառակ դեպքում, տուրք տալով կեղծ արժեքներին՝ նա կարող է քայքայել մեր երկրի բազմադարյան արմատները, որոնք Տիգրան Մեծ, Մեսրոպ Մաշտոց, Վարդան Մամիկոնյան, Խորենացի, Կոմիտաս եւ Գարեգին Նժդեհ են պարունակում: Իսկ այդ արմատների քայքայումը հղի է հայ ազգի հոգեւոր արժեքների վտանգմամբ: Առողջ, ազգային, պետական մտածելակերպով օժտված երիտասարդությունն այն կրակն է, որը կարող է բոցավառել հայ մարդու ոգին, լուսավորել այն եւ առաջնորդել դեպի իմաստություն եւ ճշմարիտ արժեքներ: Մխաված չենք լինի, եթե նշենք, որ ինչքան մարդու մարմինը մաքրության կարիք ունի, այդքան նրա ոգին՝ վեհացման, սրբացման: Թե ինչպիսի Հայրենիք կունենանք վաղը՝ պայմանավորված է այն հանգամանքով, թե այսօր ինչպիսին կկառուցենք Հայրենիքը մեր մտքի եւ հոգու մեջ:

Այսօր մեր հասարակության մի հատվածը տառապում է նյութապաշտության, փառամոլության ու ընչաքաղցության ախտով եւ վարում է դրան համապատասխան ապրելակերպ: Դրանում, ցավոք, ներգրավված են սովորաբար հայ երիտասարդներ, ովքեր իրենց այդօրինակ ապրելակերպը որակում են որպես աշխարհիկ կյանքից բխող օրինաչափություն: Սակայն, կարծում են, իրականում դա մարդկային բնության տկարություն է: Գարեգին Նժդեհն իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում կենաց ու մահու պայքար է մղել այդ արատների դեմ: Այդ գերմարդու գաղափարներն իրենց խորհուրդով մեր ազգի եւ, մասնավորապես՝ երիտասարդության արժեհամակարգի ձեւավորման գոհարներ են:

Դրանք ներկա եւ ապագա սերունդների համար հարատեւ արժեքներ են եւ հայեցի դաստիարակություն, կրթություն, արարելու ունակություն, հաղթելու եւ հերոսանալու պատրաստակամություն են սերմանում հայորդու մեջ: Արժեքներ, որոնց համար արժե ապրել եւ մեռնել, ինչպես արեց Նժդեհը՝ հայ ոգու դայակը:

Մեծանուն սպարապետի կենսագրությունը, կյանքի խորհուրդը հայորդիների համար շտեմարան է, որից հոգեւոր սնուցում ստանալով է հնարավոր համախմբել մեր ուժերը եւ մարտնչել աշխարհիկ կյանքից բխող դժվարությունների դեմ: Ցավոք, այդ մարտնչողները մերօրյա իրականության մեջ երբեմն տեղի են տալիս՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգեբանական եւ բազմաթիվ այլ խնդիրների բեռի տակ: Այո՛, այսօր մենք տեսնում ենք սոցիալական ծայրահեղ բեւեռվածություն, արդարության պակաս, մենաշնորհային դիրքի չարաշահումներ, գործազրկություն եւ բազում այլ հիմնախնդիրներ, որոնց հետեւանքով առաջ են գալիս հուսալքությունը, հիասթափությունը, արտագաղթը, սահմանամերձ շրջանների ամայացումը: Սակայն նժդեհյան ոգով առաջնորդվողները չպետք է հուսալքվեն, քանզի հուսալքությունը բնորոշ է թույլերին, ովքեր, ոգեպես տկարանալով՝ դատապարտվում են հոգեւոր լճացման եւ քայքայման: Ոգով ուժեղներն են կարողանում դիմակայել կյանքի արհավիրքներին: Իսկ ի՞նչ է կյանքը, եթե ո՛չ երկու հակամարտ ուժերի անդադար պայքար, ուժեր, որոնցից մեկն արարում, ստեղծագործում է, իսկ մյուսը՝ կործանում եւ քանդում: Կարծում են, ժամանակն է հստակ պետական քաղաքականություն մշակել նախ եւ առաջ սահմանամերձ շրջանների տնտեսական եւ սոցիալական խնդիրների լուծման, այդ շրջանների տնտեսության խթանման ու դատարկվող շրջանների վերաբնակեցման ուղղությամբ, քանզի այդ տարածքները յուրացնողը, մշակողը եւ պաշտպանողն առաջին հերթին այնտեղ ապրող բնակչությունն է: Այսօր մեզ պետք են ոչ միայն արհեստավարժ, կրթված, գիտակ այլ նաեւ՝ գաղափարական ղեկավարներ, ովքեր օժտված են Հայրենիքի առաջ ծառայած խնդիրները հոգով խորազգալու եւ գործի մեջ գաղափարը ներդնելու կարողությամբ:

Հայ մարդը մշտապես պետք է իրեն հարցնի, թե որտեղի՞ց է գալիս եւ ո՛ւր է գնում, հանուն ինչի՞ է գնում եւ ինչպե՞ս է գնում: Այդ

տեսանկյունից եւս նժդեհյան ուսմունքը հարուստ շտեմարան է՝ ազգային, հայկականության ոգով հայ երիտասարդության դաստիարակության եւ ազգային հասարակության կայացման համար:

Գարեգին Նժդեհի ժառանգությունը՝ նրա կյանքն ու գործունեությունը, մեծ նշանակություն ունեն նաեւ հայ զինվորի ոգեկան ուժերի զարգացման, նրա հայրենապաշտական, ռազմահայրենասիրական դաստիարակության եւ Հայրենիքին անմնացորդ նվիրվելու իմաստով: Այստեղ տեղին է մեջբերել Գարեգին Նժդեհի որդեգիր զավակի՝ Սուքիաս-Վրեժ Նժդեհի խոսքերը. «Ուզում եմ, որ Հայաստանի բոլոր զինվորները հայրենիքը սիրեն այնպես, ինչպես սիրում էր հայրս...» [49, էջ 25]: Հայ բանակի ռազմակրթական դաստիարակության տեսանկյունից մեծ նշանակություն ունեն Նժդեհի ռազմավարությանը՝ ահավարությանը⁴, նվիրված աշխատանքները, որոնք չափազանց կարելոր են հայ զինվորի թե՛ ֆիզիկական պատրաստվածության եւ թե՛ մարտավարական գիտելիքների զարգացման տեսանկյունից: Այդ առումով առանձնանում է Նժդեհի եւ Շերամի կողմից Գորիսում 1921թ. տպագրված «Ձորաշարքային կանոնադրություն» գրքույկը: Այստեղ պետք է

⁴ Նժդեհի ստեղծած եւ հայոց լեզվի բառապաշարը հարստացրած բազմաթիվ բառերից մեկն է: Ահա թե ինչպես է մեկնաբանում ահավարությունը Նժդեհը. «Խոտան պիտի հռչակել այն բոլոր տեսությունները, որոնք հաղթանակը միշտ էլ նվիրում են այն կողմին, որը մի հատիկ զինվոր, մի թնդանոթ, ամրաշինական մի կառուցվածք ավելի ունի: Ո՛չ, ո՛չ, հարյուր զինվորի ուժը միշտ էլ հավասար չէ հարյուրի ուժին: Այդ ուժն ունի իր հավելումն ու նվազումն ունի, նայած թե ո՛վ էլ հոգեբանական ինչպիսի՞ մթնոլորտում ու ինչպե՞ս է դեկավարում այդ հարյուրյակը: Կռվում գործ ունենք կենդանի, հարափոփոխ, դիմամիկ եւ ոչ մեքենական մեռյալ ուժերի հետ, որոնք չեն մնում քարացած միեւնոյն կետի վրա: Թիվն ու տեխնիկան վճռական դեր են կատարում միայն այն դեպքում, երբ նրանցից օգտվում ենք իբրեւ ահավարության միջոցներից: Հաղթանակը օրինաչափորեն թեքվում է այն կողմը, որը հաջողվում է ավելի երկար ժամանակ մահվան սարսափի տակ պահել իր հակառակորդին՝ ճգնելով խորտակել նրա դիմադրական ոգին: Այո՛, ըստ էության՝ ռազմավարությունն այլ բան չէ, եթե ոչ՝ ահավարություն: Եվ, որովհետեւ մահն է ահացուցիչը՝ մենք բնավ մեղանչած չենք լինի լեզվի ոգու դեմ, եթե այսպես բանաձեւենք ռազմավարությունը – հոգեբանորեն առնված՝ դա մահավարություն է» [35, էջ 283]:

նշել նաեւ պատմաբան Ռաֆայել Համբարձումյանի դիտարկումը. «Հիմնուելով Մամիկոնեանների մշակած ռազմագիտութեան, ռազմարուեստի տեսութեան ու ռազմահոգեբանութեան վրայ եւ դրանք հարստացնելով Ռուբինեան իշխանների, Լեւոն Մեծագործի, Դաւիթ-Քէլի եւ 20-րդ դ. հայ խոշոր հայրուկապետեր Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի, Եփրեմ Խանի, Համազասպի, Քեռու, Խէչօյի եւ ուրիշների մղած կռիւների, յատկապէս Ղարաքիլիսայի հերոսամարտում կիրառուած ռազմարուեստի վրայ, Գ. Նժդեհը բիրտըացրեց, ամբողջացրեց եւ մի նոր բարձունքի հասցրեց հայոց ռազմագիտութիւնը՝ փակելով այն անջրպետը, որ առաջացել էր մեր ազգային ռազմարուեստի մէջ՝ Դաւիթ-Քէլի ու Արցախի մելիքութիւնների հրաշակերտած յաղթանակներից ի վեր» [24, էջ 86]: Հատկանշական է նաեւ ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանի գնահատականը. «Նժդեհը մեր այն զինվորական տեսաբաններից է, ով իր գեների ուժը միշտ համադրել է գրչի ուժին, եւ նրա ստեղծած գործերը մշտապես ուղղորդում են գաղափարական, ինչու՝ ոչ, շատ դեպքերում նաեւ՝ զինվորական տեսության զարգացումը... Նժդեհը հայ ժողովրդի սիմվոլն է...» [42, էջ 4]:

Գարեգին Նժդեհի գաղափարախոսության ոգեկոչումը մեծ նշանակություն ունի նաեւ մեր ազգային մշակույթի պահպանման, մշակութային անվտանգության ապահովման տեսանկյունից: Իսկ արդյոք պահպանո՞ւմ ենք մեր ջինջ ակունքներից բխող ազգային մշակույթը, որ դավանել եւ պահպանել ենք դարեր շարունակ, թերեւս կհարցներ Նժդեհը, եթե տեսներ այսօրվա իրականությունը, մասնավորապես՝ լսեր փողոցում, ավտոմեքենաներից եւ հեռուստատեսկրանից հնչող երաժշտությունը: Երաժշտություն, որը պահպանել ենք օտար տարրերից, որոնք եկել էին պղտորելու մեր ազգայինը, մեր կոմիտասյանը, մեր երաժշտական այբուբենը, որ մեր երաժշտության հիմքն է: Նժդեհին պարտավոր ենք պատասխանել, որ մենք մշակութաստեղծ ու հազարամյակների մշակույթի տեր ժողովուրդ ենք, ուստի պատրաստ ենք պայքարելու մշակութային արժեքները պղծողների դեմ, ովքեր խավարամտորեն քարկոծում են հայ մարդուն հայ պահող արժեքները: Հայ մարդն իր մշակույթով է հայ, ուստի, հեռանալով ազգային մշա-

կույթից, այն է՝ սեփական ինքնությունից, դադարում է այդպիսին լինելուց եւ, հետեւաբար՝ հեռանում է Նժդեհի դավանած Ցեղից:

Նժդեհը հանդես եկավ գաղափարական սպասավորի դերում, ով ոչ թե ստեղծեց, այլ՝ հայտնագործեց, ամբողջացրեց եւ նոր շունչ հաղորդեց դարերով իրեն արդարացրած հայկականության գաղափարին՝ վերջինս մշակելով եւ դարձնելով հիմնարար ազգային գաղափարախոսություն: *Նա նախածեռնեց հայրենն ապրելու եւ հայկականորեն գործելու Շարժումները, որոնց հիմքում ընկած են համայն հայության ազգային արժեք հանդիսացող Քրիստոնեական ուսմունքը, Հայկական Մշակույթի ու Մայրենի լեզվի պահպանությունը, Հայրենիքի անկախությունը բացարձակ արժեք ընդունելու, այն ամբողջապես վերատիրելու եւ դրա հավիտենականությունը ապահովելու գաղափարները:*

Մաշտոցը նախ եւ առաջ գյուտարար էր, ինչպիսին էր նաեւ Կոմիտասը: Մաշտոցը ստեղծեց մեր լեզվի այբուբենը, իսկ Կոմիտասը՝ մեր «երկրորդ լեզվի»՝ հայկական երգի այբուբենը: Կոմիտասը ցանկանում էր ամբողջ աշխարհին ցույց տալ մեր ժողովրդի երաժշտական մշակույթի՝ սքանչելի ու ինքնատիպ լինելը: Նա իր ժողովրդի երգ ու երաժշտությունը փրկել է անվերադարձ կորստից, ապա դրանք մաքրել, մշակել ու աշխարհին է մատուցել: Բայց այսօր, դժբախտաբար, փայլ տվող շողշողուն այդ մարգարիտները հաճախ փոխարինվում են ծեքծեքուն թուրքական եւ արաբական մեղեդիներով՝ համեմված երաժշտական անճաշակ կատարումներով, որոնք անհարիր են հայ մարդու հոգեկերտվածքին: Բայց չէ՞ որ Կոմիտասը մաքրել ու զտել է հայկական երաժշտությունը եւ թողել զուտ ազգայինը: Եվ ինչքա՞ն դիպուկ եւ իմաստուն էր նա, երբ ասում էր. «Երաժշտությունն ամենեն մաքուր հայելին է ցեղին, այն իր ցեղին ոգին է, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ» [10, էջ 118]: Պատմական այս երկու տիտանի միջեւ զուգահեռի անցկացումն ակնհայտ է դարձնում, որ հենց այս ցեղի մասին էր երազում Նժդեհը՝ այն ցեղի, որն ի վիճակի կլինի քաջությամբ եւ սիրով պահպանել մեր ազգային օրգանիզմի անբաժանելի մասը հանդիսացող ազգային մշակույթը, իսկ եթե վերջինս բացակայում է, ապա վրա կհասնի ազգի հոգեւոր մահը՝ դրանից բխող

աղետալի հետեւանքներով: Դարեր շարունակ մշակույթն է եղել մեր զարգացման կարեւորագույն ազդակն ու խորհրդանիշը:

Մեր հոգեւոր ու մշակութային արժեքները պահպանող լինելու է մեր երիտասարդությունը, բայց ինչպե՞ս պետք է արաբական եւ թուրքական երաժշտությունը նախընտրող երիտասարդն առանց աղավաղումների պահի մեր ազգային մշակույթը: Այստեղ ստիպված ենք կրկին հիշատակել Նժդեհի հետեւյալ խոսքերը. «Երիտասարդությունը - դա լեռներից իջնող ամեհի մի հեղեղ է, որ կարող է եւ՝ օրհնաբեր, եւ՝ ավերիչ լինել» [35, էջ 439]: Միեւնույն ժամանակ Նժդեհը զգուշացնում է, որ, սպանելով երաժշտությունն ու պոեզիան, մեր աշխարհը կդառնա խոզանոց: Ուրեմն՝ եկեք միահամուռ փորձենք դարձի բերել մեր հոգեւորը խոզանոցի վերածող մոլորյալ հայորդիներին ու հետեւենք մեծ հայորդուն, ով բոլորիս հորդորում էր մտածել հայերեն: Իսկ ի՞նչ է հայերեն մտածելը, եթե ոչ հայերեն՝ ստեղծագործելն ու արարելը: Ահա դրան է մեզ մղում մեր ազգի մեծերի, մասնավորապես՝ Մաշտոցի, Կոմիտասի, Նժդեհի գործի խորհուրդը:

Այսօր ծնողի, կրթողի, տնտեսավարողի, կառավարողի ու իշխողի գործառույթները ստանձնած մեր ավագ սերունդը պետք է ավելի մեծ նվիրմամբ իրականացնի իր վրա դրված ծանր, բայց, միաժամանակ՝ սուրբ պարտականությունը, որը նա կատարել է դարեր շարունակ, այն է՝ ծանոթացնել հայ երեխաներին եւ երիտասարդությանը համամարդկային, ազգային ու պետական արժեքներին ու դաստիարակել այն գիտակցությամբ, որ իրենք մեր ազգի ու պետության մասն են, հույսն ու ապագան, որ այդ հոգեբանությամբ էլ արժանավայել կերտեն իրենց ապագան Հայրենիքում, քանզի ժամանակները պարտադրում են նոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար պետք է ունենալ ազգային արժեքները գնահատող, պահպանող եւ ազգային բարոյականով առաջնորդվող առողջ սերունդ:

Ահա այսպիսին էր Նժդեհին իր ամբողջ կյանքում: Նժդեհը, ում, ինչպես վայել է իսկական իմաստունին, նյարդայնացնում էր ժամանակի զուր կորուստը, այն թանկագին ժամանակի, որը նա կարող էր ծառայեցնել իր Ազգի ու Հայրենիքի բարգավաճմանը: Նա մարդ էր, ով, չդավաճանելով իր փառահեղ սկզբունքներին, ո՛չ

է ասել ստրկությանը, մա'րդ, ում ուրախությունն ու վիշտը մեկ անուն են ունեցել՝ Չայաստա'ն:

Այսպիսով՝ հենց Ցեղակրոնության եւ Տարոնականության մեջ պարփակված գաղափարներն են, մեր համոզմամբ, այն ոգեղեն ուժերը, որոնց օգնությամբ պետք է առասպելական փյունիկի նման վերածնվի եւ մոխիրներից դուրս ժայթքի մեր Ազգային Ոգին՝ այն Ոգին, որ ներկա եւ ապագա սերունդներին պիտի առաջնորդի դեպի նոր սխրանքներ ու հաղթանակներ, քանզի չկա՝ եւ չի՝ կարող լինել հաղթանակ առանց Ցեղային Ոգու եւ Ցեղային Գիտակցության: *Վստահ եմ, որ մարդու կյանքն իմաստավորվում է, միայն եթե նա իր հոգու մեջ զգում է որեւէ բարձր բարոյական իղեալի եւ նպատակի ներկայությունը:* Այդ բարձր ազգային իղեալին հասնելու ճանապարհը մատնանշում է Նժդեհի ուսմունքը: Նժդեհյան գաղափարներով սնված եւ դրանցով առաջնորդվող սերունդը, վստահ եմ, կարող է դիմագրավել եւ հաղթահարել այն մարտահրավերները, որոնց առջեւ այսօր կանգնած է մեր Չայրենիքը: Չե'տ նայենք ու տեսնենք մեր հերոսականությամբ եւ ողբերգությամբ լի անցյալը, հե'տ նայենք ու իմաստավորենք մեր անցած ճանապարհը եւ է՛լ ավելի մեծ եռանդով լծվենք մեր Չայրենիքի համար արժանավայել ապագա կերտելու գործին:

Նժդեհը տեսնում էր վտանգված հայություն եւ փորձում օգնել նրան: Նա տեսնում էր հայ ազգի տառապանքները եւ աշխատում էր դրանք մեղմել, նա գիտեր փրկության ճանապարհն ու փորձում էր ուղղորդել իր ազգին: *Նժդեհյան գաղափարներն ու հիմնադրույթները հայ ազգի համար արժեքավոր են, քանզի արդիական են եղել, կան ու կլինեն եւ, վստահ եմ, իրենց խորհրդով հավիտենական են:* Դրանք ոչ միայն արդիական են, այլեւ անհրաժեշտ՝ մեր հասարակության ոգեպես ախտահարված հատվածն առողջացնելու, արատները բուժելու եւ սրբագործելու համար: Երբ խորքային ես ուսումնասիրում այդ գաղափարները եւ, անցյալից կտրելով, փորձում ես համադրել ներկայի հետ, դրանք իսկույն աշխուժանում են: Կարծես թե՝ Նժդեհը կենդանանում է եւ, տեսնելով մերօրյա հայ իրականությունը, փորձում մեր հասարակության մեջ արթնացնել իր Ոգին, որը, ի սկզբանե ստրկամտության, դավաճանության եւ նենգության դեմ պայքարելով՝ հայ

ժողովրդին ուղղորդել է դեպի հաղթանակ, ազատություն եւ լուսավորություն:

Մենք ինքներս պետք է կառուցենք, շենացնենք մեր պետությունը եւ լուսավորենք նրա ապագան: Մենք պետք է պահպանենք, հարստացնենք եւ փոխանցենք հաջորդ սերունդներին այն, ինչը մեր նախորդ սերունդները դարերի միջով հասցրել են մեզ: Մեր նպատակը պետք է լինի կառուցել սոցիալապես արդար, տնտեսապես հզոր եւ բնականոն զարգացման դինամիկայով օժտված պետություն, որն ի վիճակի կլինի իրականացնելու իր առջեւ դրված խնդիրները՝ ապահովել յուրաքանչյուր հայորդու եւ Չայաստան պետության արտաքին ու ներքին անվտանգությունը, սոցիալական բարեկեցությունը, օրենքի գերակայությունը, հայ ժողովրդի հոգեւոր եւ ֆիզիկական առողջությունը, նրա իրավունքների պաշտպանությունը, մեր արժեքների, ազգային դիմագծի պահպանությունը, մշակութային անվտանգությունը, հայրենապաշտական դաստիարակությունը, ազգային հասարակության ձեւավորումը եւ համազգային նպատակների իրականացումը: Եվ հենց այստեղ է հառնում Գարեգին Նժդեհի ուսմունքի արդիականությունը՝ ձգտելով իր թեւերը բացել ու տարածել ամբողջ հայ ազգի՝ իր ցեղի վրա, որի համար նա ծնվեց, ապրեց, ստեղծագործեց եւ մարտիրոսացավ՝ կրելով ճշմարիտ հայի կենսափիլիսոփայությունը, որի շարունակման արժանապատիվ ու սրբազան գործը մեր եւ ապագա սերունդների առաքելությունը պիտի դառնա: Եկեք վերցնենք այն դրոշը, որի վրա գրված է. «Գարեգին Նժդեհի ուսմունքը»: Եկեք առողջացնենք, սրբագրենք մեր իրականությունը՝ ճանապարհ հարթելով Նժդեհյան Ոգու համար: Նրա Ոգին պարտավոր ենք կենդանացնել եւ, ապրեցնելով մեր մեջ՝ ապրենք ու պայքարենք հանուն հայ ազգի բարօրության: Չակառակ դեպքում, ճշմարիտ արժեքները կորցնելով՝ կդառնանք հոգեւոր թզուկներ, ովքեր, արժեքներ ստեղծելու ունակությունից զուրկ՝ միայն նյութի եւ դրանից բխող վայելքների մասին են խորհում: Չիչենք նրա խոսքերը. «Իր ճակատագրի դարբինն է ամեն ժողովուրդ: Վաղ թե ուշ նա դառնում է այն, ինչ ուզում է լինել այսօր» [35, էջ 41]:

Անգնահատելի է Նժդեհի դերը հայոց նոր պատմության կերտման գործում: Նա մեզ թողեց Ղարաքիլիսայի հերոսականը՝

գոյամարտ, որը հայ դասական-արիական ոգու ներկայացում հանդիսացավ: Նա մեզ թողեց Ձանգեզուրը, որով եւ Հայաստանի Հանրապետությունն ապահովեց վերջնական մասնատումից եւ անդառնալի կորստից: Նա մեզ թողեց Ցեղակրոնությունը եւ Տարոնականությունը՝ որպէս ապրելու, ստեղծագործելու, պայքարելու, ազգերի բազմությունում պահպանվելու եւ հաղթանակելու արվեստ ու գաղափարախոսություն:

«Քաղաքական սուրբեր են նրանք, որոնք իրենց ուսերին՝ ի խնդիր իրենց ժողովրդի լավագոյն ապագայի՝ առնում են ծանր բեռ, քան մարդկօրէն կրել կարելի է: Նմաններին երիցս փառք» [33, էջ 372]: Նմաններից էր, անշուշտ, նաեւ Նժդեհը: Նա պայքարի մեջ մտավ դեռեւս պատանեկան տարիքից եւ լծվեց իր ազգի ազատության, անկախության ու լավագոյն ապագայի կերտման գործին: Ճշմարիտ հայ եւ հայրենասեր որակումները չեն կարող ամբողջացնել Նժդեհ երեւույթը: Նա մարդ էր, ում համար հայը, Հայրենիքը եղել են գերագոյն բարին: Նա նպատակի զինվոր էր, գաղափարական մարտիկ. «Ես իմ կյանքով հաստատեցի Հերոդոտոսի խոսքը. «Վտանգավոր է չափից ավելին ցանկանալ»: Ես ուզեցի, որ մեր ցեղի գոյության թշնամին հենց իմ օրով նստի իր հայրենիքի փլատակների վրա, եւ վայի՝ նախանձելու յոթնիցս անիրավված իմ ժողովրդի ճակատագրին» [35, էջ 273]:

Նա գաղափարի հերոս էր, ով վստահ էր, որ իր աճյունից շանթանման հերոսներ պետք է ծնվեն: Եվ ծնվեցին՝ հերոսները, արթնացավ ցեղը, ոտքի՝ կանգնեցրեց ազգը, ժողովուրդը. 1988թ. նախանշվեց հայ ժողովրդի կյանքում բեկումնային փոփոխությունների սկիզբը, որը երեք տարի անց հանգեցրեց մեր պետականության վերականգնմանը: Անկախությանը հաջորդեց Արցախյան գոյամարտը, եւ հայ ժողովրդի ծոցից, ցեղի կանչով, ծնվեցին նոր հերոսներ՝ Վազգեններ, Սոնթներ, Աշոտներ, Թաթուլներ, Արթուրներ: Եվ ինչքա՛ն ճշմարիտ էր Նժդեհը, երբ ասում էր, թե պատմական գործիչը պատկանում է ո՛չ միայն իր դարաշրջանին ու անցյալին, այլեւ՝ ապագային: Իբրեւ զարգացող ոգի՝ նա երեւան է գալիս բոլոր եկող-անցնող սերունդների մեջ, որով նա միշտ էլ անմահ է: Պատմական անձը քարեղեն արձան, քարացած էություն չէ, այլ՝ հավերժաշունչ ոգի: Եվ նա, որպէս ոգի՝ հայ կամավորների մեջ երեւան եկավ Սյունիքում, Տավուշում, Վայքում

եւ Հայաստանի այլ վայրերում սահմանները պաշտպանելիս, նրա ոգին երեւան եկավ Արցախն ազատագրելիս: Եվ իրականացան նրա գաղափարակից ընկերոջ՝ Հայկ Ասատրյանի խոսքերը. «...Հայ՛, տո՛ւր ցեղօրէն արթնացած մի սերունդ, զարկող ու զարկելով ստեղծագործող մի սերունդ, եւ պատմութիւնը քեզ պիտի վերադարձնի քո երկիրը» [8, էջ 54]: Եվ հայկական Արցախ աշխարհը վերադարձավ իր պատմական տերերին:

«Հերոսական գործերից ոչ նվազ ներշնչող է մահը հերոսական: Ապա ուրեմն, մեռիր այնպէս, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ: Ահա՛ իմ դավանած հայրենասիրությունը» [35, էջ 504]: Ահա սա՛ է Նժդեհի բարձրությունը, նրա պատմաստեղծ թռիչքը: Եվ նա իրականացրեց իր իսկ խոսքերը: Նա նահատակվեց համուն Հայրենիքի՝ դառնալով հայության սերունդների ոգեշնչման աղբյուր: Նրա հոգին բարձրացավ եւ միացավ հայ «մեծ մեռելների» փաղանգին՝ Մեսրոպ Մաշտոցին, Վարդան Մամիկոնյանին, Խորենացուն, Նարեկացուն, Րաֆֆուն, Կոմիտասին եւ մյուսներին: «Դու մի՛ վշտանար եւ մի՛ թախծիր. ինձ վիճակուած է եւ ես կը մեռնեմ իբրեւ նահատակ, ինչպէս մեռնում են մահը զգետնած անհատները» [23, էջ 405].- գրում էր նա եղբորը բոլշեիկյան բանտից: Նժդեհը նահատակվեց, բայց մնացին նրա գործը, ժառանգությունը եւ ոգին, որը մեզ պետք է առաջնորդի դեպի նոր բարձունքներ ու հաղթանակներ: Նժդեհը մեզ հետ է, նա չի՝ հեռացել: Լինենք Նժդեհաշունչ եւ ապրենք ու ստեղծագործենք հայկականորեն: Կերտենք լավագոյն ապագան մեր եւ մեր սերունդների համար: Մտավորական ու շինական, արիեստավոր ու պետական գործիչ՝ միահամուռ իրականացնենք մեր մեծերի երազանքը եւ կառուցենք մեր երազած երկիրը: ԱՐԹՆԱՑԻՐ, ՀԱՅ ՄԱՐԴ, ՀԱՅՐԵՆԻԹԸ ՍՊԱՍՈՒՄ Է ՄԵՁ:

** Ծան., սույն հոդվածում ամփոփված առանցքային դրույթները, գաղափարները տեղ են գտել հեղինակի վերջին տարիներին հրատարակած մի շարք գիտական, հրատարակախոսական աշխատանքների եւ նրա 2007թ. լույս տեսած՝ «Գարեգին Նժդեհի ուսմունքը եւ դրա արդիականությունը» ուսումնասիրության մեջ:*

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ազգային գիտակցություն», Եր., 2008թ.:
2. Աթոյան Վ., Ցեղակրոն շարժման պատմությունը, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», № 1 (4), Միջբուհական կոնսորցիումի գիտական պարբերական, Եր., 2009թ., էջ 152-161:
3. Աթոյան Վ., Հայրենասիրական դաստիարակության խնդիրները Գարեգին Նժդեհի աշխատանքներում, «Հայագիտական հանդես», № 2-3 (8-9), Եր., 2008թ., էջ 119-126:
4. Աթոյան Վ., Նժդեհյան գաղափարախոսության ընդհանուր նկարագիրը և դավանանքի բնույթը, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», № 1, Միջբուհական կոնսորցիումի գիտական պարբերական, Եր., 2008թ., էջ 155-165:
5. Աթոյան Վ., Տարոնական շարժման պատմությունը, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», № 3, Միջբուհական կոնսորցիումի գիտական պարբերական, Եր., 2008թ., էջ 156-162:
6. Աթոյան Վ., Գարեգին Նժդեհի տնտեսագիտական հայացքների շուրջ, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, № 1 (90) հունվար 2008, էջ 14-16:
7. Աթոյան Վ., Գարեգին Նժդեհի ուսմունքը և դրա արդիականությունը, Եր., 2007թ.:
8. Ասատրյան Հ., Հատընտիր, Եր., 2004թ.:
9. Աւո, Նժդեհ, Պէյրուք, 1968թ.:
10. Բաղիկյան Խ., Կոմիտասը՝ ինչպիսին եղել է, Եր., 2002թ.:
11. Բարսեղյան Ա., Ցեղակրոն շարժումը, Պոստոն, 1935թ.:
12. Բունիաթյան Ա., Նժդեհի վերադարձը, Եր., 2002թ.:
13. Գարեգին Նժդեհ – 115: Գիտաժողովի նյութեր, Եր., 2001թ.:
14. Գրիչենց Վ., Տարոն, Տարոնականություն և Հայոց բանակ, Եր., 2008թ.:
15. Երվանդյան Կ., Ցեղակրոնություն և տարոնականություն (Նորովի դաստիարակության հիմնախնդիրը), Եր., 2008թ.:
16. Ջարմունի Օ., Ցեղի հրամայականը, Եր., 2007թ.:
17. Ջաքարյան Ս., Գարեգին Նժդեհը հայոց հոգեբանական նկարագրի մասին, «Հոգեբանությունը և կյանքը», № 4, 2005թ., էջ 101-112:
18. Ջաքարյան Ս., Գարեգին Նժդեհ (փիլիսոփայական ճեպանկար), Եր., 2001թ.:

19. Լալայան Մ., Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ: Երկրորդ, լրացված և բարեփոխված հրատարակություն, Եր., 2008թ.:

20. Լալայան Մ., Ցեղակրոն և Տարոնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունեությունը, Եր., 2001թ.:

21. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, Ամբողջական կենսագրություն, 2007թ.:

22. Համբարձումեան Ռ., Հայոց ազգային ոսկեդարեան գաղափարախոսութեան՝ Մամիկոնէից ուխտի վերածնողն ու մշակը, «Էջմիածին» ամսագիր, Յունուար 2007թ., էջ 95-112:

23. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, Եր., 2005թ.:

24. Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհի գործունեութեան պարունակները և գաղափարախոսութեան մեկնակէտը, «Էջմիածին» ամսագիր, դեկտեմբեր 2001թ., էջ 85-95:

25. «Հայաստան», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, № 4 (6), Եր., 2005թ.:

26. «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն (սեպտեմբերի 26՝ № 6506, հոկտեմբերի 21՝ № 6526, դեկտեմբերի 8՝ № 6565, դեկտեմբերի 22, № 6577, ապրիլի 18 № 6371) 1933թ., սեպտեմբերի 13, 1963թ.:

27. Հովսեփյան Գ., Նժդեհյան ցեղակրոն գաղափարախոսության մասին, Եր., 2008թ.:

28. Ղազախեցյան Վ., Նժդեհը Ջանգեզուրում: 1920թ. վերջ – 1921 հուլիս, 2001թ.:

29. Ղեւնոյ, Պատմություն, Եր., 1982թ.:

30. Միրզոյան Վ., Գարեգին Նժդեհի կենսափիլիսոփայությունը, Եր., 2002թ.:

31. Միրզոյան Վ., Գարեգին Նժդեհը՝ հայ հոգու մարգարե, «Ղարծ», Բ տարի, թիվ 27, էջ 12-13:

32. Մուրադյան Վ., Գարեգին Նժդեհի տեղը հայ ժողովրդի պատմության մեջ, «Պայքար» ռամկավար ազատական գիտատեսական հասարակական քաղաքական մշակութային ամսագիր, էջ 21-25:

33. Նժդեհ Գարեգին, Հատընտիր, Եր., 2006թ.:

34. Նժդեհ Գարեգին, Գրական երկեր, Եր., 2003թ.:

35. Նժդեհ Գարեգին, Երկեր երկու հատորով, Հատոր 1, Եր., 2002թ.:

36. Նժդեհ Գարեգին, Երկեր երկու հատորով, Հատոր 2, Եր., 2002թ.:

37. Նժդեհ Գարեգին, Ազատ Սիւնիք, Պէյրուք, 1999թ.:

38. Նժդեհ Գարեգին, Լեոնահայաստանի գոյամարտը, Պէյրուք, 1999թ.:

ՆԺՂԵՅՅԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՅԺՄԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

39. Նժդեհի Գարեգին, Խուստուպյան կանչեր, Ձորաշարքային կանոնադրություն, Եր., 1992թ.:
40. Նժդեհի Գարեգին, Բաց նամակներ հայ մտաւորականութեան, Պէյրուս, 1929թ.:
41. Նժդեհյան իմաստաբանություն (Հողվածների ժողովածու: Նժդեհի տեսական ժառանգության իմաստավորման փորձ), Եր., 2006թ.:
42. Ոսկանյան Մ., Հոգեւոր Նժդեհը, Եր., 2008թ.:
43. «Չորրորդ իշխանություն», 15 XII, 2006թ.:
44. Պետրոսյան Ա., Գարեգին Նժդեհը եւ Քրիստոնեությունը, Եր., 2001թ.:
45. Սարգսյան Արամ, Նժդեհյան ցեղակրոնությունը որպես ազգային գաղափարախոսություն, «Բանբեր Երեւանի պետական տնտեսագիտական ինստիտուտի», № 1, Եր., 2006թ., էջ 51-61:
46. Սարգսյան Արմեն, Գ. Նժդեհի ցեղակրոն ուսմունքի եւ քրիստոնեության առնչության հիմնահարցը, «Միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ», Եր., 2006թ., էջ 119-135:
47. Սարգսյան Արմեն, Քաղաքականության եւ բարոյականության փոխհարաբերության նժդեհյան ըմբռնումը, "For the Sake of Justice", November-December, 2003, էջ 71-79:
48. Սեւան Ա., Բանտարկեալի մը յուշերը: Տառապանքի տարիներ Գ. Նժդեհի հետ, Եր., 2008թ.:
49. Սիմոնյան Ա., Չանգեզուրի գոյամարտը (1920-1921), Եր., 2000թ.:
50. Վարդանյան Ա., Նժդեհյան մասունքներ, Եր., 2001թ.:
51. Տոնոյեան Ա., Գարեգին Նժդեհ, Գլենդեյլ, ԱՄՆ, 2001թ.:
52. «Ցեղի պահպանման իմաստությունը», Եր., 2007թ.:
53. Бердяев Н., Философия свободы, М., 2004г.
54. Ковалевский П., Русский национализм и национальное воспитание в России, М., 2006.
55. Лалаян М., Религия родовой гордости, "Литературная Армения", № 10-12, 1995г., стр. 123-134.
56. Овсеян В., Гарегин Нжде и КГБ. Воспоминания разведчика, Ер., 2007.
57. Татевосян Э., Жизнь и деяния Гарегина Нжде. В борьбе с несправедливым веком, "Литературная Армения", № 10-12, 1995г., стр. 105-122.
58. Atamian S., The Armenian Community. The Historical Development of a Social and Ideological Conflict, New York, USA, 1955.
59. www.ayf.org:
60. www.stateregistry.am/Default/:
61. www.zvartnotc.am/dav/sects/Kron_kazm_tsank.pdf:

Պետք է նշել, որ մեր օրերում ասելով Գարեգին Նժդեհի ուսմունք՝ իբրեւ կանոն հասկանում են Ցեղակրոն եւ Տարոնական շարժումները, դրանք են ուսմունք անվանում: Այո, դրանք իրենց տեսակի մեջ վարդապետություններ են, եւ դա գալիս է նրանից, որ այստեղ Նժդեհին իր գաղափարներին առավել կազմակերպված, շարժումային բնույթ է հաղորդել՝ զուգակցված կոնկրետ հասարակական գործունեությամբ: Սակայն դա չի նշանակում, որ նրա մյուս աշխատությունները («Բաց նամակներ Հայ մտաւորականութեան», «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Ամերիկահայութիւնը – ցեղը եւ իր տականքը», «Ցեղի ոգու շարժը» եւ այլն) զուրկ են վարդապետական բնույթից: Դրանցում նույնպես առկա են կենսափիլիսոփայական մեկնություններ, աշխարհըմբռնման տեսանկյուններ եւ այլն... Ե՛վ Ցեղակրոնության, ե՛ւ Տարոնականության գաղափարական հիմնարար տարրերն իրենց սկզբնավորումը, խմորումն ու որոշակի հաստատումը ստացել են այս աշխատություններում: Այս ստեղծագործությունները խոր մտածումների հետեւանք են՝ կյանքի փորձով անցած: Այդ իսկ պատճառով դրանք ներկայանում են իբրեւ հիմնարար մեկնարկներ, որոնք արդի են նաեւ այսօր:

1924թ. Կահիրեում գրքույկի տեսքով տպագրվում է նրա հողվածաշարը՝ «Էջեր իմ Օրագրին» վերնագրով, որտեղ Նժդեհին իր մտորումներն է կիսում հայ երիտասարդության հետ, իսկ 1929թ. տպագրվում է նրա մեկ այլ գրքույկ՝ «Բաց նամակներ Հայ մտաւորականութեան» անվանումով: Այստեղ նա մեկնություններ է տալիս մեր մտավորականության տարբեր ոլորտներին, եւ եթե թերթենք այդ գրքի էջերը, ապա կտեսնենք, որ նրա ահագնագերը եւ զգուշավորության կոչերն առավել քան արդիական են մերօրյա իրականության համար: Ընթերցողի մոտ տպավորություն է

ստեղծվում, թե այս գրառումներն արձանագրվել են մեր օրերում: Այնքան համահունչ են նրա ահազանգած դողանջները, որ կարծես հայ իրականության որոշ գործնթացներ, որոնք իրենց զարգացումն էին սկսել նախորդ դարասկզբից սկսած, սառեցված լինեին սովետական իշխանության անազատության շրջանում, եւ հիմա դրանք նույնությամբ շարունակում են իրենց ընթացքը՝ սխալները կրկնելով: Քանի որ ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ այս երկու աշխատությունները որոշակիորեն կրկնում են միմյանց (երկրորդը՝ առաջինի առավել ընդարձակ, տեղ-տեղ փոփոխված, որոշ թեմաներով ավելացված տարբերակն է), ապա մենք այս երկուսը վերլուծության կենթարկենք միասնական տեսքով:

Ի՞նչ է գրում Նժդեհը:

Թեմաներից մեկը, որին նա անդրադառնում է, մամուլն է: Առանց նախաբանելու մեջ բերենք մի քանի նախադասություն. «Ժողովուրդը դաստիարակելու գործում մեծագույն դերը մամուլինն է: Սակայն, շատ չնչին դեր է կատարում այն մամուլը, որը հանդիսանում է իր ժողովրդի մտա-բարոյականի հայելին միայն ու ուրիշ ոչինչ: Քիչ արժեք ունեն այն թերթերը, որոնք հասարակութեան հրամցում են նրա սեփական մտա-բարոյական կեանքի պատկերը միայն: Առօրեայ անհամ անցքերի ու դեպքերի նկարագրութունը հրապարակախոսութունն է: Խօսքի լուսանկարչութուն պիտի չլինի մամուլը» [1]: Այս խոսքերից հետո անմիջապես փորձենք պատկերացնել մերօրյա մամուլը: Մամուլը, որը պետք է ազատ խոսքի լավագույն մարմնավորումներից մեկը լիներ, այսօր դարձել է դիմագուրկ, բացառապես կողմնակալ մի երեւույթ: Մարդիկ մեր օրերում թերթը չեն գնում ըստ նրա խոսքի ազատության, առաջ քաշվող գաղափարների, կամ անկողմնակալ տեղեկատվություն ստանալու համար, ո՛չ: Մարդիկ թերթի ընտրությունը կատարում են՝ կախված այն բանից, թե իրենք իրենց որ թիմի շարքերին են դասում: Եթե քաղաքացին իրեն ընդիմադիր է համարում, ապա գնում է այն թերթերը, որտեղ անընդհատ քննադատվում է գործող իշխանությունը, իսկ իշխանամետ լրատվության մասին ասում են. «սա էս ինչի (հնչեցնում են մի պաշտոնյայի անուն) պատվերն է կատարում»: Իսկ իշխանամետ թերթերը, որպես կանոն, ցանկացած ընդդիմադիր լրագրի տված տեղե-

կատվությունը որակում են իբրեւ զրպարտություն կամ էլ, լավագույն դեպքում, համեստորեն լռում են, եւ դու չես հասկանում, թե արդյոք հնարավոր էր այդ մեղադրանքներին հակափաստարկել, թե ոչ: Եվ ամենասարսափելին այն է, որ երկու բանակների ներկայացուցիչներն էլ կուրորեն հավատում են իրենց կողմի ճշմարտացիությանը եւ բացառում են հակառակ տարբերակի, զոնե լինելիության հնարավորությունը, եւ այստեղ հասարակությունը զրկվում է երեւույթների վերաբերյալ օբյեկտիվ պատկերացում ստանալու հնարավորությունից: Վերանում է օբյեկտիվ պատկերացումը, եւ արդյունքում առաջանում են հասարակության պառակտում, բեւեռվածություն: Ճիշտ է, տարբեր բանակներում գտնվելու կարգավիճակն ունի նաեւ քաղաքացու սուբյեկտիվ ախտորոշումներ, որը գալիս է անհատի խոր ենթագիտակցականում գտնվող շահադիտական ըմբռնումից, սակայն դա չի արդարացնում թերթերի բռնած դիրքորոշումը: Մեր թերթերում ընդհանրապես չկա գաղափար, չկա տեսական պայքար, փոխարենը կա տեսության միջոցով անձին հնարավորինս շատ վիրավորելու ցանկություն, անկախ նրանից, թե նա ինչ է գրում:

Բովանդակ չէ մեր մամուլը: Նույնիսկ ոչ քաղաքական թերթերում եւ ամսագրերում մենք տեսնում ենք մի անորակ փորձ լսարան գրավելու եւ հնարավորինս շատ տպաքանակ վաճառելու, ինչ գնով ուզում է լինի: Վերջերս մեր ամսագրերը փորձում են մի անմակարդակ մոտեցում որդեգրել, որը նմանակել են արտասահմանյան շոու-բիզնեսի ոլորտից, որտեղ մանրամասն ներկայացնելով ինչ-որ տխմար երգիչ-երգչուհիների անձնական, անբարոյական փոխհարաբերությունները՝ փորձում են հետաքրքրություն առաջացնել ընթերցող լսարանի շրջանակներում, եւ դա հասարակական միտքը բարձրացնելու փոխարեն էլ ավելի է տհասեցնում համընդհանուր ընկալման ցուցանիշը: Մինչդեռ որքան ճիշտ է Նժդեհը, երբ ասում է, որ ժողովրդի դաստիարակման հարցում ամենամեծ դերը մամուլինն է: Մեր օրերում մամուլից առավել ազդեցիկ լրատվամիջոց է հեռուստատեսությունը, որի օգնությամբ կառավարում են հասարակության լայն շերտերի գիտակցությունը: Երկրի բնակչությանը կառավարելու համար ամենադյուրին եւ արդյունավետ ճանապարհն է վերջինս:

Եթերը ողողել սին, անճաշակ, գռեհիկ հաղորդումներով, ցածրորակ հեռուստասերիալներով եւ ոչ կառուցողական բանավեճերով: Ահա այս ճանապարհով հասարակության լայն հատվածին զրկում են ինքնուրույն մտածելու հնարավորությունից, որի արդյունքում ունենք այն, ինչ ունենք:

«Այդ թերթերի բովանդակության չափ եւ ավելի զգուշի է իրենց բազարի լեզուն: Սրանց համար գոյութիւն չունի հրապարակախօսական էթիկան: Սրանց համար չի եւ գրչի մաքրութիւնը: Զգիտեմ, այդ թերթերի խմբագիրները գիտե՞ն թէ խօսքը - դա մարդու բարոյական շունչն է [...]»: Գիտնականներից շատերը, երբ փորձում են սահմանել «Ազգ» հասկացությունը շատ անգամ հանգում են այն մտքին, որ դա հենց լեզուն է (համեմայնդեպս, դրա բաղկացուցիչ մասերից խոշորագույնը): Իսկ ի՞նչ վիճակում է մեր լեզուն այսօր: Մեր թերթերն ու հեռուստատեսությունը, մեր հասարակությանը մաքուր լեզվամտածողություն թելադրելու փոխարեն, իրենք ընդօրինակեցին ժողովրդի մեջ տարածված ամենավատ ժարգոնային խոսակցականը, եւ նորահաս սերնդի համար, որն արդեն չի էլ լսել մաքուրը, սա ընկալվում է իբրեւ միակը, ճշմարիտը, ընդունելին... Զգո՛ւն լինենք. անդունդի եզրին ենք կանգնած...

Բայց Նժդեհը չի սահմանափակվում միայն հարցերն առաջ քաշելով: Նա չի շատախոսում, այլ փորձում է մատնանշել ճիշտ ուղին: Նա գտնում է, որ ժողովրդի հավաքական սիրտը, ինքնագիտակցությունը պետք է մշակեն լրագրերը: *«Քիչ խօսք, շատ օրինակ՝ ժողովրդասիրութեան, պարտաճանաչութեան, անձնւիրութեան: Առանց վեհ եւ հրահանգիչ օրինակների՝ չկայ դաստիարակութիւն»:* Եվ այդտեղ իսկ արդեն նա իր հարցերի պատասխանը փորձում է գտնել ցեղային փիլիսոփայական ընկալման սահմաններում (մի բան, որն առավելապէս կծեւավորվի Ցեղակրոն շարժման ընթացքում). *«Թող յաճախ նրանք բնութագրեն հայ ժողովրդի ընտիր որդիներին, որոնք իրենց կեանքով թէ մահով մի բան արելացրել են ազգ կոչելու մեր իրաւունքին»*, *«Թող մեր ցեղի հերոսականով ու մարտիրոսագորութեամբ յաճախ հիացմունքի ժամեր տան իրենց ընթերցողներին»:*

Կուսակցամոլությունը...

Փաստորեն, սա խնդիր էր, որն արդեն իսկ Նժդեհին անհանգստացնում էր սրանից գրեթէ մեկ դար առաջ... Բայց ի՞նչ կասեր նա, երբ տեսներ մերօրյա իրականությունը: Ինչպե՞ս նա կարձագանքեր, երբ տեսներ, որ այն, ինչի դեմ նա պայքարում էր, ոչ միայն չի մնացել իր տեղում, այլևս հասել է այնչափ ծաղրելի աստիճանի, որ նույնիսկ արսուրդի քատրոնում նմանօրինակ գեղագիտական թեժացումների չեն դիմում:

«Չկայ ավելի մեծ չարիք, արելի մեծ աղէտ ժողովրդի համար – մասնաւորապէս մեզ նման փոքրիկ ժողովրդի համար – քան կոյր կուսակցամոլութիւնը: Այդ տարամերժ ոգիի համար չկան բացարձակ ճշմարտութիւններ, նրա համար չկայ հասարակական շահ, պետական բարոյական: Նրա համար օտար է այն ամենը, ինչ որ իր կուսակցութեան կնիքը չի կրում: Ինչ որ իր կուսակցութեան ծնունդը չէ – անընդունելի է եւ անհանդուրժելի»:

Դեռեւս 19-րդ դարի վերջին հայ իրականության մեջ ասպարեզ եկան կուսակցությունները: Սկզբում դրանք Արմենակյաններն ու Զնչակյաններն էին: Դետո Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի եւ Ռոստոմ Զորյանի ջանքերով ստեղծվեց Դաշնակցությունը, որի անդամներն, ինչպէս գրում է Նժդեհը, *«ուզում էին իրականացնել Դաշնակցության հեղափոխական նախորդների՝ արմենակյանների ու հնչակյանների համատեղ գոյակցությունը, որոնց գործունեությունը կրում էր անջատ բնույթ: Նրանք փորձեցին ստեղծել հայ ժողովրդի՝ գոյություն ունեցող բոլոր ազատագրական ուժերի միություն: Սակայն դա չհաջողվեց, եւ, այդպիսով, Դաշնակցությունը, փոխարեն դառնալու հայ հեղափոխականների դաշնակցություն (միություն), մնաց որպէս հայ հեղափոխական դաշնակցություն»* [2]: Սա դեռեւս այն ժամանակ էր, երբ Զայաստանը բաժանված էր Արեւելյան (Ռուսական կայսրության ենթակայության տակ) եւ Արեւմտյան (Օսմանյան կայսրության ենթակայության տակ) մասերի, երբ Զայոց աշխարհը շատ ավելի մեծ հողատարածք էր զբաղեցնում, քան հիմա, երբ հայ մարդը բաժանվում էր ոչ միայն սփյուռքահայի եւ տեղաբնակի, այլ նաեւ այդ տեղաբնակներն էին բաժանվում ըստ երկու երկրամասի, երբ դեռ տեղի չէին ունեցել 20-րդ դարասկզբի եւ դարավերջի մեծ

արտագաղթերը: Եվ այն ժամանակ Նժդեհը շատ իրավացիորեն դժգոհում էր կուսակցությունների քանակից եւ գործելակերպից: Բայց ի՞նչ ցասում նա պետք է արտահայտած լիներ, երբ տեսներ, որ մոտ 29000 հա հողակտորի վրա, լավագույն դեպքում երեք միլիոն ազգաբնակչություն ունեցող երկրում մի քանի տարիների ընթացքում կուսակցամոլությունը համաճարակի պես տարածվել է, եւ նախկին վիճակագրություններից մեկում արձանագրվել է աբսուրդային մի թիվ, որում կուսակցությունների թիվն անցնում էր հարյուրից...

Բայց մի պահ մի կողմ թողնենք, թե այդ կուսակցություններն ինչ անհասկանալի գործունեությամբ են զբաղվում, ինչ մութ գործարքների համար են ստեղծվում եւ անհետանում, ում կողմից են ստեղծվում եւ այլն, եւ այլն... Փոխարենը մտովի պատկերացնենք *անընդհատ* աչքի առջեւ գործող քաղաքական գործիչներին եւ դրանց կուսակցությունները: Շատ չեն սխալվի, եթե ասեն, որ դրանց հիմնական գործառույթները կայանում են արտաքին մշտական իրարակերության մեջ: Մեջ բերենք Նժդեհի մի քանի դիպուկ նկարագրողական մտքեր այս մասին. «*ժողովրդի մի մասի անունից հայիոյել միւսին՝ հակառակորդին եւ տղայաբար ժխտել նրա գոյութեան իրաւունքը - դեռ չի նշանակում դաստիարակել իր շարքերը: [...] Ով օրն ի բուն զբաղւում է իր հակառակորդի թերութեանց քննադատութեամբ - նա առնւազն զիջումներ է կատարում իր սեփական յոռութիւնների հետ: [...] Այդպիսին կարող է եւ վնասել իր հակառակորդին, բայց ինքը ոչինչ կը շահի*»: Պատկերն էլ ավելի զավեշտալի է դառնում, երբ այսպես ասած հայիոյվողը, փոխելով իր ճամբարը, հանդուրժելի է դառնում հայիոյողի համար: Սոռացվում են բոլոր խոսքերը, «դավաճանի» պիտակավորումները եւ այլն... Նժդեհը բողոքում էր, որ մեզ նման փոքր ազգաբնակչություն ունեցող ժողովրդի մեջ չեն կարող լինել այդքան շատ գաղափարներ (կուսակցության տեսքով մարմնավորված): Հիմա մենք կերազեինք, որ գոնե խնդիրը կայանար գաղափարական տարածայնությունների մեջ: Ներկայացված օրինակը գալիս է ապացուցելու, որ այս կուսակցականները կարող են իրականում հետապնդել ցանկացած նպատակ, բացառությամբ մեկի՝ ազգային իղծերի իրականացման:

Առաջին հայացքից կարելի ենթադրել, թե այդ իրարակերությունը մի ոհմակախմբի պայքար է, որը կայանում է ներկլանային սահմաններում: Եվ թեթևամտության ակնթարթին կարելի է մտածել, թե դա մի գործընթաց է, որին կարելի է կողքից նայել, չխառնվել եւ թողնել, որ նրանք իրենց շրջապատի ներսում խաղան իրենց խաղի կանոններով: Բայց ո՛չ: Դա ուղղակի միանություն է: Սրանք նույնիսկ ավելի են շարժում հանրային կյանքը, քան մամուլը եւ, եթե ՁԼՄ-ները տարանջատումներ են մտցնում հասարակության մեջ, ապա դա գալիս է քաղաքական տարբեր հոսանքների գոյությունից: Բայց առկա է ավելի մեծ մի վտանգ: Ժողովուրդը, որքան էլ տարանջատված լինի տարբեր բանակների, իրական՝ արտաքին, վտանգների ժամանակ, որպես կանոն, միախմբվում է, իսկ քաղաքական վերնախավի իրարամերժ տարրերը նման պահերին մտածում են խորտակվող նավից գոնե վերջին տակառ գինին փախցնելու մասին: Համաշխարհային պատմության պրակտիկան ցույց է տվել, որ այդ գործելակերպից կործանվել են ոչ միայն առանձին երկրներ, այլեւ ամբողջ կայսրություններ: Իսկ ի՞նչ կկարողանանք անել մենք, երբ արտաքին վտանգը սպառնա մեզ պես սակավ հնարավորություն ունեցող երկրին...

«Եւ այդ ամենը միամտօրէն կոչում են ժողովրդասիրութիւն, երբ էապէս ժողովրդասպանութիւն է տեղի ունեցողը»:

Մշակույթ, եկեղեցի...

Դարեր շարունակ մենք երկու մեծ հենարան ենք ունեցել՝ ինքնապահպանման գործընթացն ապահովող: Մե՛կ մեր մշակույթն է եղել, եւ մե՛կ՝ մեր հավատքը: Չլիներ մեր լեզուն, մեր արվեստները, մենք վաղուց կկորցնեինք մեր ինքնատիպությունը եւ ինքներս մեզ դժվարությամբ կտարբերեինք տարածաշրջանի այլ սակավաթիվ ցեղատեսակներից: Մինչեւ Հայոց գրերի ստեղծումը, եթե Տրդատը չընդուներ քրիստոնեությունը, լինելով մեկ Ա-ի, մեկ էլ Բ-ի տիրապետության տակ, մենք աստիճանաբար կկորցնեինք մեր տարանջատելիության հնարավորությունը (այդ ժամանակ Արեւմուտքում Հռոմեական կայսրությունն էր տիրում, որի մշակույթին մենք բավական նմանություն ունեինք, իսկ

Արեւելքում պարսիկներն էին, որոնց որոշակի մոտ էինք, թե՛ կենդանացավարությամբ, թե՛ ֆիզիոլոգիայով):

Բայց բախտը մեզ ժպտաց, եւ մենք ուրույնացանք:

Մեզ մեր մշակույթը ոչ միայն հնարավորություն ընծեռեց չմիաձուլվելու հարեւան ազգերի հետ, ոչ միայն ինքնապահպանման միջոց հանդիսացավ, այլ նաեւ իր զարգացման լավագույն փուլերում ծնեց համամարդկային արժեքներ: Այսօր մեր երիտասարդությունը չի կարողանում արժեքավորել մշակույթ հասկացությունը: Չի պատկերացնում դրա դերակատարումը թե՛ մարդու հոգեկերտվածքի կայացման հարցում եւ թե՛ պետական մասշտաբների կարելուքայան համատեքստում: Ընդամենը մի քանի տարիների ընթացքում մենք դարձանք անժառանգունակ: Այսինքն՝ այն մեծ մշակութային ավանդույթները, արժեքները, որոնք սերնդեսերունդ փոխանցվում էին, հանկարծակիորեն ընդհատվեցին, կտրվեցին... Ինչպէս պատահեց, որ մենք հանկարծ անհաղորդ դարձանք մեծերի խոսքերին: Այսօրվա երիտասարդն անտեղյակ է, որ սրանից ընդամենը մի երկու տասնամյակ առաջ հայկական երաժշտությունը ծաղկունք էր ապրում, ինչի հնարավորությունը մեկ դար առաջ մեզ շնորհեց Կոմիտասը: Երկար ու ծիգ դարերի ընթացքում հայ մարդն ապրել է թուրքերի հետ կողք կողքի, սոցիալական եւ բարոյական անտանելի պայմաններում, բայցեւայնպէս տեղի չի տվել եւ հանուն սեփական անդորրության չի հրաժարվել իր ազգային կենսակերպից, եւ այժմ, երբ մենք ունենք անկախություն, երբ մենք տարանջատված ենք ուրիշներից մեր պետական սահմաններով, սկսել ենք մի գործընթաց, որը թուրքերին չհաջողվեց նույնիսկ սրի միջոցով իրագործել: Մենք թրքաւում ենք...

Ինչպէս հասկանալ այն փաստը, որ Խորհրդային Միության տարիներին, երբ տարատեսակ ճնշումներ էին գործադրվում, մեր ազգային երաժշտությունը նվաճեց համաշխարհային բարձունքները եւ ստեղծելով նոր՝ ազգային մտածողություն, կարողացավ տարբերակվել մյուս ժողովուրդների մշակութային հոսանքներից, ինչը զալիս էր ապացուցելու, որ հայ ազգը մշակութաստեղծ ժողովուրդ է: Եվ հիմա մենք ոչ միայն չենք շարունակում լավագույն ավանդույթները, այլեւ տարօրինակ խանդավառությամբ զբաղվում ենք մշակութաքանդ գործով: Մեր ազգաբնակչության

մի ստվար զանգված որդեգրել է թրքա-արաբական մշակույթը եւ ակտիվորեն զբաղված է դրա տարածման գործունեությամբ: Սա ազգաքանդ գործընթաց է: Խնդիրը բացարձակ լուրջ է, բայց քանի որ մեկ հողվածի սահմաններում անհնար եմ համարում այսչափ ճյուղավորումները, ապա կսահմանափակվեմ սթափեցնող մի մտքով: Մուղամային մտածելակերպ ունեցող ցեղի ձեռքերով կտտորված ժողովրդի մի ստվար զանգվածն այժմ այդ մուղամն անվանում է ազգային երաժշտություն:

Նույնպէս մենք կորցրել ենք հավատքը, հոգեւորը մեր մեջ: Դարեր առաջ եկեղեցին շատ վճռական դերակատարում է ունեցել մեր ազգի կայացման, ինքնապահպանման եւ զարգացման հարցում: Մենք տեսել ենք օրինակներ, երբ եկեղեցին կամ հոգեւորականները շատ ճակատագրական պահերի ավելի վճռական են եղել, քան ղեկավար այրերը, պետությունը կամ թագավորությունը: Իսկապէս, Յայ Առաքելական եկեղեցին մի բացառիկ առաքելություն էր կատարում հազարամյակից ավելի ձգվող ժամանակահատվածում: Նույնիսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո համընդհանուր «անաստվածության» տարիներին, մեր եկեղեցին պահպանում էր իր գոյությունը եւ նույնիսկ, կարելի է ասել, առաջադիմում էր որոշ հարցերում: Եվ այդ ամենը՝ միայն հմուտ առաջնորդների ջանքերի շնորհիվ:

«Մենք կ'ուզեինք էջմիածինը տեսնել նահատակ, քան կողմ, իսկ ամենասարսափելին՝ գործիք եւ այն էլ որի՞՞ դէմ - ազգայնական հայութեան: Դարերը պիտի չմոռանան այս փաստը: Կաթողիկոս կայ - բայց կաթողիկոսություն չկայ: Յայաստանում որոշ եկեղեցիներ կան - բայց եկեղեցին չկայ: Կան պատեր եւ զմբէք - բայց տաճար չկայ: Կան նուիրապետական աստիճաններ եւ տիտղոսներ - բայց հոգեւորականը չկայ: Կարձ՝ կա սրբաթափ եղած եկեղեցին իր կաշուապաշտ եկեղեցիականութեամբ» [3]: Գեթ մի բառ խմբագրելու կարիք չկա, այնքան համահունչ են մեր օրերում այս խոսքերը:

Այսօր հոգեւորականը հեղինակագրկվել է: Նրա խոսքը դադարել է լսելի լինելուց: Եվ կրկին նույն հարցն է առաջանում, թե ինչու, երբ մեզ հնարավորություն տրվեց, որ մեր հավատքն առավել ազատ մղենք առ Աստված (եւ դրանով իսկ բարոյականը

կարող էր առավել կայուն հաստատվել մեր կենցաղավարության մեջ), փոխարենը մենք ընկանք սանձարձակ ամենաթողության մեջ:

Մեր օրերում հոգեւորականի կերպարը կորցրել է իր պատկառելիությունը: Մարդկանց համար հոգեւորականը կնունք-հարսանիքի եւ թաղման արարողությունների ընթացքում մի ձանձրալի հատվածի դերակատարն է, որի խորհուրդը նրանց համար նույնիսկ արտաքին բնույթ էլ չի կրում: Խոր ուսումնասիրությունների արդյունքում միայն կարելի կլինի պարզել, թե որ կողմից է մեղավորությունը գալիս ժողովուրդ-եկեղեցի կապի բաժանման: Ազգաբնակչության³, եկեղեցականների⁴, թե՛ մեկ այլ՝ երրորդ կողմի: Կարծում եմ, բոլորն էլ իրենց մասնաբաժինն ունեն: Պարզ է մի բան. որքան մենք կորցնենք մեր հոգեւոր կայունությունը, որքան ցանցավորվի աղանդավորությունը, այնքան մենք ավելի կառավարելի եւ խոցելի կդառնանք...

1932թ. Սոֆիայում տպագրված «Ցեղի ոգու շարժը» աշխատության առաջին մասում Նժդեհը խոսում է հայ մեծանուն գրող եւ հասարակական գործիչ Ավետիս Ահարոնյանի մասին: Ահարոնյանին ձոնած տողերի միջոցով մենք կարող ենք հասկանալ Նժդեհի պատկերացումների մասին այն բանի շուրջ, թե ինչպիսին պետք է լինի գրողը (ուստի եւ արվեստագետն ընդհանրապես): Եվ ահա թե նույն աշխատանքում ինչպես է նկարագրում Նժդեհը կեղծ մտավորականությանը.

«Ի՞նչ արժէ հանճարը, երբ նրան կը պակասէ մեծ սիրտը, երբ իր ողիմպիական մեծութեան մէջ նա անկարելիոր է, անխռով, պաղ: Անարժէք չէ՞ դա, երբ իր խօսքն իշխանութիւն չունի հոգիների վրա եւ չի նպաստեր իր ժողովրդի հոգեւոր ինքնակառուցումին, երբ իր ցեղի ճակատագրի գերզգացողութիւնը չունի, եւ չի սնուցաներ իր ցեղի յաւիտենականութեան ձգտումը»⁴:

Նժդեհի այս գրառումներում մենք ոչ շատ խոր ենթատեքստում գտնվող՝ կարմիր թելով ընթացող մտքին ականատես կլինենք, որտեղ նա հորդորում է արվեստագետներին, մտավորականներին չկտրել կապը սեփական ժողովրդի, ցեղի հետ: «Միեւնոյն չէ՞, կայ թէ չկայ նմանը, երբ իր շրթունքներին ցեղի խօսքը չէ, ու չգիտէ վերադաստիարակել, արիացնել ու վարել գանգուածները. երբ անզօր է ինձ, ձեզ ու հազարներին

գինուորագրել տալ մի մեծ ու արդար դատի ու կարիքի դէպքում, իր ժողովրդի ժոցէն շանթանման հերոսներ քամել» [4]:

Վերն արդեն նշեցի, որ մեր երիտասարդության մշակութային ընկալումներն անընդունելի են, սակայն նույնչափ անընդունելի եւ անհասկանելի է ավագ սերնդի ներկայացուցիչների որդեգրած դիրքորոշումը:

Խորհրդային կառավարության վերջին երկու տասնամյակի ընթացքում մեր երկրում արդեն ձեւավորվել էր հստակ կրթամշակութային համակարգ, եւ հանկարծ, անկախացումից հետո, արդեն պատկառելի դիրքի եւ տարիքի հասած մտավորականությանը թելադրվեցին խաղի բոլորովին այլ կանոններ: Շատ ծանր, անցումային կացության մեջ հայտնվեցին գրեթե բոլորը: Հարցն այն է, որ այս բոլոր մշակույթի գործիչները կենսունակությունը պահպանելու համար պետք է քայլեին իրենց բարոյականի, խղճի վրայով: Երկընտրանքը սարսափելի էր. կամ շարունակել պահպանել սեփական մաքուր հոգեկերտվածքը, կամ գոյատեւման համար անցնել սեփական սկզբունքայնության, հեղինակության վրայով...

Պետք է ցավով նշենք, որ շատերը ճարահատյալ ընտրում էին երկրորդ տարբերակը, եւ դա համատարած բնույթ կրեց, ու նույնիսկ որոշակի սոցիալական բարելավումներից հետո մեր գործիչների գործելակերպը չփոխվեց. ավելին, սարսափելին այն է, որ դա արմատացել է իրենց մեջ եւ հիմա դա գալիք սերնդին իբրեւ օրինակ է ծառայում: Եվ արդյունքում ահա՛ թե ինչ ունենք մենք այժմ.

«Հայութիւնը դեռ հասկացողութիւն չունի այն չարիքի մասին, որ կոչուում է ստամտաւորականութիւն: Հայը սխալ է գործածում մտաւորական բառը, սխալ հասկանում՝ նրա իմաստը: Նրա համար մտաւորական է ամէն ուսեալ մարդ: Հէնց սրանում է նրա աղէտալի սխալը: Ուսում, կրթութիւն, գիտական պաշար - անհրաժեշտ են սրանք, բայց դեռ բաւական չեն մէկին ճշմարիտ մտաւորական դարձնելու: [...]

Ճշմարիտ մտաւորականը նա է, որ իր մտաւոր կարողութեան, ամէն բանից առաջ, միացնում է խորապէս բարոյական նկարագիր, բարձր գաղափարականութիւն, ստեղծագործելու - նոր խտէւներ, արժէքներ, կեանքի ձեւեր ստեղծելու ընդունակութիւն, սրբազանի

զգացում, տեսական խղճմտանք, հոգեւոր արիութիւն, ժողովուրդն իր ամբողջութեան մէջ սիրելու, նրա համար տառապելու անսահման կարողութիւն:

[...] *Նրա համար գոյութիւն ունի ամբողջութիւնը - ազգը, որին անշահասիրաբար կը ծառայէ: Եշմարիտ մտաւորականութիւնը, որի գործը անընդհատելի է ազգի կեանքում - այն հոգեւոր ոյժն է, առանց որի ժողովուրդ անւան տակ ամբոխներ կ'ապրեն, առանց որի ազգութիւն չի ստեղծուի: Յանձին սերունդների՝ մտաւորականութիւնները օրգանապէս չեն կտրուում իրարից, չեն ժխտում, այլ հարստացնում են, կատարելագործում իրար: Այդ տեսակէտից Եշմարիտ մտաւորականութեան ստեղծագործութիւնը կրում է յաւիտենականի կնիք: Եշմարիտ մտաւորականներից գուրկ չէ հայութիւնը, բայց զրկւած է նրանից օգտւելու կարելիութիւնից» [5]:*

Մտավորականի դերը ցանկացած հասարակությունում ահեղ է: Եթե նկատի ունենանք կրթական համակարգի աշխատակիցներին, ապա պարզ է դառնում, որ սերունդներ դաստիարակելու հույժ կարելու առաքելությունը նրանց ուսերին է եւ որ դպրոցից սկսած պետք է արմատախիլ անել արմատացած պիղծ գործելակերպը: Նախ պետք է լավ պայմաններ ստեղծել ուսուցիչների համար, բայցեւայնպէս, համակարգը պղծողների հանդեպ կիրառել լուրջ պատժամիջոցներ: Մեր երեխաները կաշառակերության հետ բախվում են հենց առաջին դասարանից, երբ դեռ աշխարհը կրկնօրինակելու նրանց տարիքային շրջանն է: Ել ավելի պատասխանատու եւ ծավալուն է արվեստի գործիչների աշխատանքը: Նրանք պետք է մշտապէս զբաղված լինեն հասարակության մտային մակարդակն ավելի ու ավելի բարձր սանդղակի հասցնելու հույժ կարելու գործով, նրանք պետք է մարդկանց մղեն հոգեփոխման, ստիպեն, որ նրանք ձգտեն կատարյալին: Մտավորականի ուսերին պետք է մշտապէս լինի ժողովրդին կողմնորոշելու, դիրքորոշելու առաքելությունը: Նրանք պետք է կարծիք հայտնեն: Ցանկացած իրադարձություն, թե՛ երկրի ներսում եւ թե՛ աշխարհում տեղի ունեցող, անմիջապէս պետք է ենթարկվի մտավորականների վերլուծությանը, ինչը պետք է հնարավորություն ընձեռի ազգաբնակչությանը ճիշտ դատել աշխարհի անցքերը:

Բայց այդպիսին չէ այսօրվա մեր մտավորականը: Նա իր գաղափարները հարմարեցնում է սեփական բարեկեցությանը: Կուսակցամուլի պէս ճիշտը դիտարկում է թելադրված միակ դիտանկյունից: Նա դադարել է ազգի խիղճը լինելուց... Կան, իհարկե, առանձին անհատներ, որոնք դեմ են իրերի նման դրությանը, եւ վերջիններիս հանցանքը սահմանափակվում է լռությամբ: Բարոյական ժառանգունակությունը կորցնելու պատճառով մեր մտավորականությունը դիմազրկվեց, եւ այդ սուրբ գործի առաքելությունը ստանձնեց ստամտավորականը:

«Անզիղջ է հայ ստամտաւորականը. ի զուր անցան Ալիշանի ու Ռաֆֆիի, Ահարոնեանի ու Վարուժանի եւ այլոց դիւցազնաշունչ ցեղականչերը, նրա համար անմատչելի մնացին հերոսականի բարձունքները: Նա չսիրեց վտանգը, փախաւ հերոսներ կրթող ազնւական վտանգից եւ իր երկչոտութեամբ՝ յաճախ վտանգեց իր ժողովրդի ապագան: Երէկ պարտուողական էր, այսօր, նաեւ երկչոտութեան քարոզիչ: Նրա համար՝ հերոսը արկածախնդիր է, իղեպիստը՝ տխմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ:»

Քաղաքացիօրէն անարի է նա, զգւելիօրէն անարի. նրան, անգամ պաշտօնապէս չէ կարելի տեսնել արդարների ու լաւերի կողքին: Եւ այդ է պատճառը, որ այսօր հայ իրականութեան մէջ, ամէն քայլափոխում վատութիւնն է դարանակալել, որ աղւէտները առիւծներ են խեղդում, սինլքորները՝ Յիսուսներ են խաչում» [5]:

Մի՞թե մենք այսքան անփոփոխ ենք...

Աշխարհաքաղաքական ընկալումներ.

Նժդեհի ցանկացած աշխատություն, գործունեություն, փիլիսոփայական ուսմունք ստեղծված է գեթ մեկ գերնպատակի համար՝ տեսնել հայրենիքը ավելի շենացած, զորեղացած եւ անկոտրում: Նրա տեսական ժառանգության մեջ լի են էջեր, որտեղ ուզում է հայ մարդուն տեսնել հոգեփոխված, կատարելագործված եւ դրա շնորհիվ ստեղծել առավել գիտակցված հասարակություն:

Ցանկացած երեւոյթի, որը կարող է սպառնալիք թվալ Յայոց պետականության կայացման համար, Նժդեհն անպայման անդրադառնում է: Դրանցից մի քանիսը նա արդեն նշում է «Էջեր իմ Օրագրէն» գրքույկի «Վտանգաւոր մոլորութիւններ» գլխում:

«Տգիտություն, եսականություն եւ աշխարհաքաղաքացիություն
- ահա երեքը հայրենասիրութեան թշնամիներից:

Առաջինի մասին պիտի չխօսեն:

Կոյրը մեղաւոր չէ, որ չի տեսնում:

Ստաւոր կուրություն է տգիտությունը:

Չզուլի է եսասէրը: Նա թշնամին է իր նմաններին, իր հասարակութեան, մարդկութեան: [...] Նա անիշխանական է, որովհետեւ իրաւունքներ ունի՝ առանց պարտականութիւններին: [...] Իր յանցաւոր եսի մէջ փակւած, ինչպէս խխունջն իր պատեանի մէջ, նա արհամարհում է եւ հեզնում այն ամէնը, ինչ որ հենց այժմ անձնապէս չի շահեցնում, չի պարարտացնում»:

Ինչպիսի դիպուկ խոսքեր...

Շատ չեն ուզում այս մտքի վրա օրինակներ վատնել, քանզի ընդամենը ուշադրության շատ փոքր լարում է հարկավոր տեսնելու համար, թե որքան է եսականությունը տիրում մեր շրջապատում: Վաճառել, փշրել, աղավաղել, տկարացնել, խաբել, շահագործել, սպանել, բարոյագրկել... ամեն ինչ անել, միայն թե ընծեմված հնարավորության դեպքում, սեփական «Ես»-ի շահի համար նույնիսկ ոչինչը դիզել ամենի գնով: «Ինծանից հետո՝ թեկուզ ջրիեղեղ» - ահա սա է մերօրյա հետընթացի բանալին:

«Ղա [եսասէրը] յաճախ փորձում է իր հոգու այլանդակությունները քողարկել այս կամ այն մոլար տեսութեամբ, այս կամ այն ուռուցիկ եւ գեղեցիկ խօսքով: Բայց, ի գո~ւր աշխատանք, նրա կեանքը, նրա բարոյական վարքագիծը գալիս է մատնելու իրէջը մարդու պատկերով»:

Չետաքքիւր մի միտում կա: 20-րդ դարասկզբին արդեն թափ էր առել գլոբալացման գաղափարը: Աշխարհըմբռնման այդ մոտեցումը շատ է անհանգստացրել հայ մտավորականությանը: Անմասն չի մնացել նաեւ Նժդեհը:

Ուշագրավն այն է, որ համամարդկային համակեցության գաղափարը սրանից մեկ դար առաջ էր սավառնում երկրագնդի վրայով, եւ դրա հետագա վերջնակետը այդպէս էլ պարզ չդարձավ: Աշխարհի գործընթացներն արագացել են, բայց ի հակադրություն դրա՝ համընդհանրացման ընթացքը ոչ իր վախճանն է ապրել, ոչ էլ վերջնական հասարակարգային հաստատումը: Այդ

իսկ պատճառով, այս թեմայի վերաբերյալ բոլոր գրվածքները նույնությամբ հետաքրքրական են առ ասյօր:

Այդ մասին Նժդեհը գրում է.

«Չայրենիքի ու հայրենասիրութեան թշնամին աշխարհաքաղաքացին է՝ կոսմոպոլիտը:

Սրա հայրենիքը, իր յայտարարութեամբ, համայն աշխարհն է, ազգը՝ համայն մարդկությունը:

Չկան ազգեր, կայ մարդկությունը,- ասում է այդ միամիտ երազատեսը եւ հայեացքն ուղղում դէպ անորոշ հեռուները»:

Նժդեհը երբեք չի հերքել համամարդկային հարաբերությունները, մարդասիրությունը: Ավելին՝ նա հորդորում է ազգամիջյան եղբայրություն, նա հորդորում է օգնության հասնել իր նմաններին: Բայց դրա հետ մեկտեղ առաջ է քաշում մի շատ տրամաբանական հարց՝ գրելով՝ «Բայց մի՞թե մեր դէպ մարդկությունն ունեցած սէրը ազատում է մեզ եւ մեր ժողովուրդը սիրելուց, հայրենասէր լինելուց: Մերը պիտի չսիրե՞լ, որովհետեւ պէտք է սիրել եւ օտարի՞նը: Մի մասը պիտի չսիրե՞լ, որովհետեւ սիրում ենք ամբողջութի՞ւնը»:

Նժդեհը կարծում է, որ այս «մոլար վարդապետությունը» լրջորեն կաղում է. «Նրան պակասում են տրամաբանությունը եւ բարոյականությունը»:

Եվ իսկապէս՝ արդեն դարից ավելի է անցել մարդկային այդ մտածողության ծնունդից, բայց մինչ այժմ դրա մի շարք հիմնարար կետեր մշուշով են պատված, եւ այժմ մենք հակիրճ անդրադարձով կարող ենք դրանում հանգզվել ընդամենը մի քանի խնդիրներ առաջ քաշելով:

Կետերից մեկը մշակույթն է: Վերջին շրջանում կարծես հենց գլոբալիստների կողմից ժխտման միտում է նկատվում համընդհանուր մարդկային մշակույթի գաղափարից, եւ դա տրամաբանական է, քանզի այդպիսի մի անտրամաբանական վարկածը պէտք էր մի օր իրեն սպառեր: Բայցեւայնպէս, քանի դեռ թեման ակտիվ է՝ կարճ ակնարկով տեսնենք, թե արդյոք մնան բան հնարավոր է:

Չնարավորության վարկածը մի փոքր հետաձգելով՝ տեսնենք արդյոք դա ցանկալի է, թե ոչ: Ընդհանրապէս կյանքը բաղկացած է տարբերություններից, իսկ արվեստն առավելապէս հենց հերքումի, վերահաստատումի եւ հակադրումի միջոցով է, որ ապա-

հովում է նման բազմերանգություն եւ զարգացման այս ընթացքում գրանցում նորանոր մարդկային նվաճումներ: Իսկ հակադրումն առավել ամբողջական է դառնում տարբեր ազգային դպրոցների առկայությամբ: Մարդիկ մշտապես փնտրել են նորը: Արդեն 20-րդ դարասկզբին քաղաքակիրթ եվրոպայի արվեստասեր զանգվածները փնտրտուքներ սկսեցին տարբեր աշխարհամասերի խուլ անկյուններում՝ այլատեսակ ազգային մշակույթների հայտնաբերման ակնկալիքով: Եվ այսքանից հետո ասել, որ այս բազմազանությունը պետք է աստիճանաբար փոխարինել համընդհանուր միատեսակությամբ՝ առնվազն պարզունակ եմ համարում:

Հիմա տեսնենք, թե, այնուամենայնիվ, ցանկության դեպքում նման բան հնարավոր է, թե ոչ: Եթե մենք որոշենք, որ ի վերջո ուզում ենք մշակութային բազմազանությունը փոխարինել միօրինակությամբ, ապա ինչպե՞ս դա պետք է իրագործվի: Տեսականորեն ես երկու տարբերակ եմ տեսնում: Առաջինի դեպքում բոլոր ազգությունների համընդհանուր ճիգերով պետք է ստեղծվի մի նոր՝ դիմազուրկ արվեստ (ասենք՝ երաժշտություն): Ինչո՞ւ դիմազուրկ, որովհետեւ, եթե, օրինակ, ճապոնացին հորինի որոշակի բնույթ ունեցող մեղեդային դարձվածք, ապա դա արդեն կունենա որոշակի ինքնատիպություն (կտարանջատվի մյուսներից), ու քանի որ այդ ինքնատիպությունը կպատկանի ճապոն ազգի հեղինակի, այն արդեն զոնե որոշակիորեն կդառնա ազգային (իսկ եթե հաշվի առնենք, որ արվեստը չի կարող ունենալ ստեղծագործության ընդամենը մեկ նմուշ, եւ տարբերակվելու համար նյութը պետք է ձեւափոխվի, բարդանա, ուստի հետագայում այն կդառնա նաեւ խո՞ր ազգային): Ուստի նման համամարդկային (ոչ մի ազգի համար տիպական) արվեստ ստեղծելու համար պետք է, որ այն դիմազուրկ լինի: Այստեղ մենք գործ ունենք մի ինչ-որ մեխանիզացված, կոնստրուկտիվ (կոնստրուկցիան իբրեւ բովանդակություն) համակարգի հետ, որն էլ հենց կապահովի այդ դիմազուրկությունը: Բայց պետք չէ այլեւս շարունակել, քանզի ավելորդ եմ համարում նշել, որ մեխանիկականը արվեստ չէ՛, դիմազուրկված ստեղծագործությունը արվեստ չէ՛:

Երկրորդ տարբերակն այն է, որ բոլոր ազգերի մշակութային մտածողությունը բերվում-նույնացվում է մեկ, արդեն հաստատված, մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող երկրի

մշակույթին (կոպիտ ասած, ասենք միայն գերմանական երաժշտություն), որն արդեն բոլորինը կլինի: Սա եւս անհեթեթ տարբերակ է, քանզի հնարավոր չէ պատկերացնել մի սկզբունք, ըստ որի՝ կարելի կլինի կողմնորոշվել, թե որ ազգի մտածողությունը որդեգրել ամբողջ աշխարհի համար: Ու եթե նման որոշում ինչ-որ կերպ ընդունվի էլ, միեւնույն է, այն դատապարված է անհաջողության, քանզի մարդն ընդվզող էակ է եւ պատմության ընթացքում միշտ պայքարել է սեփական տեսակի պահպանման համար: Գուցեւ գտնվի մի ազգ, որը կծգտի, որ ամբողջ աշխարհում իր մշակույթը տիրի, բայց չի գտնվի գեթ մեկը, որը ցանկանա իրենը զոհաբերել ի շահ մեկ ուրիշի: Սա կարող է նոր հակամարտությունների առիթ հանդիսանալ, իսկ գլոբալացման հեղինակների նկատառումներում (զոնե արտաքուստ), կարծում եմ, մարդասիրությունն է եղել, այլ ոչ թե պատերազմները:

Գլոբալացման վերջնական ձեւակերպման, հաստատման դեպքում մյուս վիճելի հարցերն աշխարհաքաղաքական դասավորություններն են: Այստեղ խնդիրն ավելի բարդ է, քանի որ մենք գործ ունենք ոչ թե տրամաբանական, այլ առաջին հերթին շահադիտական սկզբունքների հետ, քանի որ նոր հասարակարգի հաստատումը պետք է միտված լինի մարդկության սոցիալական համընդհանուր վիճակի բարելավմանը, եւ եթե ենթադրենք, որ այս մոդելը դրա հնարավորությունը տալիս է, ապա կարծես թե պետք է կողմ լինել նման պրոցեսների: Այս դեպքում պետք է աշխարհաքաղաքացիությունն ընդունել միմիայն տնտեսական եւ քաղաքական ընկալումների սահմանում եւ ոչ մի դեպքում ներցեղային կենցաղավարության, ապրելակերպի, տեսակի համատեքստում:

Գլոբալացումը բարդ քննարկումների առարկա է, եզրափակեմ զգուշավորության մի կոչով:

Եթե ընդունենք, որ մի քանի տասնամյակ հետո գլոբալացումը կարող է ամբողջ երկրով վերջնական հաստատում ունենալ, ապա չպետք է մոռանալ, որ ցանկացած դասակարգ, ցանկացած հասարակարգ ենթակա է փոփոխման, վերացման, աշխարհի ընթացքն է այդպիսին, ուստի պետք է զգոն լինել, քանզի երբ, ենթադրենք, մեկ դար հետո եվրոպական կամ ամերիկյան բարձր ատյաններից կսկսեն բարձր ճառեր հնչել աշխարհաքաղաքացիության դեմ եւ մի որոշ ժամանակ էլ անց այդ կառույցը

կփլուզվի, ո՛չ գերմանացին, ո՛չ ֆրանսիացին, ո՛չ էլ անգլիացին առանձնապես չեն տուժի: Ավելի՛ն, նրանք հավանաբար իրենց ցանկացած ոլորտներում (տնտեսական, քաղաքական, ռազմական եւ այլն) ձեռք կբերեն այն, ինչ ուզում էին, ինչի համար էլ եւ սկսել են այս ընթացքը: Իսկ մեր նման փոքրաթիվ եւ քաղաքականապես թույլ ազգերը զոհ կզնան տարալուծության:

«Աշխարհաքաղաքացին իրապես սիրում է - եթե սիրում է - ոչ այս, ոչ այն, այլ մի մեծ քիմերա, մի ոչնչութիւն»- գրում է Նժդեհը, - Օառայելով իր ազգին, հայրենասէրը, անուղղակի կերպով ծառայում է եւ մարդկութեան: Նոյնը չի կարելի ասել աշխարհաքաղաքացու մասին: Մարդկութիւնն իրենց չի ներկայացնում մի կազմակերպած միութիւն, ինչպիսին է ազգը, որպէսզի նրա նկատմամբ կարողանանք որոշել մեր անելիքը, մեր պարտականութիւնները: Մեզնից որոշ եւ կօնկրետ զոհողութիւններ պահանջում է ազգը, որը եւ մեզ բարոյապես կապում է մարդկութեան հետ, յարաբերութեան դնում նրա հետ» (ընդգծումը իմն է - Ա.Բ.):

Ինքնապաշտպանությունը.

Նժդեհի տեսական ժառանգության մեջ մեծ տեղ է զբաղեցնում ինքնապաշտպանության թեմայի արծարծումը: Նա երիտասարդ տարիքից եղել է ազատագրական շարժման թոհուրոհում: Մինչ 1918թ. մասնակցել է տարբեր հայդուկական մարտերի: Նույն թվականին մասնակցել է անչափ վճռական Ղարաքիլիսայի ճակատամարտին, ինչից հետո տեղափոխվել է Սյունյաց աշխարհի եւ մոտ երկու տարի, առանց որեւէ արտաքին աջակցության, իր ուսերին է կրել հայկական այդ աշխարհամասի պահպանման առաքելությունը: Պետք է նշել մի հետաքրքիր փաստ. եթե, օրինակ, Անդրանիկը Առաջին հանրապետության օրերին ծայրաստիճան զայրույթ դրսեւորեց (ոչ առանց հիմունքների) դաշնակցական եւ ընդհանրապես կառավարական տարրերի հանդեպ եւ խռովության պահին լքեց Հայաստանը, եթե Բաշ-Ապարանում իրեն այդպես խիզախորեն դրսեւորած Դրոն այնուհետեւ սկսեց ոչ համապատասխան գործողությունների գնալ եւ աչքի զարնել իր անիմաստ ծայրահեղությամբ, ապա Նժդեհն աչք փակեց ամեն ինչի վրա եւ զրկանքների ճանապարհով շարունակեց ծառայել հանուն իր հայրենիքի շահերի եւ երբեք չմեղանչեց այդ սրբազույն

գործի հանդեպ: Այդ իսկ պատճառով նրա գրառումներն ունեն բացառիկ նշանակություն, քանզի դա մի մարդու մտքի թելադրանք է, ով թոժվել է կյանքի ամենածանր պայմաններում, եւ նրա բոլոր հորդորներն ազգապահպան գաղափարների զուտ իդեալիստական կամ ուտոպիստական գրչի կամակորության հետեւանքներ չեն: Այսինքն, երբ նա ասում է, որ պետք է հույսդ դնես սեփական ուժերի վրա, այլ ոչ թե փրկություն սպասես դրսից, ուրեմն պետք է հասկանալ, որ սրանք մի մարդու խոսքեր են, ով նման կյանքի բանաձեւը կիրառության է ենթարկել առօրյա կյանքում եւ միայն կարելիությունը գիտակցելուց հետո հռետորախոսել է այդ մասին, այլ ոչ թե անհիմն հողի վրա զուր էջեր վատնել՝ արիության կոչեր անելով:

Իհարկե, ինքնապաշտպանություն ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք ֆիզիկական գործողությունների ծրագիրը, սակայն Նժդեհը ռազմական հաջողությունն առաջին հերթին տեսնում էր մարդու հոգու զորեղացման համատեքստում: Ռազմական հաղթանակներն իբրեւ ոգու արիության անմիջական հետեւանք: Հաղթանակը սկզբում մտքում է ծնվում եւ հետո նոր մարմնավորում ստանում պայքարի դաշտում:

«Եթե Հայաստանի աշխարհագրական դժբախտ դիրքի եւ նրա փոքրիկ ծաւալի հետ հաշւի առնէք նաեւ մեր ժողովրդի քանակը, նրա հատածականութիւնը, նրա քաղաքական իղէալը, նրա եւ իր իսլամ հարեւանների փոխյարաբերութեանց առանձնայատկութիւնը, ձեզ համար իր բովանդակ սպառնալիութեամբ կը պարզւի մեր ժողովրդի վտանգած ապագան»:

Օանօթ վիճակի մէջ հայ ժողովուրդը իր արդի հոգեկան կառուցածքով կարող է իր գոյութիւնը հրաշքով պահել: Այդ դրութեան մէջ վտանգված է նրա ապագան: Բայց եւ այնպէս նա ուզում է ապրել որպէս ազգ եւ պիտ ապրի:

[...] Չկորչելու համար, մեր դարը եւ մեր աշխարհագրական դիրքն ու ծանօթ դժբախտ պայմանները, որոնց մէջ ապրում է մեր ժողովուրդը, պահանջում են լինել ուժեղ, էլի ուժեղ եւ միշտ ուժեղ:

Ապրե՛լ ենք ուզում՝ լինենք ուժեղ ազգովին:

Լինենք ուժեղ, ուժեղ ազգովին. ահա՛ հրամայականը:

Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիությունը առ ոչինչ դարձնի մեզ ծանօթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանութեան գործը»:

Պատասխանը.

Ինքնապաշտպանության առաջին քայլը Նժդեհը տեսնում է ազգաբանոցի երեւոյթների մատնանշման, քննադատության մեջ, ինչով եւ զբաղվում էր ամբողջ կյանքի ընթացքում: Չուր չէ նա «Բաց նամակների» սկզբում գրում, թե. «*Քննադատել – հոգեպէս տառապել է նշանակում*»: Եվ ինչպէս նա լրագրողներին էր հորդորում, որպէսզի զբաղվեն ստեղծագործ, մաքուր քննադատությամբ, այնպէս էլ ինքն իր ամբողջ կյանքի ընթացքում շատ զգուշավոր, բայցեւ կոնկրետացված էր գործում այս ասպարեզում:

Ինքնապաշտպանությունը գործողությունների այն ծեւաչափն է, որով պետք է առաջնորդվել: Դա ծրագրային գաղափարների իրականացման հայեցակարգն է:

Բայց ինչի՞ միջոցով է ինքնապաշտպանության կայացման հնարավորություն ընծեռվում, եւ հանուն ինչի՞ է այն իրականացվում:

Թե՛ առաջին, թե՛ երկրորդ հարցերի պատասխանը՝ ցեղն է:

Ցեղի ներուժով՝ հանուն ցեղի ապագայի:

Դեռեւս նրա ամենաառաջին աշխատություններում մենք հանդիպում ենք ցեղի, ցեղային պաշտամունքի գաղափարական տարրերին: Պետք է կարծել, որ դա նրա գլխում ծնվել էր շատ վաղուց եւ աստիճանաբար մտքի շարադրանքով եւ խմորումով հասունացել ուսմունքի աստիճանի:

Հայ գաղթօջախներում պառակտվածություն էր նկատվում, երիտասարդության մեջ սեփական արմատներից կտրվելու, ինչպէս նաեւ անզաղափարականության միտում էր նկատվում: Հայ ազգը ենթակա էր տարալուծման, եւ դրա դեմը պետք էր առնել: Եվ ահա այստեղ է, որ Նժդեհը 30-ականների սկզբին մեկնելով Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ հիմնում է Ցեղակրոն շարժումը: 1934թ. ամռանը, Բոստոնում բացվեց Ցեղակրոն Ուխտերի առաջին համագումարը: Այն զերծ էր կուսակցական որելէ կողմնորոշումից, եւ դա հաջողության պատճառներից մեկն

էր: Եվ չնայած որ շարժմանը շատերն էին անդամագրվում, շատերն էլ ընդդիմացան դրան: Ոմանք ուղղակի չարամտում էին, ոմանք էլ՝ պարզապէս չիմացության պատճառով խորշում էին նույնիսկ անվանումից՝ ընկնելով ազդեցության տակ: Եվ քանի որ այդ միտումն այժմ նույնպէս զգացվում է, ապա հակիրճ արդարացնեմ բառի, այսպէս ասած, «վտանգավոր», անիմաստության հիմքերը:

«Ցեղ» եւ «կրոն». բանն այն է, որ ցեղակրոն շարժման ակտիվացումը զուգահեյտեց ֆաշիստական Գերմանիայի նացիոնալիստական շարժման հետ: Բայց Նժդեհի ցեղային մտածողությունը ծնունդ էր առել դրանից շատ ավելի շուտ, երբ Հիտլերի անունն աշխարհը դեռ չէր էլ լսել, եւ ինքը՝ Նժդեհը, բազմիցս բացատրել է, այդ երկու գաղափարախոսությունների էական տարբերությունները: Հայկական Ցեղակրոնությունը չի պարունակում հարձակողական բնույթ, այլ հիմնականում ինքնապաշտպանողական է: Միայն բառախաղով չի կարելի երեւոյթների մասին դատել, առանց խորապէս մտածելու դրանց բովանդակության մասին: Այլապէս մենք այսօր դեմոկրատիան պետք է համարեինք աշխարհի չարիքներից մեկը, քանզի տեսնում ենք, թե ինչպէս ժողովրդավարության անվան տակ մի շարք երկրներ բռնապետական կարգերին համապատասխան վարքագիծ են դրսեւորում: Այո, «ցեղ» բառարմատն ուղղակիորեն կապված է ազգայնական մտածողության հետ, բայց ոչ ազգայնամոլության: Բառի երկրորդ արմատը «կրոնն» է: Սա էլ շատ քննարկումների առիթ է տալիս: Պետք է ասել, որ երբ Նժդեհը ծավալվում է այս ուսմունքի շուրջը, շատ բառեր է կիրառում. ցեղակրոն, ցեղա-հաղորդ, ցեղապաշտ, ցեղային գաղափարների *կրող* եւ այլն... սակայն նույնիսկ եթե մենք կտրվենք իր պարզաբանումներից, ապա միեւնույն է, պետք չէ միանգամից դուրսագրգիռ տրամադրվածություն ստեղծել, քանզի կրոն բառի կիրառումը դեռ չի նշանակում մի նոր գերբնականի ստեղծում եւ դրա մոլեռանդ երկրպագություն: Այստեղ այն կիրառվում է զուտ վարդապետական, գաղափարի նվիրվածության, դավանանքի համատեքստում, ուրիշ ոչինչ: Եվ առավելեւս ավելորդ են հակաքրիստոնեական մեղադրանքները, քանզի ինքը՝ Նժդեհը, բազմիցս խոսել է Աստծո եւ Քրիստոսի մասին եւ ոչ մի հակա միտք չի արտահայտել:

«Կեանքում, խղճմտանքէս զատ ես ճանաչեցի երկու այլ դատաւորների եւս՝ Աստուած եւ ժողովուրդ: Առաջինի դէմ մեղանչեցի, երկրորդի դէմ՝ երբեք» [6]: Կարծում եմ, այսքանով թեման կարելի է փակված համարել:

Լավ, բայց ի՞նչ է քարոզում Նժդեհը ցեղակրոնությամբ: Նա ասում է, եթե ուզում ես զորեղանալ, կայանալ իբրեւ ազգ, պետք է ապրես ներցեղային կյանքով: «Ցեղակիցներիդ մէջ [...] տես քեզ եւ արծազանքիդ նրանց ցաւերին. դա ասել է՝ վերապրիր ցեղիդ ողբերգութիւնը. ւաւելի՛ն՝ թող քո հաղորդութիւնը դառնայ ցեղիդ ճակատագիրը, նաեւ քո մկրտութիւնը: Դա ասել է՝ քո սիրտը պէտք է պատասխանի ժողովրդիդ ամէն մի սրտագարկին» [4]:

Սփյուռքում հայ երիտասարդությունը մեծանում էր տարբեր քաղաքական, կրոնական, մշակութային ներազդեցությունների ներքո. նույն բանը տեղի է ունենում այսօրվա Հայաստանում անկախացումից հետո, երբ տարատեսակ հոսանքների համար սահմանները բացվեցին: Եվ ահա՝ թե ինչ է գրում Նժդեհն այդ առիթով իր ինքնակենսագրականում. «Հայը Հայաստանից դուրս ենաթակայ է վատասերումի: Այդ չարիքի դէմ պայքարել հնարաւոր է միայն ցեղային արժէքների, առաքինութիւնների եւ սրբութիւնների խոր ճանաչումով ու վերապրումով – մի բան, որ հիմնաւորեցի եւ անւանեցի Ցեղակրօնութիւն» [7]:

Ցեղակրոնությունը պահանջում է անձնագոհություն, անձնուրաց նվիրում սեփական ազգի վերաշինման եւ պահպանման գործում: Անվերապահորեն ծառայել հանուն հայրենիքի, որպեսզի հետո նա փոխհատուցի իր զավակներին:

Ցեղակրոնությունը հայրենի պատմության խոր ուսումնասիրությունն է: «Անցեալի պաշտամունքի եւ ապագայի մեծ յոյսի ստեղծագործ կենակցութիւնն է դա [Ցեղակրոնությունը], որ ժողովրդի հոգուն ամենաշքեղ յղացումներ է տալիս» [8]: Պետք է ներթափանցել մեր ցեղի հերոսական ակնթարթների մեջ, որպեսզի ըմբռնելի լինի, թե ինչպէս կարելի է օգտվել դրա, դեռեւս ամբողջովին չբացահայտված, ներուժից: Սովորել արիության տիպարներից եւ զերծ մնալ երկչոտությունից: Ոգեւորվել մեր պատմության լավագույն էջերից եւ մշտապես դասեր քաղել սխալներից՝ խրատապաշտ լինել:

«Ցեղին, միայն ցեղին է տրւած ժողովրդի ստրկութեան ծանր շղթաները արծիւի թւերի վերածելու արուեստը: Նա՛ ստրկութեան մէջ իսկ, չի կորցնում իր պատմական ճամբան: Անցեղաշունչ ժողովրդին տրւած չէ այդ բնագոյական կարողութիւնը» [8]:

Նժդեհն իր բնութեով մշտապէս իդեալիստ է եղել: Նա միշտ համարել է, որ անհատը հավերժ պետք է աշխատի ինքն իր վրա: Չբաղվի հոգեշինությամբ, հաղթահարի իր մեջ բոլոր տկարությունները:

Այո՛, ինքնահաղթահարումով պետք է զբաղվի մարդը:

Նախ պետք է ինքն իրեն հաղթահարի:

Ցանկացած անհատի հոգեփոխման երեւութ զալիս է լրացնելու մեկ հավաքական ամբողջականության վերաշինմանը:

Հողվածում արծարծված մի քանի հարցերի որոշակի մեկնություններ.

«Ժողովուրդն ընդունում է օտար մշակույթն ապագայնանալով, ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը» [8]:

«Այս կամ այն ցեղը մօտաւոր ճշտութեամբ դիմագծելու համար՝ նրան պիտի դիտել իր հոգու հայելիի՝ իր կրօնի մէջ, որովհետեւ ցեղի մօտաւոր ինքնայայտութիւնը հնարաւոր է միայն իր աստուածների միջոցով» [8]:

«Որքան տիրական է ցեղի ազդեցութիւնը ժողովրդի կեանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանում վերջինս» [8]:

Եթե ժողովուրդն ուզում է սփրագործությունների գնալ, ապա նախ եւ առաջ պետք է ինքնաճանաչ լինի: Սա է Նժդեհի պատգամը, որի մեջ ներփակված է բարդ եւ միաժամանակ պարզ մի ճանապարհ: Եթե ժողովուրդն իր մեջ չճանաչի ցեղը, չի կարող պայքարել, չի կարող բացահայտել իր հնարավորությունները եւ անկարողությունները: Ինչպէս ցանկացած անհատ քաջատեղյակ է իր անձնական տվյալներին, նույնությամբ էլ ժողովուրդը պետք է իմանա իր սեփական ներուժի մասին: Ժողովուրդը մարմինն է, իսկ ցեղը՝ հոգին ժողովրդի:

Սա պետք է լինի մեր *ազգային ծրագրի* հիմքում....

1. Նժդեհի բոլոր գրառումները, որոնք հողվածում բերված են առանց հղումի, քաղված են նրա «Էջեր իմ օրագրեն» եւ «Բաց նամակներ հայ մտավորականութեան»-ը աշխատություններից:
2. «Դաշնակցության առաջացման պատմական պայմանները եւ նրա բնութագիրը»:
3. «Ամերիկահայութիւնը - Ցեղը եւ իր տականքը»:
4. «Ցեղի ոգու շարժը»:
5. «Ցեղի Յաւիտենական Ձէնքը»:
6. «Բանտային գրառումներ (խորհրդածութիւններ)»:
7. «Ինքնակենսագրութիւն»:
8. «Ցեղակրօնութիւնն իբր յաղթանակի գօրոյթ»:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ ՏԵՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց պատմության մեջ եւ հայոց մեծերի շարքում իր անուրանալի տեղն ու դերն ունի Գարեգին Նժդեհը (Տեր-Հարությունյան): Նա այն բացառիկ պատմական անհատներից է, որի մեջ փայլուն կերպով ներդաշնակված են ռազմագետն ու քաղաքագետը, պետական ու հասարակական գործիչը, իմաստասերն ու ազգային գաղափարախոսը, որոնց հիմքում ընկած է անձնուրաց, մարտիրոսական պայքարի մղող հայրենասիրությունը: Նրա ողջ գիտակցական կյանքը նվիրված էր հայրենիքի ազատագրման գործին: Անգնահատելի է նրա դերը Ղարաքիլիսայի ու Ջանգեզուրյան հերոսամարտերում, որտեղ դրսևորվեցին նրա ռազմական գիտելիքներն ու հռետորական տաղանդը: Հայրենիքին ու հայությանը Նժդեհն անմնացորդ նվիրվածությամբ ծառայեց նաեւ տարագրության մեջ գտնվելով: Սփյուռքում Նժդեհն իր հայնպաստ գործունեությունը շարունակեց արդեն քարոզչական ճակատում՝ ճանապարհ բացելով հայ նոր սերնդին վերահաս ծուլումից փրկելու համար:

Այդ ժամանակաշրջանը սփյուռքահայության համար լի էր բազմաթիվ վտանգներով, փոխվել էր Հայկական հարցի նկատմամբ հայության ունեցած վերաբերմունքը, ձեւավորվել էին մի շարք ապազգային աղանդներ, հասարակական կազմակերպություններ, չէին դադարում միջկուսակցական բախումները, որի հետեւանքով գաղութահայությունը պառակտվում էր եւ արհամարհանք դրսևորում ազգայինի նկատմամբ: Մի խոսքով՝ տիրում էր համընդհանուր բարոյալքում: Ստեղծված տագնապալի իրավիճակում Նժդեհը չէր կարող ձեռնպահ մնալ եւ տեսնել, թե ինչպես էր գոյությունը վտանգում իր հարազատ ժողովուրդը՝ զոհ դառնալով թե՛ թուրքական կառավարության հակահայկական գործունեությանը, թե՛ հենց իր ներքին պառակտումներին, որի արդյունքում դիտվում էր ազգային ոգու անկում, ազգային արժեքների

մոռացում, հետեւաբար՝ անխուսափելի էր դառնում հայ ցեղի ծուլումն օտարին: Իհարկե, նման իրադրությունը սպառնում էր վերջնականապես կործանել եւ պատմական ասպարեզից հեռացնել հայկական Սփյուռքը:

Եվ ահա, Նժդեհը, որպես անձնավեր առաջնորդ եւ գաղափարախոս, նախաձեռնում է հայոց փրկության շարժումը ի դեմս Ցեղակրոնության, որը գալիս էր սկզբնավորելու Հայկականության տեսությունը: Նժդեհի կարծիքով, այն կարող էր միավորել Սփյուռքը, փրկել նրան ծուլման վտանգից, պատվար ստեղծել թուրքական կառավարության հայահալած քաղաքականության դեմ, բարձրացնել ժողովրդի ազգային հայրենասիրական ոգին, պայքարի կոչել եւ փորձել հետ վերադարձնել կորուսյալ հայրենիքը:

1932թ. Սոֆիայում լույս տեսնող «խռովք» ամսագրում Գ.Նժդեհը «Հոգեւոր նորոգության խնդիրներ» խորագրի տակ լույս ընծայեց «Ցեղակրոնությունն իբրեւ հաղթանակի գորույթ» հոդվածը, ուր մասնավորապես ասված է. «Եթե ցայսօր մեր ժողովուրդը հարվածներ է միայն ստանում եւ ողբերգորեն անկարող է հակահարվածել, դրա պատճառն այն է, որ նա չի ապրում ցեղորեն... Ցեղակրոնություն - ահա համադարմանը, առանց որի հայությունը կմնա մարդկության քաղաքականապես ամենատնանկ մասը»:

1933թ. ամռանը Նժդեհը Հ.Յ.Դ. 12-րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ մեկնեց ԱՄՆ, ուր նախաձեռնեց Ցեղակրոն շարժումը եւ այն ծավալելու համար հիմնադրեց Ցեղակրոն Ուխտերը: Կազմակերպության ստեղծման նպատակն էր ստեղծել ցեղակրոն մի սերունդ, որի անդամները, ուր էլ որ լինեն, պետք է ապրեն ու գործեն որպես ցեղի հպատակ եւ մարտիկ:

Մինչեւ Նժդեհի ԱՄՆ գալը՝ այնտեղ միմյանցից անջատ գործում էին մի շարք երիտասարդական միություններ, որոնց համախմբելու գործը ստանձնեց Նժդեհը: Ցեղակրոն շարժման գաղափարախոսությունը նա շարադրեց 1933թ. վերջին Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում «Ցեղային արթնություն» խորագիրը կրող հոդվածաշարով:

Նժդեհը ձգտում էր միջավայրի այլասերությանը ենթարկված սփյուռքահայությանը միավորել միեւնույն գաղափարախոսության

շուրջ: Նա շեշտը դնում էր երիտասարդության վրա, քանզի, ինչպես ինքն էր ասում, «երիտասարդությունը լեռներից իջնող ամեհի հեղեղ է, որ կարող է եւ օրհնաբեր, եւ ավերիչ լինել»: Հետեւաբար, երիտասարդ սերնդից է կախված՝ կլինի՞ Հայաստանը, թե՞ չի լինի:

Նժդեհի առաջադրած Ցեղակրոնությունը կոչված է բացահայտելու եւ իր մեջ խտացնելու հայի էությունն ու նրա բարոյական կերպարը, եւ որը որպես գերագույն սրբություն է ճանաչում Ցեղը, որը, թերեւս, վերացականորեն բնութագրելով, հայ արյան եւ ոգու ամբողջական ընդհանրությունն է, որի մեջ ամփոփվում են ազգի հոգեւոր արժեքները, հզորությունն ու կամքը: Ցեղ ասելով՝ Նժդեհը հասկանում էր հայության այն փոքր հատվածը, այն սերուցքը, որին խորթ են ստրկության շղթաները, եւ հանուն հայրենիքի նա պատրաստ է պայքարել՝ զոհաբերելով իր եսը, իր արյամբ փրկել հայրենի հողը:

Ցեղակրոնությունը կոչ է անում միադավանություն՝ մերժելով բազմակուսակցականությունը: Պատվիրում է սիրել ցեղը եւ տրվել նրան ամբողջ էությամբ, վեր կանգնել սեփական եսից՝ հանուն հայրենիքի փրկության, հանուն հայրենատիրության, որովհետեւ Ցեղը կարող է գոյություն ունենալ միմիայն իր բուն հայրենիքում: Ցեղակրոնության մեջ կարելու է արյան պաշտամունքը, արյան անարատությունը, որ կարող է պաշտպան հանդիսանալ օտար միջավայրում այլասերումից: Ցեղակրոնությունը կոչ է անում պահպանել Ցեղի հին ու նոր սերունդների միջեւ հոգեկան կապը, այն է՝ ցեղահաղորդ լինել, իր մեջ զգալ ու կրել նրա վշտերն ու ուրախությունները, կիրառել նախնիների ձեռք բերած փորձը, մոռացության չմատնել ազգի ողբերգություններն ու հաղթանակները, բարձր պահել ազգային արժեքներն ու արժանապատվությունը՝ պայքարի կոչելով հայրենասիրական ոգին եւ հպարտանալով, որ հայ են, ասել է թե՛ սովորել ցեղորեն ապրելու արվեստը: Ցեղակրոնությունը պարտավորեցնում է վրեժխնդիր լինել թուրքից բոլոր այն տառապանքների համար, որոնք նա պատճառել է հայ ժողովրդին: Հանդուրժող լինել՝ կնշանակի ներել, իսկ ինչպե՞ս ներել նրան, ում պատճառով բնաջնջվում էր հայությունը, ինչպե՞ս ներել նրան, ով գործի դնելով իր ցեղին հատուկ գազանությունն ու վայրագությունը՝ գողացավ հայի

գեներ, ուստի նժդեհյան ուսմունքը կոչ է անում գերօ մնալ խառնա-
մուսուլթունից, անարատ պահել հայ ազգի արյունն ու նրա
հինավուրց էությունը: Նժդեհը ցեղի թշնամի էր համարում նաեւ
բոլշեւիզմը եւ նրա առաջադրած դասակարգային գաղափարա-
խոսությունը՝ գտնելով, որ այն անհարիր էր հայ ազգին եւ պա-
ռակտում էր առանց այն էլ թշվառության մեջ գտնվող ժողովրդին:

Ցեղակրոնությունը կոչված է հայությանը մղելու ինքնաճա-
նաչման, ցեղային պարտականության գիտակցման եւ ցեղայնաց-
ման:

Ցեղաճանաչություն ասելով պետք է հասկանալ այն հա-
վաքական միասնության էությունը, որի կազմում գտնվում է
ցեղային անհատը: Հասկանալ ու իրականացնել այն ձգտումներն
ու նպատակները, որոնք համապատասխանում են ցեղի շահերին՝
ստեղծելով հոգեւոր, զուտ հայկական մտածողությամբ տոգորված
արժեքներ՝ վեր լինել նյութականից: Սա հնարավոր է, եթե ցեղի
յուրաքանչյուր անդամ նախապես ճանաչի ինքն իրեն, իր
էությունը, բացահայտի իր կյանքի իրական նպատակները եւ
որոնի դրանց իրականացման ճշմարիտ, արժանապատիվ ուղի-
ները, որ իր ողջ կյանքի ընթացքում կերտի իր անձի բարոյական
կերպարը եւ հիմքեր ստեղծի ազգային բարոյականի կերտման
համար: Այսինքն՝ ներդաշնակությունն ու միասնությունն են ընկած
ցեղի ու անհատի գործունեության հիմքում: Մեր սակավաթիվ
հայությանն անհրաժեշտ է գործի դնել «մեկ ազգ, մեկ գաղափար-
ախոսություն» սկզբունքը, այլապես հայությանն սպառնում է
մշտապես պառակտված մնալու վտանգը: Եվ, Նժդեհի կարծիքով
դրա մեղավորը ոչ թե ժողովուրդն է, այլ նրան ցեղային ինքնա-
ճանաչման մղող մտավորականությունը, որը հայ նոր սերունդը չի
դաստիարակում իր հերոսների փառապանծ սխրանքները փառա-
բանելով, չի մեծարում իր նախնիների հոգեւոր ու ֆիզիկական
արիությունը, եւ ժողովուրդն էլ, իր պատմության չիմացությունից
տկարանում է, կորչում են նրա հոգու կորովն ու խիզախությունը,
եւ հետեւաբար, «հավատում է ամեն ինչին, բացի սեփական բազ-
կի ուժին, դրա համար էլ ամբողջութեան մեջ նա պարտողական
է: Նրա համար Աւարայրի Մամիկոնեանը աւելի նահատակ է,
սուրբ, քան ռազմիկ եւ հերոս»: Արդ, ճանաչենք մեր պատմու-
թյունը, քանզի նա է մեր իմաստուն խորհրդականը:

Ցեղային անհատը պարտավոր է գիտակցել ցեղի նկատմամբ
ունեցած իր պարտականությունները, ճակատագրապես կապված
լինի նրան եւ նրա արժեքներին, ստեղծի եւ ապրեցնի հայկա-
կանությունը:

Յուրաքանչյուր ցեղակրոն պետք է ունենա այն զգացումը, որ
իր սերնդին է վիճակված ապրել իր ժողովրդի պատմության
վճռական ժամանակաշրջանը: Նա չպետք է դադարի պահանջա-
տեր լինել եւ բավարարվի ձեռք բերածով, պարտավոր է ձգտել
ավելիին, քանզի ինչպես Նժդեհն է ասում. «Պարտականութեան
մեջ ցեղակրօնի իմ բաժինը՝ առիծի բաժինն է՝ ամենամեծը»:

Ցեղակրոնությունը ցեղայնացում է պահանջում, որը արյան,
մշակույթի եւ ճակատագրի միությունն է, ասել է թե, ցեղորեն
ապրող հայի համար մեծագույն պատվար՝ օտար միջավայրում
ապրելու, դիմակայելու եւ ոչ թե նրան ենթարկվելու եւ հնազանդ-
վելու համար: Նշանակում է, օտարը պետք է ծառայեցնել որպես
միջոց՝ մեր սեփականը դրսեւորելու եւ փառաբանելու համար:
Նժդեհի քարոզած ցեղը «ոչ թե ընդունում է օտար մշակույթը՝
ապազգայնանալով, այլ ազգայնացնում է ընդունածը»:

Մինչեւ այժմ մեր հասարակության մեջ գոյություն ունեն որոշ
թյուր պատկերացումներ՝ կապված Ցեղակրոնության հետ՝ համա-
ձայն որոնց, Ցեղակրոնությունը հանդես է գալիս որպես նոր կրոն՝
մերժելով քրիստոնեությունը եւ վերադառնալով հեթանոսությանը:
Նախ պետք է նշել, որ Ցեղակրոնությունը նոր կրոն չէ, այլ բա-
ցարձակ աշխարհիկ ուսմունք է: Ցեղակրոն լինել, նշանակում է
կրել իր մեջ ցեղը, ապրել ցեղի կյանքով, նրա բարքերով ու
բարոյականով: Եթե այն հասկանանք բառացի, զուտ կրոնի իմաս-
տով, ապա այն կրոն է ուժի, հպարտության, ազգային կամքի ու
հզորության: Նժդեհը հակված չէ հակադրելու հեթանոսությունն ու
քրիստոնեությունը, ընդհակառակը՝ Ցեղակրոնությունը որոշակիորեն
հիմնված է քրիստոնեական վեհ գաղափարների վրա, սակայն
չի կարելի ասել, որ նա քրիստոնեության մոլեռանդ պաշտպան է:
Ինչ-որ առումով այն վտանգավոր է համարում հայության համար՝
գտնելով, որ հայ եկեղեցին քրիստոնեությունը ոչ ճիշտ ընկալելով՝
պատճառ է դարձել հայ ժողովրդի ողբերգությունների համար՝
նրա ռազմաշունչ ոգին ստրկացնելով:

Ինչէւիցե՛, ցեղակրոնությունն այնքան լայն թափ ստացավ, որ Նժդեհը նպատակ ուներ Ցեղակրոն շարժումը դարձնել համահայկական, համագաղութային: Սակայն Նժդեհի հարաբերությունները Զ. Յ. Դ. ղեկավարության հետ այն աստիճան սրվեցին, որ 1937թ. նա խզեց կապերը կուսակցության հետ, ինչը զգալիորեն անդրադարձավ Ցեղակրոն շարժման հետագա ընթացքի վրա:

Դեռ 1934 թ. Նիկոլ Աղբալյանը Բեյրութից գրում էր ԱՄՆ-ում գտնվող Նժդեհին. «Ցեղակրոնության շարժումը, որ այդպես հաջողությամբ կծավալվի քո խոսքի հմայքով, պիտի կարողանա՞ տեսել, երբ դու թողուս Ամերիկան: Մարգարեն աշակերտներ ունի՞, որ պահեն ոգին եւ ուրեմն գործը»: Ցավոք, Աղբալյանի մտավախությունն արդարացավ, եւ Ցեղակրոն շարժումը ԱՄՆ-ում՝ Նժդեհի՝ Զ.Յ.Դ.-ից հեռացումով սկսեց տեղատվություն ապրել: Ամերիկայի Զ.Յ.Դ. Ցեղակրոն Ուխտերը, որոնք արդեն կուսակցականացվել էին, այլևս չէին կարող հանդես գալ որպես համահայկական կառույցի հիմք: Միաժամանակ, Ցեղակրոնության նկատմամբ անբարյացակամ վերաբերմունք ուներ հայ եկեղեցին, որն ազդեցիկ ուժ էր գաղութահայ կյանքում, բայց շերտավորված էր նրա աստվածաբանական աշխարհայեցողությունը եւ չէր կարող միավորիչ ուժ հանդիսանալ ու ստանձնել հայության բարոյական վերազինումը: Դետեւաբար, անհրաժեշտ էր ամբողջացնել Ցեղային աշխարհայեցողությունը՝ այն միավորիչ դարձնելով ողջ հայության, այդ թվում եւ Հայ եկեղեցու համար:

Հաշվի առնելով ժամանակի հրամայականը եւ ստեղծված իրադրությունը՝ Գարեգին Նժդեհը, Հայկ Ասատրյանը եւ Ներսես Աստվածատուրյանը սկիզբ են դնում նոր շարժման ի դեմս Տարոնականության: Վերջիններիս կողմից 1937թ. Պլովդիվում հրատարակվող «Ռազմիկ» թերթում երեւան են գալիս Տարոնական շարժմանը նվիրված որոշ հոդվածներ: Տարոնական շարժման հենարան է ընտրվում Տարոն-Տուրուբերան հայրենակցական միությունը, որն ամենաազդեցիկն էր նմանատիպ կազմակերպությունների մեջ, Ցեղակրոն շարժման ամուր հենարաններից էր, եւ իր զինանշանի վրա արձանագրել էր 8-րդ դարի հայ ռազմական ոգու անկոտրում կամքը խորհրդանշող «Ուխտ Մամիկոնեից»-ը. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր եւ մի տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից

լեալ զսրբարանս մեր»: Սրանով միությունը փորձում էր հաստատել, որ ինքը ոչ թե սովորական, այլ՝ քաղաքական բնույթ կրող հայրենասիրական կազմակերպություն է եւ պետք է պայքարի հանուն ժողովրդի միաբանության եւ բարօրության: 1938թ. ապրիլին Սոֆիայում Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը (Տ.Տ.Հ.Ս.) սկսեց լույս ընծայել «Տարոնի Արծիվ» ամսաթերթը՝ Հայկ Ասատրյանի խմբագրությամբ, որով ավետվեց տարոնական ոգու վերածնունդը եւ սկիզբ դրվեց Տարոնական շարժման: Տարոնական աշխարհայեցողության էության հիմքում Ցեղն է՝ տեսակը, որը ժողովրդի կենսաբանական անփոփոխելի տարրն է: Ըստ Տարոնականության՝ տեսակը ոչ թե հավերժական է, այլ ենթակա է հավիտենացման կամ վերացման՝ կապված գոյության կռվում նրա կենսունակությունից եւ Աստծո հետ կենդանի կապից: Այսինքն՝ Տարոնականության մեջ առկա է աստվածահաղորդությունը, որը մարդու մեջ գտնվող աստվածային Ուժի՝ հերոսական ոգու զգացումն է, որ կոչված է պատմություն կերտելու եւ ժամանակի անիվը հաղթականորեն շրջելու համար: Այս առումով կարելի է ասել, որ Տարոնականությունը ոգու ուսմունք է, ոգու եւ մարմնի ներդաշնակության ուսմունք:

Տարոնականությունը փորձում է միավորել աշխարհասփյուռ հայությանը, կոչ է անում զինվել ներքեղային բարոյականով, Ցեղին անմնացորդ ծառայելու անկոտրում կամքով, որ պղծված, բարոյալքված ու հատվածականացած ժողովրդին դուրս բերի արտաքին վտանգի դեմ, պայքարի կոչի նրան՝ հանուն իր բուն հայրենիքում ապրելու, բնականոն զարգանալու համար: Քանզի Տարոնականությունը պայքար է հանուն հայրենասիրության, իսկ Հայրենիք նա համարում է բուն Հայկական Բարձրավանդակը, ուր կապահովվի հայ ազգի կայուն գոյությունը: Եվ պատահական չէ, որ Տարոնականությունը մեծ տեղ է հատկացնում Մամիկոնյաններին եւ Տարոն գավառին: Վերջինս էլ, Հայաստանի երկարուծիգ ճգնաժամային տարիներին հանդիսացել է կարեւորագույն հոգեւոր, քաղաքական ու ռազմաստրատեգիական կենտրոնը եւ սերնդեսերունդ հայոց երկրին տվել է բազում հերոսներ, որոնց համար գերագույն խնդիրը հայրենիքի միաբանությունն էր, նրա պայքարն ու հաղթանակը, որը մշտապես գերադասել են սեփական եսից ու շահերից: Ահա սա են Տարոնականության

առաջնորդները հակադրում ստեղծված իրադրությանը՝ կոչ անելով նոր սերունդը դաստիարակել Մամիկոնյանների ոգով, փրկել հայրենիքը, չմոռանալ անցյալի հերոսական ու փառապանծ էջերը: 21^o որ պատմությունը մեզ տվել է Մուշեղներ ու Վարդաններ, Մաշտոցներ ու Պարթևներ, իսկ ո՞ր են հիմա նրանք, ո՞ր է նրանց քաջարի ոգին, որ պետք է տիրի յուրաքանչյուրի սրտում: Այն ոգին, որ հաղթելու եւ մեռնելու անմար ցանկությամբ էր օժտված, միայն թե չտեսներ հայրենիքը պարտված: Ո՞ր մնացին ազգային զգացումը, ազգային արժեքների գիտակցումը: Եթե հայն այսօր տեր չի կանգնում իր պատմությանը, եթե նրա համար միեւնույն է, թե ինչպիսի հերոսներ են նահատակվել հանուն այն փոքր հողակտորի, որի վրա այժմ ապրում ենք, հանուն մեզ, որ այսօր գոյություն ունենք, ապա մի՞թե ճիշտ չէ թշնամին, որը կոչված է պառակտելու եւ ոչնչացնելու, իսկ հայն էլ կարող է հլու հնազանդ նրան հպատակվել: Ինչո՞վ է մեղավոր թշնամին, որ հայը մշտապես անմիաբան է. չէ՞ որ մենք ենք թույլ տալիս, որ մեր ողբերգությունները կրկնվեն սերնդեսերունդ: Այսօր էլ նույն իրավիճակն է տիրում: Պետք է համաձայնենք, որ մեր ազգը հակված է ամեն ինչում մեղադրել հակառակորդին, առանց հասկանալու, որ իր մեջ կորած են հավատը, հայրենասիրությունը, հաղթելու ցանկությունը, կամքը, ի վերջո հասկանանք, որ մեր մեջ են մեր խնդիրները, քանի որ վտանգը միշտ էլ գոյություն ունի, դա է բնության օրենքը. գոյության կռվում միշտ էլ հաղթում է ուժեղագույնը, իսկ այս դեպքում ուժեղ է նա, ով սիրում է իր հայրենիքը, պահպանում է իր մշակույթը, տուրք չի տալիս սնափառությանն ու օտար ազդեցություններին: Եվ որպեսզի զերծ մնանք հային պատիվ չբերող արատավոր երեւոյթներից, պետք է ապրենք ցեղորեն, ապրենք հաղթականորեն, եւ ինչպես Նժդեհն է ասում, այդ դեպքում միայն «ամեն մի հայ զոհի փոխարեն աշխարհ կուգան երկու նոր վրիժակներ»:

Այո՛, ցավով պետք է նշել, որ հայ ժողովրդի մեջ միշտ էլ կենսունակ են նախանձն ու դավաճանությունը, եւ այդ ամենը գործի է դրվում ընդդեմ հայրենիքի: Հետեւաբար, պարտավոր ենք մեր ներազգային արատները վերացնենք՝ հետեւելով մեծ հայորդու քարոզած գաղափարներին, որոնք ենթադրում են ապրել, պայքարել, զոհաբերել, սեփական մահով անմահանալ ու

հավիտյան փրկել հայությանը, քանզի ժողովուրդների ապագան հերոսաբար ապրելու եւ պայքարելու հզոր կամքի մեջ է, որին ի վիճակի է միայն նա, ով օժտված է ցեղային հզոր եւ անզիջող անհատականության զգացումով, ով չի կարող թույլ տալ խաթարել իր սերունդների լիարժեքորեն ապրելու իրավունքը, կորստյան չի մատնի նրանց ապագան:

Այսուհանդերձ, հենց սկզբից էլ Տարոնականության ճանապարհը լի էր խոչընդոտներով: Հայության դավադիր տարրերը պայքար ծավալեցին Տարոնական շարժման դեմ՝ մեկ ամբաստանելով նրան որպես մյուս հայկական կուսակցություններին ընդդիմադիր կուսակցություն, մեկ որպես տարոնցի հայերի հատկաժական շարժում եւ այլն: Շուտով բռնկվեց II աշխարհամարտը, եւ գաղութահայությունը մնաց առանց հոգեբանական նախապատրաստման եւ բարոյական սպառազինման: Քանի որ Նժդեհը նախատեսում էր սպասվող պատերազմի դեպքում Բուլղարիայում կազմակերպել կամավորական ջոկատներ, որոնք բուլղարական բանակի կողքին պետք է կռվեին Թուրքիայի դեմ: Թերեւս, դա չէր սահմանափակվելու միայն Բուլղարիայով եւ տեղի հայությամբ. նպատակ կար ողջ գաղութահայությանն օգտագործել հակաթուրքական ճակատում:

1939թ. դեթրոյթում գումարված Տ.Տ.Հ.Մ.-ի պատգամավորական ժողովն իր օրակարգում քննեց Տարոնականությունը: Ժողովը, որն ընդամենը մեկ տարի առաջ էքրըն Օհայոյի մեջ հայտարարում էր, թե «կշնորհավորե եւ քաջալերական խոսք կուղղե «Տարոնի Արծիվ»-ին իր ուղղության համար», արեց բոլորովին հակառակ հայտարարություն. «Տարոնի Արծիվ»-ի մեջ պետք է լույս տեսնեն այնպիսի գրություններ, որոնք կվերաբերեն Տարոնի աշխարհին... Տեսական բնույթ ունեցող այն գրությունները, որոնք կծգտին նոր վարդապետություն մը հաստատել, ինչ անունի ներքեւ ալ ըլլան, պետք չէ, որ մուտք գործեն մեր պատմության մեջ»: Այնուհետեւ ԱՄՆ է փոխադրվում նաեւ «Տարոնի Արծիվ»-ի հրատարակությունը:

Այսպիսով, Տարոնական համահայկական ուսմունքը պիտի փոխարինվեր տարոնցիական մանրապատումներով, եւ որ ամենացավալին էր, չէր հանդուրժվում ոչ մի ազգային ուսմունք, որի կարիքն այնքան շատ ուներ հայությունը: Հավանական է նաեւ, որ

Տ.Տ.Յ.Մ-ն այդ հայտարարությունն անում էր ոչ այնքան սեփական ցանկությամբ, որքան այլոց պարտադրանքով կամ հրահրմամբ, քանզի հենց նույն կազմակերպության անդամներն ընդունում էին, որ Տարոնականությունն ու նրա գաղափարները հետապնդում են զուտ հայրենասիրական ու հայրենիքին նվիրաբար ծառայելու նպատակներ:

Այսպիսով, Նժդեհի եւ նրա զինակիցների նախածեռնած շարժումը ձախողվեց՝ անցնելով ընդհատակ: Բայց դա ժամանակավոր էր, քանզի ճշմարտությունները սովորական մահկանացուների նման չեն մեռնում այլ որոշ ժամանակ նահանջում են՝ հետագայում նոր սերունդների կողմից վերածնվելու ակնկալիքով, նրանց մտքերի եւ զգացմունքների առջեւ բացելու ազգային ընդհանուր աշխարհայեցողության, նոր սկզբունքներ եւ դրանք կյանքի կոչելու բազում հնարավորություններ:

Յուրաքանչյուր ժողովուրդ, կերտելով իր պատմական ուղին, առաջնորդվում է իր էությանը բնորոշ գաղափարախոսությամբ: Սակայն խորապես ցավալի է, երբ գիտակցում ես, որ այդ ժողովուրդների շարքում մենք՝ հայերս, չենք կարող ընդգրկվել, քանի որ զուրկ ենք ազգային գաղափարախոսությունից, որը կապահովեր մեր ժողովրդի բարօրությունն ու անվտանգությունը, կարտահայտեր մեր ազգային դիմագիծը: Իսկ մեր հատվածականացված ժողովրդի մեծ մասը դեռ չի գիտակցում, որ մեր դժբախտությունների մեծ մասը պայմանավորված է նրանով, որ շարունակում ենք ապրել առանց աշխարհայեցողության: Այսինքն՝ մեզ պակասում է մեզ առաջնորդող եւ վերանորոգչական գաղափարախոսություն, որն իրեն կենթարկեր ապագային եւ օտարամուլ, հաճախ իրենց էլ անհասկանալի գաղափարախոսությունները, որոնք պառակտում եւ աղավաղում են ազգային ոգին՝ այն ծառայեցնելով իրենց շահերին, տկարացնում են ազգային գիտակցությունը: Մի՞թե մեր ժողովրդի դարավոր պատմական ուղին բավական չէ գիտակցելու համար, որ մեր հզորությունը ազգային միասնականության, ցեղորեն ապրելու մեջ է: Հայ մտավորականությունը, որը հանդիսանում է ազգային գիտակցության առաջնորդը, մեկուսանում կամ կուսակցականալով դադարում է կատարել իր միսիան: Այսպիսով, կարելի է ասել, որ հայ իրականության մեջ կտիրի տկարամիտ մթնոլորտ, քանի դեռ

նրան հասու չէ իր պատմության իմաստասիրությունը, նա չի կարող օգտվել իր բազմադարյա հարուստ կենսափորձից եւ կերտել իր համար քաղաքակիրթ ապագա: Այս հայրենակործան մթնոլորտին կարելի է վերջ տալ՝ ստեղծելով մեկ միասնական գաղափարախոսություն՝ հիմքում առաջնորդվելով Ցեղակրոնության եւ Տարոնականության՝ բոլոր ժամանակների համար արդիական գաղափարներով ու սկզբունքներով, որոնք կոչված են հայ անվան հավերժացմանը, հայ ժողովրդի միաբանության վերականգնմանը, հայ իրականության մեջ գերիշխող արատավոր երեւոյթների վերացմանը՝ պառակտված ժողովրդին վերածելով ազգի, արթնացնել նրա մեջ հայրենասիրություն, հերոսականությամբ սեփական պատմությունը կերտելու զգացում, վերականգնելու նրա մեջ սեփական ազգի բարոյական չափանիշները, հայրենասիրությունը, ցեղորեն ապրելու եւ ստեղծագործելու, ցեղի համար պայքարելու եւ մեռնելու կամքն ու ցանկությունը: Ասել է թե՛ վերանորոգվել, այսինքն՝ կրկին դառնալ մեր մեծ մեռելների արժանի հետնորդները, ինքնանալ, դառնալ ինքնատեր, տեր կանգնել մեր ցեղային էությանն ու մեզ գենետիկորեն հասած ցեղային ժառանգականությանը: Քանզի կյանքի ստիպողականությունն է վերանորոգումը, նրա օրենքն ու հրամայականը՝ «Վերանորոգիր կամ մեռիր», - ասում է Նժդեհը, որովհետեւ պատմությանը հայտնի չէ ավելի մեծ ու վսեմ գործ, քան «ապագայով վտանգված մի ժողովրդի վերանորոգումը»:

Նժդեհյան գաղափարախոսությանը հետեւել, կնշանակի առողջ սերունդ կրթել ու դաստիարակել, որը կկարողանա դիմակայել ներկայիս՝ փոքր ազգերի համար արհավիրք հանդիսացող գլոբալացման, ինտեգրման գործընթացներին՝ պահպանելով սեփական ցեղի ավանդույթները, ներցեղային բարոյականը, կենցաղավարությունը՝ ապավինելով ցեղային արթուն բնազդին, ցեղի եւ ոգու Աստվածահաղորդ կապի գոյությանը: Բոլորիս հայտնի է, որ երիտասարդ սերունդն է երկրի ապագան իր ուսերին կրողը, ուստի նրա մեջ պետք է սերմանել ազգայինը, կրթել այն կենսափորձով, որ թողել են մեզ մեր հերոսական պատմություն կերտող նախնիները, քանզի այդ են պահանջում ժամանակը, տիրող իրականությունը:

Գիշտ է, մեր պետությունը արձատական բարեփոխումների կարիք ունի, բայց պետք է գիտակցել, որ յուրաքանչյուր բարեփոխում սկսվում է մարդու հոգեբարոյական կերպարի ձեւավորումից: Հարկավոր է սահմանել բարոյական արժեքների հստակ համակարգ եւ դրանից բխող վարքի կանոններ եւ այդ ամենը հասցնել երիտասարդ սերնդի գիտակցությանը, հոգեպես վերափոխել նրան: Պետությունը պարտավոր է իր վարած քաղաքականությամբ, իր քարոզած գաղափարներով նոր սերնդի մեջ արթնացնել ազգային հպարտության զգացումը, հույսով ու հավատով լցնել հայրենիքի լուսավոր ապագայի նկատմամբ, զերծ պահել նրան ընչաքաղցությունից, սնափառությունից, որոնք ապականում են մեր ազգը, աղավաղում հասարակական մթնոլորտը եւ թյուր տպավորության պատճառ հանդիսանում օտարների աչքերում: Իսկ որպեսզի օտարը մեզ ճշմարիտ ճանաչի, անհրաժեշտ է, որ նախ մենք մեզ ճանաչենք իբրեւ ազգ: Բախտորոշ է նոր սերնդի դերը ազգակառուցման սուրբ գործում՝ «իբրեւ միակ վերանորոգիչ եւ համերաշխիչ ուժ», քանզի նոր սերունդը միշտ էլ ենթադրում է նոր աշխարհայեցողություն, նոր մթնոլորտ, նոր կամք, որ «պիտի գերազանցե անցյալը, անգամ ինքն իրեն»: «Դա ցեղի հայտնությունն է, ժողովրդի նոր օրը, նրա նոր խոսքը, նոր երգը, նրա նոր ճակատագիրը, նրա պատմության էջը՝ նոր բովանդակության: Դա ժողովրդի կյանքի զարգացման կրողն է»: Իսկ որակապես նորը՝ նոր արժեքային առավելությունն է հնի նկատմամբ:

Բայց նախքան վերանորոգման մասին խոսելն անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ մեր ժողովուրդը դեռ շարունակում է, ինչպես արտահայտվում էր Նժդեի՝ «արնոտ սուրբ տալ իր ցեղային անինքնաճանաչության, դեռ շարունակում է հայոց ողբերգությունը, որ մեր ազգային ուժի եւ հպարտության փոխարեն մեր տկարությունն ու նվաստությունն է սնուցանում: Արդ մեր խնդիր է, մեր տկար վիճակը ընդունելը, որը վերանորոգման ճանապարհին ամենադժվար եւ ամենաառաջին քայլն է»:

Մեր հասարակության ողբերգական երեւույթներից է կրոնական աղճատվածությունը, որին հարկավոր է վերջ տալ եւ ժողովրդին զերծ պահել այս կամ այն աղանդավորական խմբերի

հոծ շարքերը համալրելուց: Գիշտ է, վերջիններս ստեղծվում եւ ֆինանսավորվում են տարբեր արտասահմանյան երկրների կողմից՝ հայ ազգը պառակտելու եւ ժողովրդի մեջ թշնամություն սերմանելու համար, իսկ տկարամիտ ժողովուրդն էլ իր իրավունքները պաշտպանելու, լավ ու բարեկեցիկ կյանք պահանջելու, իր հայրենիքը օտարներից փրկելու եւ օտարամուտ տարրերից մաքրելու փոխարեն սոցիալական խնդիրներին զոհ դառնալով՝ ընդգրկվում է մերօրյա բազմապիսի աղանդների շարքերը: Չպետք է մոռանալ, որ մի շարք նմանատիպ աղանդների դավանանքն արգելում է զենք կրել, իսկ որ ցավալին է, առանց չափազանցության կարելի է ասել, որ ամոթալի վիշտ է հայոց ազգի համար, առավել եւս, որ դրանց շարքերը համալրում են հիմնականում երիտասարդները՝ պառակտելով ոչ միայն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին, այլեւ ազգը, հայրենիքը, եւ հարց է առաջանում, թե հարկ եղած դեպքում, եթե ոչ երիտասարդը, ապա էլ ով պետք է պաշտպանի եւ տեր կանգնի սեփական հայրենիքին: Մի՞թե սա են ցանկացել մեր նախնիները, որ արյունով ու սրով են պաշտպանել մեր սուրբ հողն ու հավատը՝ չծուլվելու համար օտարին, պաշտպանելու համար իրենց ազգի անարատությունն ու հավաքականությունը. մի՞թե նրա համար է այդ ամենը, որ այսօրվա երիտասարդը, իր անլուրջ դավանանքով, գաղափարներով ու ստրկամիտ ոգով, անգամ զենք չվերցնի թշնամու դեմ իր մորը կամ, որ նույնն է՝ հայրենիքը պաշտպանելու համար: Մի՞թե սա են երազել մեր Սամիկոնյաններն ու Բագրատունիները, որ պայքարել են ու արյուն թափել, մեր կրոնը, մեր եկեղեցիները անեղծ պահելու համար՝ մշակութապես անկախ հայրենիք մեզ կտակելով: Պետք է մեր միջից հանենք օտարամոլությունը, քանզի մեր հավաքական հզորության մեջ են մեր կամքն ու հզորությունը: Մենք պարտավոր ենք ապրել ազգային արժեքներով, քանի որ պետք է իրականացնենք մեր նախնիների անավարտ թողած ու մեզ ավանդած երազանքը, մեր պետության սահմանները հասցնել մեր հայրենիքի սահմաններին: Մենք պետք է աչքի լույսի պես պահենք այն մի բուռ հողակտորը, այն հսկա մշակութային արժեքները, որ արյան ու արցունքի, դարավոր տառապանքի արգասիք են: Մենք պարտավոր ենք տեր կանգնել եւ հավատարիմ մնալ մեր

մշակութային գանձերին, պատմական կոթողներին, զերծ պահել թշնամու ոտնձգություններից, քանզի ճշմարիտ մշակույթը միշտ էլ կրում է տվյալ ժողովրդի անհատականության կնիքը: Պետք է մեր մեջ սերմանել եւ խորացնել ազգային արժեքներն ու գաղափարները, զարգացնել այն, պայքարել հանուն մեր ինքնուրույնության՝ առջեւում ունենալով այն սկզբունքը, որ ապագան ու հաղթանակը պատկանում են ցեղային հզոր ոգուն: Պետք է լինենք այնպիսին, որ յուրաքանչյուր ազգ, անկախ նրա միջազգային դիրքից, արհամարհելու փոխարեն մեզ հարգի, իսկ եթե մարդ հեռանում եւ օտարանում է իր ազգային մշակույթից, ապա արհամարհանքը թե՛ նրա, թե՛ ազգի նկատմամբ անխուսափելի է, որովհետեւ ինչպես Նժդեհն է ասում. «ժողովուրդների հավերժականությունը պայմանավորված է նրանց ստեղծագործության հավիտենականությամբ»:

Յուրաքանչյուր անհատ պետք է գիտակցի, որ ազգի գոյության միակ երաշխիքը հենց ինքը Ազգն է, նրա հավաքական կամքը, միասնական մնալու եւ մեկ ընդհանուր գաղափարին դավանելու ձգտումը եւ հասկանա, որ ազգի յուրաքանչյուր բաղկացուցիչ մասնիկ ինքը՝ անհատն է, ցեղորեն ապրող անհատը, որը կոչված է վերանորոգելու իր Ցեղը, իր ժողովուրդը, որովհետեւ «երբ ժողովուրդը սկսում է շնչել ցեղի միջոցով, հոգեվերանորոգվում է, դառնում ազգություն»: Նժդեհի ուսմունքը արդի հայ հասարակության մեջ պետք է խոր արմատներ գցի՝ արթնացնելով հայրենատիրության փառավոր զգացումը:

Այսպիսով, ընդհանրացնելով այսօր մեր իրականության մեջ գոյություն ունեցող եւ օրեցօր ահագնացող վտանգը՝ մեզ մնում է երկու ճանապարհ՝ կամ հետելել մեծ հայրդու եւ գերմարդու, մեծ հայրենասերի ու իմաստասերի՝ Գարեգին Նժդեհի գաղափարախոսությանը եւ համախմբվելով դառնալ մեկ բռունցք, որպեսզի կարողանանք դիմակայել մեզ բաժին հասած արհավիրքներին, կամ հարմարվել, առանց գիտակցելու, որ ամեն մի հարմարում տեղի է ունենում ի վնաս հարմարվողի: Եվ այս դեպքում կարող ենք հաստատ համոզված լինել, որ իրենց բնական ընթացքին թողնված իրադարձությունները զարգանում են վատից դեպի վատագույնը: Դե, ուրեմն հետետելով Նժդեհի կողմից վեր հանված

«Մամիկոնյան սուրբ ուխտին»՝ մենք եւս ուխտենք փրկել մեր հայրենիքը բարոյալքումից, մեր երիտասարդությանը՝ օտար մշակույթներին տրվելու ստրկամիտ սովորությունից, հասարակության հոգեբանական մթնոլորտը՝ աղտոտվածությունից, գործի դնել բոլոր հնարավոր միջոցները, որ հայ մարդը ստորադասի նյութականը հոգեւորից, որ պահպանի մեր նախնիների կողմից ստեղծված հոգեւոր մշակույթի մասունքները, զերծ մնալ խեղաթյուրված պատմություն կերտելու չարաղետ վտանգից: Արդ, զորավիզ լինենք Նժդեհին եւ նրա գաղափարախոսությանը, ցեղակրոն լինենք հանուն մեր վաղվա օրվա, մեր ցեղային դիմագծի եւ ազգային պատվի: Միայն այդպես կարող ենք պահպանել մեր տեղը մարդկության ընտանիքում:

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Գարեգին Նժդեհի ուսմունքը, մասնավորապես՝ ցեղակրոն եւ տարրնական շարժումների գաղափարախոսությունները, ունեն բազմակողմանի նշանակություն:

Հայության առջեւ ծառայած վտանգների ու մարտահրավերների հաղթահարման, ազգային նպատակների ու իդեալների իրականացման, ֆիզիկապես, հոգեպես, բարոյապես անվտանգ մնալու տեսակետից դրանք, առավելապես՝ ցեղակրոնությունը, ունեն մարտավարական նշանակություն:

Հայ ժողովրդի ինգնագիտակցության, ինքնաճանաչման, գաղափարական դիմագծի ձեւավորման, աշխարհընկալման եւ ազգային գաղափարախոսության ձեւավորման գործում, սեփական անցյալը իմաստավորված ընկալելու եւ արված հետետություններով ապագան ճիշտ կառուցելու գործում՝ այս երկու գաղափարախոսություններն ունեն ռազմավարական նշանակություն հայ ազգային կյանքում:

Այսպիսով, նշված գաղափարախոսություններն անփոխարինելի են:

Նշված ուսմունքների գաղափարախոսությունները դատարկ տեղից, ստեղծագործաբար կամ տեսական կերպով չեն տրվել. դրանք իրենց վերջնական տեսքն են ստացել շարունակական ուսումնասիրություններից, գիտական հետազոտություններից, անցյալի ձեռքբերումների եւ կորուստների սթափ վերլուծություններից եւ, իհարկե, Սյունյաց լեռներում քննություն բռնելուց եւ իրենց դերն ու նշանակությունը ռեալ կերպով ապացուցելուց հետո:

Գարեգին Նժդեհի գաղափարախոսությունը իր առջեւ դրված նպատակներով եւ իր դավանանքով գալիս է միավորելու հայության անցյալը, ներկան եւ ապագան: Ընդունելով, որ ներկան անցյալի եւ ապագայի միախառնման կետն է, Նժդեհն առա-

ջարկում է ներկան օգտագործել մեր արիական, պատմական անցյալը վերհիշելու, ճշմարտացիորեն իմաստավորելու, վերափոխելու, ներկան վերամկրտելու եւ այդ արժեքներն ապագա տեղափոխելու համար, այն ապահով, անվտանգ, հաղթական եւ ազգային տեսակետից բարոյական դարձնելու համար: Նժդեհի բնութագրմամբ. «Ցեղակրոնություն, դա անցյալապաշտություն չէ, ոչ էլ հոգեւոր պորտաբուծություն, ինչպեսեւ ոչ ծուլ հուսադրություն, ոչ էլ մեղկ ապագայապաշտություն:

Անցյալի պաշտամունքի եւ ապագայի մեծ հույսի ստեղծագործ կենակցությունն է դա, որ ժողովրդի հոգուն ամենաշքեղ հղացումներ է տալիս»¹: Այն հայ ժողովրդի հոգեւոր, ժամանակային, խավային միաձուլումն է որպես անկոտրում բռունցք՝ տեղին է հիշել Չարենցի խոսքերը. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Այն - հայ ժողովրդի միասնությունն է՝ որպես ներցեղային բարոյական: Նշվածը զուտ տեսական կանխավարկած կամ եզրահանգում չէ, այլ լուրջ գիտական կորիզ պարունակող գաղափարախոսություն: Այն արդեն գիտականության ոլորտ է ներխուժում տարրնականության մեջ: Այստեղ Նժդեհը եւ տարրնականության մյուս ռահվիրաները հստակ տարբերակում են մտցնում ազգ եւ ժողովուրդ հասկացողությունների միջեւ, եւ դա արվում է անգիտակցաբար՝ հղում անելով գենետիկայի օրենքներին:

Նժդեհը ցեղակրոն եւ տարրնական շարժումների գաղափարախոսությունների մեխը հանդիսացող հասկացողությանը՝ «ցեղ»-ին, վերագրում է այնպիսի հատկանիշներ, որ պարզ է դառնում, որ նրանք «ցեղ» տերմինի տակ նկատի ունեն ազգային գենոֆոնդը կամ ազգի բնութագրական միավորը: Նժդեհի բնութագրմամբ. «Այն տիպարականը, որով ազգերը տարբերվում են իրարից»: Նժդեհը ճշմարտացիորեն գրում է. «Ցեղից են գալիս հայ գենքի, բազկի եւ գրչի բոլոր մեծությունները: Դա այն հոգեւոր շաղախն է, առանց որի ժամանակը հեշտությամբ հյուլեացնում է ժողովուրդներին»²: Նշվածը լիովին ճիշտ է, քանի որ ազգերը, կորցնելով իրենց ինքնատիպությունը՝ իրենց գենոֆոնդը կամ ազգային արյունը, խառը ամուսնությունների հետեւանքով հյուլեացնում են եւ կորչում պատմության թատերաբեմից: Այս դրույթը միշտ շեշտվում եւ բազմակի հաստատվում է Նժդեհի ուսմունքում:

Այսպիսով, հայ ժողովրդի ներկայի, անցյալի, ապագայի միավորումը ազգային արժեքների շուրջ, նրա առջև ծառայած մարտահրավերների լուծումը Նժդեհը տեսնում է մեր ժողովրդի արիական եության՝ գեոֆոնդի (ցեղի) միջոցով: Ուստի, Նժդեհի ուսմունքը ստանում է ոչ միայն բարոյահոգեբանական արժեք եւ նշանակություն, այլեւ բնական-կենսաբանական հիմք՝ պլատֆորմ, որի վրա բարձրանում եւ հենվում է ողջ գաղափարախոսությունը: Նժդեհի հիմնադրած շարժումներին՝ ցեղակրոնությանն ու տարրնականությանն անդրադառնալով առանձին-առանձին: Մինչ տարրնականության կենսաբանական-խոհափիլիսոփայական վերլուծությանն անցնելը՝ անհրաժեշտ է հասկանալ ավելի վաղ ծնունդ առած շարժման՝ ցեղակրոնության կարեւորությունը: Դրա համար պետք է զննել նրա պատմական արմատները, հասկանալ նրա գաղափարական ծալքերը, այն հանգամանքները, որոնք խթան են հանդիսացել դրա ծավալման համար, այն միջոցները եւ գործիքները, որոնցով պիտի ծավալի իր վերափոխիչ գործունեությունը:

Նախ փորձենք համառոտակի ներկայացնել, թե ինչ է ցեղակրոնությունը. ցեղակրոնությունն առաջին հերթին հաղթելու արվեստ է, իսկ հաղթանակը ինքնավստահ նախաձեռնության պտուղն է: Ինքնավստահությունը ենթադրում է ինքնաճանաչում, սեփական ուժերի ճիշտ գնահատում, որը հիրավի հատուկ է ինքնաճանաչ սուբյեկտին: Առանց ցեղային ինքնաճանաչումի անկարելի է գերծնալ թե՛ սեփական ուժերը թերագնահատելուց, թե՛ գերագնահատելուց:

Ժողովուրդների անզորության ու դժբախտության ամենամեծ պատճառը՝ իրենց սեփական եության մասին ունեցած տգիտությունը, այսինքն՝ անճանաչությունն է:

Դեռ իր խորքին ծանոթ չէր հայությունը՝ անցեղաճանաչ էր, երբ պարտվողական էր, որի պատճառով 20-րդ դարում ծանրածանր կորուստներ կրեց:

Այդ ժամանակ, երբ պարտվում էր, չէր զգում իր ուժը եւ չէր կարողանում հասկանալ, թե ինչ կարող է դառնալ որպես ցեղ: Ուստի, միշտ էլ պարտությունների պատճառ հանդիսացան անցեղաճանաչության հետեւանքները՝ հոռետեսությունը, պարտվողա-

կանությունը. այդպիսին էր հայը, երբ ցեղաճանաչ չէր եւ պարտվում էր:

Սակայն, երբ ճանաչեց սեփական ցեղի էությունը, բարձրացրեց, սրբեց իր անարգված ճակատը, ցեղի վերափոխիչ ազդեցության շնորհիվ թոթափվեց բարոյյթներից, սկսեց զգալ իր զորութենական կարողությունները՝ ըմբռնեց իր հոգեւոր զորության չափը, դարձավ ցեղաճանաչ, դարձավ ակտիվ ուժ, ինքնաճանաչությամբ դարձավ հայկական աշխարհայեցողության տեր, եւ հաղթանակը պտղաբերեց հայոց անդաստանում:

Ինքնաճանաչման միջոցով դարձավ սեփական ուժերի վրա վստահ եւ հեռու մնալով պարտվողականությունից՝ հաղթանակներ նվաճեց: Կարեւորագույններից էր 1988-1994թթ. գոյամարտուն հայ ազգի նվաճած հաղթանակը: Իսկ այն հոգեբանական գծերը, որոնք հաղթանակ են պարգևել հայ ազգին, կազմում են ցեղակրոնության հիմքը: Յետեւաբար ցեղակրոնությունն է հայ զենքի ու ոգու հաղթանակի գրավականը: Երբ դրանով է տոգորված եղել ազգը, փառապանծ հաղթանակներ է տարել՝ հակառակ պարագայում աղետներն անպակաս են եղել հայ կյանքից:

Ցեղակրոնությունը պահանջում է հաղթանակ, հաղթել ապրելու եւ դրա միջոցով ցեղն ապրեցնելու համար: Այսպիսով, ցեղակրոնությունն ասես դեղատոմս լինի, քանի որ հաղթանակը նախեսառաջ տարվում է ինքնավստահ կողմի հոգուն: Ցեղակրոնությունը հաղթանակի հասցնող հոգեբանական գծերի ծաղկեփունջ է՝ քաղված հայոց պատմության էջերից: Ցեղակրոնությունը ինքնաճանաչում է, ինքնացեղաճանաչում, ինքնավստահություն, հաղթանակելու անխախտ կամք եւ հաղթանակի հասնելուն անհրաժեշտ հոգեբանական գծերի ամբողջություն, որի միջոցով ազգը պիտի փրկվի օտար բարոյաֆիզիկական ճնշումից:

Ցեղակրոնությունը հայ ազգի հոգեւոր կազմվածքի բնատրամաբանական հակազդումն է իրեն մահվամբ սպառնացող վտանգներին, այն հաղթական հայի հոգեբանագիտակցական դիմագիծն է:

Այդ է պատճառը, որ երբ ազգը զրկված է իր ուժականությունից, տուրք է տալիս օտար, այլասերիչ, քայքայիչ հոգեբանություններին՝ կրելով դաժան պարտություններ:

Ճակատագրական է ցեղային ազդակի նշանակությունը մեր ժողովրդի վերածննդի, ազգային ամբողջացման եւ պետականացման գործում: Ցեղակրոնությունը ենթադրում է բարձր ազգային բարոյական կերպար, որն ազգի կյանքում ավելի տիրական է, երբ ազգը պետականության կրող է: Հաղթական բարոյական կերպարը սնուցում է պետականությունը, ահա թե ինչու, երբ ազգի կյանքում մեռնում է ցեղակրոն ոգին՝ պետականության կորուստը, ֆիզիկական ոչնչացումն ու բարոյական քաոսը պատում են հայ կյանքը, իսկ ցեղակրոն ոգու գինակցությամբ հայ ժողովուրդը լավագույնս ինքնապաշտպանվում է՝ ստեղծելով պետական ինքնիշխան համակարգ:

Երբ հայ կյանքում մեռնում է ցեղակրոնությունը, որն ասես բարոյական իմունիտետ լինի հայ հոգեւոր կյանքում, սկսում են գլուխ բարձրացնել նվաստ, թուլական, վախկոտ, օտարածին հոգեպատկերներ՝ պատճառ հանդիսանալով աղետաբեր կորուստների, ահա սրանց հետ է պայքարի մեջ մտնում ցեղակրոնը՝ հայ կյանքը տառապանքից գերծ պահելու համար:

Ցեղակրոնը խորշում է լաց լինելու, օգնություն մուրալու, բարերարներ փնտրելու քաղաքականությունից, պարտվողականություն, անինքնավստահություն, վախ, սարսափ՝ այս ամենից խորշում է ցեղակրոնը: Տկարություն, փախուստ՝ խորթ են նրան, ահա այս ամենն է, որ ուզում է սպանել ցեղակրոնությունը հայ կյանքում:

Պետականորեն, ազգորեն, բարոյականորեն անվտանգ մնալու համար ցեղակրոնությունը քարոզում է.

Ցեղաճանաչություն - դրա միջոցով հասնել ինքնաճանաչության, սպանել հոռետեսությունը, որ առաջ է բերում պարտվողականություն, կամքի պակաս, պարտություն, կործանում: Իսկ հոռետես է նա, ում մեջ մեռել է հավատը սեփական ուժերի հանդեպ: Ցեղակրոն ոգին իրեն պետք եղած ուժն իր մեջ է փնտրում, քանի որ ծանոթ է հայ ոգուն եւ գիտի, որ իրեն անհրաժեշտ ուժն իրենից դուրս փնտրողն իր պարտությունն է նախապատրաստում: Ուժապաշտ է ցեղակրոնը, գիտակցում է, որ հաղթում է ոչ թե արդարը, այլ ուժեղը, նա ընդունում է կյանքի պահանջը՝ գերազանցիր եւ պիտի հաղթես: Նա ընդունում է, որ մեր աղետների համար առաջինը մենք ենք մեղավոր, այլ ոչ թե բոլորը, բացի մեզնից:

Այսպես կարելի է սեղմ կերպով բնութագրել ցեղակրոնությունը, սակայն գաղափարախոսությանն ավելի խոր կերպով անդրադառնալու համար, այն պետք է դիտարկել իր պատմական համատեքստի մեջ, համեմատության եզրեր մտցնել այն ժամանակվա եւ այսօրվա իրականության միջեւ:

«Ինչո՞ւ ստեղծվեց ցեղակրոն շարժումը» հոդվածում Նժդեհը գրում է ցեղակրոնության հիմնադրման պատճառների մասին: Եվ չնայած այն գրել է Հայկական ԽՍՀ ՊԱՆ ներքին բանտում, այդուհանդերձ, հոդվածը կոնկրետ պատկերացում է տալիս գաղութահայության շրջանում շարժման դրդապատճառների մասին. «Ինձ հատկապես մտահոգում էին մեր երիտասարդ սերնդի տրամադրությունները»³, - նշում է Նժդեհը, եւ չնայած որ նա այս մտահոգությունը սփյուռքահայ երիտասարդության մասին հայտնել է 1930-ականներին, սակայն այսօր եւս՝ մեր երիտասարդ սերնդի մեծամասնության եւ հատկապես նորահաս սերնդի տրամադրությունները խորհելու տեղիք են տալիս: Չնայած այն հանգամանքը, որ Նժդեհն այս խոսքերը գրել է հայրենիքի սահմաններից դուրս կամ մանուկ հասակից իրերի բերումով արտասահմանում հայտնված երիտասարդության մասին, բայց այսօրվա հայրենիքի մեջ ապրող երիտասարդությունը, որը ծնվել էւ ապրում է իր պատմական հայրենիքում, մեծ մասամբ կիսում է Նժդեհի մատնանշած տխուր ճակատագիրը:

Այսօր չկա մեկը, որ երիտասարդությանը լիարժեք կերպով ցույց տա իր թերությունները, անելիքները, խնդիրները: Եվ դրա հետեւանքով նա չի կարողանում զգալ, շտկել դրանք, զբաղվել դրանցով եւ զարգացման ու կատարելագործման ճանապարհով գնալու փոխարեն, շատերը կանգնած եւ լճացած են մնում: Եվ սրա արդյունքում դառնում են Նժդեհի բնութագրմանը համապատասխան՝ արդեն ոչ թե հոռետես եւ անստեղծագործ, ինչպես Նժդեհն էր նշում, այլ քաղաքական առումով անտարբեր եւ մշակույթի տեսակետից ապազգային արժեքների կրող, հոգեպես դառնալով անիշխան՝ արդեն որդեգրում են ցածրարժեք գաղափարներ, կեղծ հեղինակություններ՝ ի վերջո դառնալով զզվելի անձնապաշտներ, փոքրոգի ու խորթ հասարակությանը եւ սկսում են հետապնդել սոսկ մեկ առօրեական նպատակ՝ իրենց սեփական հացն ու հանգիստը:

Նժդեհի գաղափարների արդիականությունը նաեւ այն է, որ իր գաղափարախոսությունների կրող եւ գործադրող նա համարում է երիտասարդությանը, ուստի ցեղակրոնությունն այսօր կարող է լուրջ դերակատարում ունենալ հայ երիտասարդության ճիշտ եւ առողջ ոգով դաստիարակման գործում:

Նա «Էջեր իմ օրագրեն» գրքույկի նախաբանում խոսում է այս հանգամանքի մասին՝ գրելով, որ ինքը ճշմարտություններ գիտի, որոնցից մեկն ասում է, որ եթե ուզում ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան, ապա նայի՛ր նրա երիտասարդությանը:

Այնուհետեւ Նժդեհը մեկնաբանում է իր խոսքը՝ բացատրելով ազգի հուսալի ապագայի եւ երիտասարդության միջեւ առկա կապը, ըստ որի՝ նյութապաշտական ոգու եւ համատարած հուսալքության՝ երիտասարդության վրա ունեցած ազդեցության տակ երիտասարդության շրջանում թուլանում է պաշտամունքը երկու աստվածությունների՝ հայրենի ժողովրդի եւ երկրի, որի հետեւանքով երիտասարդության մեջ օրեցօր աճում է հոգնածների, ուղեկորույսների եւ դարպընթաց եղածների թիվը եւ այն դառնում է նվազ խոստումնալից, քանի որ տկարանալով բարոյապես՝ երիտասարդությունը թուլացնում է մեր ժողովրդի լավագույն ապագայի հույսը: Այսպիսով, Նժդեհը ի ցույց է դնում երիտասարդության վճռորոշ դերը եւ նշանակությունը հայության կտրելիք ճանապարհի մեջ:

Նժդեհն իր գաղափարախոսության կրող, գործադրող եւ հիմնական դերակատար համարում է հայ երիտասարդությանը՝ նրան համարելով որպես լեռներից իջնող ամեհի հեղեղ, որը կարող է եւ կործանարար, եւ օրհնաբեր լինել: Եվ երիտասարդության հեղափոխական ազդեցությունն օրհնաբեր դարձնելու համար Նժդեհը խոսքը նախ եւ առաջ ուղղում է երիտասարդության սրտին եւ ոգուն:

Եվ հենց երիտասարդության հոգեբանության վերափոխմանն է ուղղված ու նվիրված Նժդեհի «Որդիների պայքարը հայրերի դեմ» գրքույկը, որն իր բոլոր էջերով ազդեցության լծակներ է ստեղծում երիտասարդության գիտակցության վրա ներազդելու համար: Նժդեհն այդ աշխատության նախաբանում գրում է, որ գաղութներում հայության փրկության միակ հույսը ինքը համարում է երիտասարդությանը, եւ եթե նա չդառնա փրկության

ճամփա, ապա սփյուռքահայությանը կմնա միակ ճանապարհ՝ դեպի գերեզմանատուն, ուստի ինքը ցանկանում է ճշմարտության ուժով վերափոխել երիտասարդությունը եւ ամենակարեւորը՝ Նժդեհը հավատում է իր սկսելիք գործի հաջողությանը, գրելով. «Չէ՛, չէ՛, ես հավատում եմ քեզ, քո ներքին մարդուն եւ հային: Չավատում եմ, որ դու հրամայողաբար պիտի դառնաս ուխտած եւ վրիժակ սերունդ - դյուցազնախառն սերունդը մեր, որի ջանքերով Չայաստան երկիրը պիտի դառնա նոր Սպարտա՝ Արեւելքի սրտի մեջ»⁴: Ելնելով նշված մտահոգությունից՝ Նժդեհը ցեղակրոն շարժումը հիմնադրեց երիտասարդության շրջանում՝ նրան դաստիարակելու, նրան հին կործանարար ազդեցությունից զերծ պահելու եւ նրա միջոցով ազգը վերադաստիարակելու եւ փրկելու համար: Այսօր եւս, եթե երիտասարդությունը չդառնա փրկության ճամփա՝ մեզ կմնա գերեզմանատան ճամփան:

Նժդեհը «Ռազմիկ» թերթում տպագրված իր «Նոր սերունդը» հոդվածում գրում է, որ այն ժողովուրդները, որոնց հաջողվում է իր նորահաս սերնդին հեռու պահել սեփական տկարություններից, թերիներից, սխալներից, ապա նրանից ստեղծում է մի մեծ եւ օրհնաբեր ուժ, նրա միջոցով հաղթահարում է իր ներքին տկարությունները, ցավերը, հոռետեսությունը: Վերջում ավելացնում է, որ պատմությունը չգիտի մի հեղափոխություն, ազատագրական մի պայքար, մի մեծ գաղափար, որ պսակված լիներ հաջողությամբ՝ առանց նոր սերնդի մասնակցության:

Նժդեհը գրում է, որ պետք է նախ հոգեբանորեն նվաճել նոր սերունդը՝ մի մեծ առաքելության համար:

Ահա թե որն է ցեղակրոնության արդիականություններից մեկը, որը Նժդեհը հստակ ձեւակերպում է՝ հեռու պահենք երիտասարդությանը մեզանում առկա թերություններից եւ բացասական երեւույթներից:

Նա, բացի դրանից, ցույց է տալիս բարոյական այն արժեքները, որոնք, ըստ ցեղակրոնության, պիտի դառնան երիտասարդության զինակիցները եւ զբաղեցնեն նրա միտքը, ըստ Նժդեհի դրանք են՝ գիտությունը եւ ստեղծագործ իդեալիզմը: Առաջինը նրան տալու է ուղի, լույս, զորություն, երկրորդը՝ թեւեր, խանդավառություն, արիություն:

Ցեղակրոնությունը ձգտում է նաև սոցիալական համերաշխություն հաստատել ազգի ներսում, որի կապակցությամբ գրում է, որ սոցիալապես դաստիարակված երիտասարդության նոր ըմբռնունը կյանքի մասին պետք է տրամագծորեն տարբերվի հայրերի հեթանոս ըմբռնումից, նորը միշտ էլ տրամադիր է լինելու կիսել իր հացն ու կարելիությունները:

Այսպիսով, ցեղակրոնությունը ենթադրում է նաև երիտասարդության բարոյական կերպարը զերծ պահել էգոիզմից, լցնել սիրով իր արյունակից եղբայրների հանդեպ:

Ինչպես արդեն նշեցինք, Ցեղակրոնությունը ձգտում ու ջանում է նոր սերունդը հեռու պահել հին սերնդի հոգեւոր անկումներից, թերիներից՝ հայության ողբերգությունը ավանդական ու սովորական չդարձնելու և երիտասարդության միջոցով ազգը բուժելու համար, և նշվածը Նժդեհը բնութագրում է որպես «Ռդիների պայքարը հայրերի դեմ»: Հաղթական, ցեղակրոն որդիների պայքարը պարտվողական, ստրկամիտ հայրերի դեմ, կամ ստրկակենցաղ հնի և ազատատենչ նորի պայքարը՝ հանուն ազգի վերածննդի:

Այսպիսով, հոգեւոր բացը, ինչպես առկա էր ցեղակրոն շարժման հիմնադրման ժամանակ, առկա է նաև հիմա, և եթե այն ժամանակ դա պայմանավորված էր «աղետներ տեսած և մեծ արհավիրքների, ցնցումների ենթարկված» լինելու հանգամանքով, ապա այսօր այն պայմանավորված է օտար մշակութային էքսպանսիայով, ապազգային արժեքների տարերային քարոզով և ազգային դաստիարակության պակասով, ուստի հայ ցեղը պիտի պայքարի մեջ կանչել սրանց դեմ ազգը հոգեւոր ցնցումներից հեռու պահելու համար. ահա ցեղակրոնության անհրաժեշտություններից և արդիականություններից մեկը: Օգտագործել երիտասարդությունը, նրան տալ հայրենապաշտական դաստիարակություն, դրա միջոցով ազգի հոգեբանությունը դարձնել հաղթական՝ հայրենասիրական դաստիարակություն, որը պիտի տա դպրոցը, ահա թե ինչպես է խոսում Նժդեհը 30-ականների գաղութահայ դպրոցի մասին՝ 1924թ. Կահիրեում տպագրված «Էջեր իմ օրագրեն» գրքույկում.

«Այն պիտի չլինի մեր դպրոցը, ինչ որ է այսօր:

Շեշտված նպատակը, ջերմությունը, հոգին է պակասում մեր արդի դպրոցին:

Նա չէ, բայց պիտի լինի հայրենագիտության ամբիոն, տաճար:

Դեռ այնտեղ հայ մանուկը պիտ ճանաչի և սովորի սիրելի հայրենի ժողովուրդն ու երկիրը:

Նա է, որ հայ մանուկի հոգու մեջ պիտ քամի մեր պատմության բովանդակ գեղեցկությունն ու վեհությունը:

Բավական չեն մութ ու շփոթ տեղեկությունները հայրենի երկրի և ժողովրդի մասին:

Անպետք են այն դասագրքերը, ցամաք և անհոգի, որոնց մեջ հայրենիքի մասին խոսվում է ճիշտ այնպես, ինչպես նկարագրվում է Սահարայի անապատը կամ մի հեռավոր կղզի:

Կրոնական երկյուղածությամբ և անսահման քաղցրությամբ պիտ դասավանդվի հայրենագիտությունը:

Սրտի և մտքի կրակով պիտ խոսվի հայրենի երկրի մասին՝ հրահրելով վերջինի պաշտամունքը մանկական հոգիների մեջ: Մի քիչ հայերեն, մի քիչ տեղական լեզու և սովորական առարկաներ - այդ է գաղութային դպրոցի տվածը»⁵, - ցավոք սրտի, այն այսօր էլ կազմում է մեր հայաստանյան դպրոցի գաղափարական բովանդակությունը՝ ամեն ինչից մի քիչ, առանց որևէ գերիշխող գաղափարի:

Նշված նկարագրությունը լրիվ համապատասխանում է մեր այսօրվա դպրոցի նկարագրին: Այսպիսով, Նժդեհը առաջնություն է տալիս մանկավարժությանը, այն մանկավարժությանը, որն ունի հստակ նպատակ և տիրապետում է այդ նպատակին հասնելու բոլոր մեթոդներին, այն մանկավարժությանը, որը ներծծված է հայրենասիրությամբ: Նժդեհը անդրադառնում է նաև մանկավարժական հարցերի՝ նշելով, որ մանկավարժական միտքը պիտի տիրապետի մեթոդներ՝ գիտելիքները որպես քարացած դոգմաներ չմատուցելու, այլ այդ գիտելիքների միջոցով երիտասարդների հոգեբանության, մտածողության վրա ազդելու համար:

Այնուհետև Նժդեհը «Ինչո՞ւ ստեղծվեց ցեղակրոն շարժումը» հոդվածում, որպես ցեղակրոնության հիմնադրման անհրաժեշտություն, նշում է պայքարը հիվանդագին կրոնականության դեմ, որն արտահայտվում էր սնկի պես աճող բազմաթիվ անհեթեթ աղանդների տեսքով՝ «Ռուհիներ», «Անդենականներ», «Վերա-

մկրտչականներ»։ Նույն պատկերն է նաեւ այսօր Յայաստանում. աղանդները, որոնք ուզում են կաթված հասցնել հայության ոչ միայն հավատքին, այլեւ գիտակցությանը, անընդհատ աճում են։ Նույն մտահոգությունն է արտահայտվում նաեւ այն ժամանակվա հայկական քաղաքական կուսակցությունների հանդեպ, որոնք տարածայնություններ ունենալով՝ պառակտում էին հայության միասնությունը, ցանկանալով Կոփլովի հայտնի առակի պես սայլն իրենց կողմը քաշել։

Ճիշտ եւ ճիշտ նույնն է մեր այսօրվա իրավիճակը. մի քանի տասնյակի հասնող կուսակցություններն անիմաստ պայքարի են ելել իրար դեմ։

Ցեղակրոնության համար անհանդուրժելի է կուսակցամոլությունը, քանի որ այն ազգային, հոգեւոր, քաղաքական իմաստով խոց է՝ նստած հայության հավաքական գիտակցության վրա, քանի որ այն չի տեղավորվում պետական համընդհանուր հասարակական բարօրության գաղափարի մեջ, որին հասնելու համար երբեմն պետք է դուրս գալ սեփական խիսունջի խեցուց։ Անընդունելի է այս երեւոյթը, քանի որ կուսակցամոլությունը շատ հաճախ իր մթագնած ուղեղի պատճառով, իր հատվածական շահերին հասնելու համար ընտրում է անբարոյական ուղիներ՝ քաղաքական ստախոսություն, հայիոյանք, կեղծիք, բանսարկություն, դավեր։ Նրանց խորթ է սթափ դատողական մտածողությունը, դրանք անուղեղ գործիքներ են, որոնց գործը նպաստում է միայն քառսի հաստատմանը։ Այն ցեղակրոնության թշնամին է հանդիսանում, քանի որ նրանից միայն օգտվում են ազգի թշնամիները, այն հենարան է ստեղծում թշնամու ոտքի համար ազգի ներսում։

Նժդեհը ճշմարտացիորեն գրում է, որ այս ամենի հետեւանքով մոռացության է մատնվում սպառնացող արտաքին վտանգը՝ թշնամին։

Նշված վտանգից այսօր այդքան էլ հեռու չէ հայությունը։ Նշված հողվածների տպագրման տարեթվերը չկարդալու դեպքում այն զարմանալիորեն կարելի է շփոթել այսօրվա տիրող իրավիճակի հետ։

Բացի այս ամենից, ցեղակրոնությունը ցույց է տալիս նաեւ այն բացասական հետեւանքները, որոնց առջեւ կարող ենք

հայտնվել՝ նշված վտանգները շուտ չչեզոքացնելու դեպքում։ Նժդեհը գրում էր, որ սփյուռքի մեր գաղթօջախներում ստեղծվել էր մի մթնոլորտ, որում մեկ միլիոնի հասնող գաղութահայերը, հուրախություն թուրքերի, փորձում էին ինքնասպան լինել։ Այսօր հայությունն անգիտակցաբար փորձում է մոռանալ իր հաղթական էությունը եւ տրվել օտար խժոժություններին։

Որպես նշված ախտերի բուժում ձեռնարկվում է ցեղակրոնությունը։ Ցեղակրոնությունն իր գործունեության հիմքում կրում էր հետեւյալ տրամաբանությունը, ըստ որի՝ սփյուռքահայությունն անպայմանորեն կարող է վերափոխվել եւ դուրս գալ այն ծանրագույն իրավիճակից, որում հայտնվել էր։ Սակայն այդ վերածնունդն ու վերափոխումը, որին պատրաստվում էր ենթարկել ցեղակրոնությունը սփյուռքահայությանը, ենթադրվում էր իրականացնել ինքնավերանորոգչական շարժման միջոցով, որի գաղափարական եւ հոգեբանական առանցքը կազմում էր հայոց պատմության մեջ թելածող արժեհամակարգը, որը հետո կոչվեց տարոնական, եւ Նժդեհը, որպես հայրենասեր-գաղափարապաշտի խորին մտահոգությամբ ապրող մարդ, ձեռնարկում է ցեղակրոն շարժումը՝ որպես երիտասարդության կազմակերպման գործ։

Ցեղակրոն շարժումը բարեփոխիչ շարժում - վերածնունդ է։ Այսօր մենք էլ հայրենասերի մտահոգությամբ արդիական ենք համարում Նժդեհի ուսմունքը՝ որպես նշված վտանգների սանձազերծ ուժ։

Ապա Նժդեհը խոսում է մյուս հանգամանքների մասին. նշվում է, որ շարժումը, երիտասարդության կազմակերպումից բացի, պայմանավորված էր այլ կարեւորագույն հանգամանքներով եւս։ Նախ դա թուրքական գործոնն էր։ Ցեղակրոն շարժումն ուներ նաեւ որոշակի ազգային բնույթի քաղաքական եզրեր եւս։ Մասնավորապես՝ ցեղակրոն շարժումը խրոխտ կերպով ելել էր հակադրվելու թուրքական հակահայկական գործունեությանը։ Այն նպատակ էր դրել հայ ազգային կյանքում ստանձնել որոշիչ դեր հայ քաղաքական կուսակցությունների, թուրքիայի հանդեպ բռնած՝ լավագույն դեպքում, չեզոք դիրքի ֆոնին։ Թուրքիայում հանրապետության հռչակման օրից ի վեր, թուրքիան աշխարհում սկսել էր քարոզչություն Յայոց ցեղասպանության էությունը

ծելախեղելու, դրա նպատակները կոծկելու եւ դրա գոյությունն ընդհանրապէս ժխտելու համար, նույնը շարունակվում է նաեւ մինչեւ այսօր: Թուրքերը դիմեցին հայերին վարկաբեկելու քաղաքականությանը, հայ ազգը միջազգային հանրության աչքում նվաստացնելու գործին, որը հղի էր լուրջ վտանգներով: Այս պայմաններում, երբ սփյուռքի մյուս կառույցները փաստացի անգործունյա էին, թուրքերին հակահարված տալու առաքելությունն իր վրա վերցրեց ցեղակրոնությունը:

Այսօր Թուրքիայի արյունակից եղբայրը կամ, ինչպէս ես կընութագրեի՝ աղբրեջանական Թուրքիան, ավագ եղբոր օգնությամբ եւ, իհարկեւ, անմիջական մասնակցությամբ հակահայկական քարոզչական արշավ են սկսել: Ղարաբաղը կորցնելուց հետո սրանք ցանկանում են լոբբիստական լծակների միջոցով ցեխ շարժել հայության վրա: Ղարաբաղյան շարժումը որակել որպէս «տեռորիստական», արցախցիներին՝ «տեռորիստներ», հայությանը՝ որպէս «ագրեսորներ», որպէս վտանգ միջազգային հանրության անվտանգության համար: Այսօր եւս, ինչպէս Նժդեհն է բնութագրում՝ երբ հայկական կուսակցությունների մեծ մասը ելել է իրար դեմ եւ զբաղված է դատարկաբանությամբ, ժամանակի ու միջոցների՝ ազգի համար աննպատակ ծախսմամբ, մեզ պետք է թուրքական քարոզչությանը լուրջ եւ միահամուռ, ամբողջական ճակատով հակահարված տալ: Այսօր եւս զգացվում է ցեղակրոն ոգու բարոյական աջակցության կարիքը՝ հայությանը գոտեպնդելու եւ նրա միջոցով ձեռք բերածն ամուր եւ անխախտ պահելու համար:

Սակայն ցեղակրոնության դիրքորոշումը Թուրքիայի հանդէպ միայն սրանով չէր սահմանափակվում: Միայն ինքնապաշտպանական հակաքարոզչությունը չէր հանդիսանում ցեղակրոնության ծավալման դրդապատճառը: Ցեղակրոնության վերաբերմունքը Թուրքիայի հանդէպ, բացի արտաքին պատճառներից, պայմանավորված էր նաեւ ներքին պատճառներով. դա սփյուռքահայության պահանջատիրական քաղաքական վերաբերմունքի բացակայությունն էր Թուրքիայի հանդէպ: Հայության շրջանում գերիշխող էր դարձել պարտվողական տրամադրությունը, ըստ որի՝ պետք չէր վերաբժարձել հայկական հարցը, չխոսել տարածքային պահանջ-

ներից, իսկ հայ քաղաքական գործիչներից շատերը թուրքերի հետ մերձենալու առիթներ էին փնտրում: Այս պարագայում Ցեղակրոն շարժումը եկել էր վերաբժարձելու հայկական պահանջատիրությունը, ինչպէս Նժդեհն է նշում՝ ցեղակրոն ուխտերը շարունակում են մնալ Թուրքիայի պարտատերերը:

Նշված շարադրանքը իր ողջ խտությամբ ու քաղաքական եւ գաղափարական ասպեկտներով չափազանց կարեւոր է դառնում այսօր:

Կարծում եմ, որ հայոց պատմությունը հոգու ողջ էությամբ սերտած հայի համար անբարոյական է հարց բարձրացնել, թե արդյոք հայությունը պիտի ջնջի իր հիշողությունից Թուրքիայի անասնականությունը, թե ոչ: Այսօր բնական գիտությունները, մասնավորապէս ֆիզիոլոգիան, ինչպէս նաեւ հոգեբանությունը, հանգում են այն տեսակետին, որ մարդու ապրած հոգեկան ցնցումները եւ ընդհանրապէս բոլոր հոգեբանական պահերը չեն կորչում եւ ջնջվում անհետեւանք, այլ որոշակի մուտացիոն փոփոխություններ մտցնելով գենոֆոնդի մեջ՝ գրանցվում են, արձանագրվում գեների մեջ, ավելացնելով քնած գեների քանակը, որոնք կազմում են ողջ գենոֆոնդի 95%-ը: Ուստի, պետք է ենթադրել, որ Հայոց ցեղասպանության ցավն ու տառապանքը՝ միախառնված թրքատյացության հետ, մեզ են փոխանցվել ժառանգաբար, այլապէս ինչպէս բացատրել 1965թ. ցույցը, ինչպէս բացատրել Ղարաբաղյան շարժումը, հայությունը թուրքին չի սիրում ոչ թե իր մտքի ողջ զորությամբ, այլ ատում է հոգու էությամբ եւ սրտի ողջ բաբախյունով, քանի որ հայ արյան մեջ սկսում են զարթնել նախնիների կրած տառապանքները:

Եվ սա միայն սաղիստական, ցավային հակազդում չէ, այլ նաեւ բարոյահոգեբանական հակազդում թուրքական շնակա-նությանը, անբարոյականությանը, այս կապակցությամբ լսենք Նժդեհին. «Աշխարհի ամենասեռակենտրոն ժողովուրդն է նա, որի շնաբարոյությունը սեռն իսկ փոխադրած է երկինք... Հայը հավիտենականության զգացումն ունի, թուրքը՝ իր անխուսափելի նահանջի եւ պարտության ներշնչումը... Հայն ամենավսեմ հասկացողությունն ունի մայրության մասին: Թուրքն աշխարհի միակ ժողովուրդն է, որ մայր չունեցավ, չունի եւ պիտի չունենա:

Յոթնիցս նվիրական է հայրենիքի հասկացողությունը հայ մարդու համար. թուրքը հայրենիք չունի եւ պիտի չունենա, քանզի մայր եւ ընտանիք չունեցավ: Պետություն դեռ ասել չէ հայրենիք:

Թուրքը իժն է, որ դեռ մոր արգանդում զինված է թույնով»⁶:

Այսպիսով, հայ-թուրքական հակադրությունը նաեւ աշխարհայացքային տարաբեւեռությունից եկող զգացմունքային ամբողջականություն է, ահա թե ինչու հնարավոր չէրավ, հնարավոր չէ եւ հնարավոր պիտի չլինի հայ-թուրքական իրական հաշտեցումը. առժամանակյա զինադադարները դեռ հաշտեցում չեն:

Սակայն այս ամենի իրականության հետ միաժամանակ, այսօր եւս կան տարրեր, որոնց հոգու էությունը չի կազմում ազգային բարոյականը, եւ սրանք իրենց տեղատվությունը թուրքիայի նկատմամբ համարում են պատմականորեն տրամաբանական քայլ եւ ազգային բարոյականի տեսակետից ոչ միայն բացատրություն չեն տալիս, այլեւ բերում են ապուշ հիմնավորումներ: Մեկնաբանելով, թե դա անհրաժեշտություն է, քանզի մեզ անհրաժեշտ է հայ-թուրքական սահմանի բացումը եւ մենք չենք կարող ապրել հավերժ շրջափակման մեջ: Շշմարտություն կա ասվածի մեջ, բայց անբարոյական թուլության տհաճ նեխահոտը խեղդում է, նշվածի մասին անդրադարձ կա նաեւ տարոնակաւնության մեջ, ըստ որի՝ ցավն այնտեղ է, որ հայրենասեր, տարոնատիպ հայի հետ ազատագրական սայլին է լծված նաեւ ոչ տարոնատիպ հայը իր վախկոտությամբ, թուլամորթությամբ, հոգեկան նվաստությամբ եւ, ինչու չէ, միտումնավոր հայրենասիրությամբ:

Ըստ սրանց, պետք է վաճառել սեփական հոգին եւ սեփական գիտակցությունը՝ թուրքիայի աջը համբուրելու եւ իրենց ճակատին դնելու համար: Սրանք չեն գիտակցում, որ թուրքի գեների հաջողությունը սեփական ուժի լիությունից չէր, այլ մեր ժողովրդի դիմադրության պակասից: Ամենեւին էլ պարտադիր չէ խաթարվել հոգեպես՝ տնտեսապես շահելու համար, առավել եւս քաղաքականության մեջ, որտեղ նորմ է դարձել մի բան ասելը եւ մի այլ կերպ գործելը՝ վարչավյան համաձայնագիրը չկապեց Զիտլերի ձեռքերը ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար, ընդհակառակը՝ նա այն օգտագործեց որպես թշնամու աչալրջությունը թուլացնող միջոց: Հայ պարտավողական ու թուլակամ մասը ինչքան էլ

ճգնի կաշվից դուրս գալ, թուրքիայի գարշապարը գրկել, միեւնույն է թուրքը գիտակցում է, որ թրքատյացությունը չի ջնջվելու հայ ոգուց, քանի որ հոսում է մեր արյան մեջ որպես հրեղեն հեղեղ: Եվ եթե թուրքիան այնուամենայնիվ գնաց զիջումների, ապա դա չի անելու հայ ստրկամտության իրեն մատուցած ծառայությունների դիմաց, այլ միջազգային հարաբերությունների եւ աշխարհաքաղաքական իրավիճակի բնականոն ճնշման տակ: Սակայն թուրքիան միշտ էլ երագում է եւ հարմար առիթ է փնտրում՝ մեր ժողովրդին գլխովին ոչնչացնելու եւ երկրի երեսից ջնջելու համար: Թուրքիան գիտակցում է, որ իր գոյությունը անվտանգ եւ առանց ցնցումների պահելու համար կենսական անհրաժեշտություն է նաեւ հայության մնացած մասի բնաջնջումը, հարցը մեզ երկուսիս համար էլ ընդունում է գոյության կռվի բնույթ, որի վերջնական արդյունքը պիտի լինի մեր երկուսից մեկի հեռացումը պատմության թատերաբեմից: Եվ այնուամենայնիվ, հայ պարտավողականները համառորեն փակում են աչքերը, սրանք իրենց կարճ տրամաբանությունից այն կողմ բան չեն տեսնում, սրանց համար ցեղակրոնությունը կարող է հանդիսանալ այն, ինչ կարող է լինել վիրաբույժը սրտի անբավարարությամբ տառապող հիվանդի համար, սրանց համար խորթ է մնում ցեղակրոնության արիական էությունը, որը տալիս է աշխարհը կառավարող օրենքների բնութագիրը, ըստ որի՝ աշխարհը կառավարում է հակամարտության օրենքը: Ցեղակրոնությունը ճգնում է մեր իդեալիստ ազգի համար հասկանալի դարձնել կյանքի դաժան օրենքը, մարդկության պատմությունն ապացուցում է, որ բոլոր ազգերը ձգտում են արելի տակ հարմար եւ կայուն մի տեղ գրավել: Պատմության մեջ իրական արդարություն չկա, արդարությունը տվյալ պահին ուժեղի կողմից հաստատված իրերի դասավորությունն է, հետեւաբար՝ հաղթանակը ոչ թե արդարության տրամաբանական հաջողականությունն է, այլ ուժեղի ձեռքբերումը:

Հայ պարտավողականները չեն ցանկանում ըմբռնել նշված տրամաբանությունը, սրանց ազգադավ դիմապատկերը ինչպես նույն էր այն ժամանակ, այնպես էլ չի փոխվել հիմա՝ նույն թույլ ու իրենց թուլությունից չամաչող հոգեբանական դիմագծերն են: Ցեղակրոնությունն այսպես է պատասխանում սրանց անբարո վարքագծին:

Դրանք՝ հայ պարտավորականները, զարմանալիորեն նման են իրար, անկախ նրանից, թե երբ, որ դարում են ծավալել իրենց քայքայիչ գործունեությունը, ժամանակը անգոր է եղել վերափոխել սրանց դիմապատկերը: Այսօրվա հայ պարտավորականը ամենավատն է ու ամենավատագավորը, սա ճգնում է ապացուցել, որ մենք թուրքիայի տկար ու թույլ հարեւանն ենք, ուստի այլ ելք չունենք, քան մոռանալ մեր պատմությունը, ներել թրքությանը եւ մտնել նրա թելի տակ: Ասվածը դիվանագիտական խորամանկություն եւ թուրքիային շփոթեցնելու փորձ չէ իր էությանը, այլ թուլական վախկոտության եւ վախի արտահայտություն: Տեղակրոնությունը ճիշտ է, երբ նկատում է, որ այո՛, ծիծաղելի է տկարի ներումը, ինչպես եւ նրա հաշտարար ոգին: Տկարին իրավունք տրված չէ մեծահոգի լինելու: Նա չի էլ կարող այդպիսին լինել: Եվ եթե դա հնարավոր լիներ, միեւնույն է, կիրառելի չի լինելու մեզ համար, քանի որ թուրքիան իրավացիորեն մեր ներումն ու հաշտարար ոգին պիտի վերագրի մեր թուլությանը եւ ոչ թե մեր մեծահոգությանը: Ներելով՝ մենք մատնած կլինեինք, թե մահացիորեն թույլ ենք:

Տեղակրոնությունը իր դիպուկ նկատողությունն է անում՝ ասելով, որ եթե այդքան շատ եք ուզում ներել թուրքին, ուստի անհրաժեշտություն է նախ հաղթել նրան եւ ավելացնում, որ հայությունը մի օր կների նրան, սակայն ոչ թե վախից դրդված, այլ իր առջեւ ծնկի բերելուց հետո: Իսկ մինչ այդ օրը նա մեր գլուխը պիտի փնտրի, ահա թե ինչու է մեզ պետք ցեղակրոնությունը:

Նա, ով ոչ միայն ուղիղ նայել է թուրքական վտանգի աչքերի մեջ, այլեւ հանել այդ վտանգի աչքերը՝ իրավունք ունի հայ կյանքում իր արժանավայել տեղը գրավելու:

Նժդեհը «Ցեղային արթնություն» հողվածում՝ «Իմ խոսքը նորահաս սերնդին» վերտառության տակ, խոսում է հայ մտքի վրա ցեղակրոնության ազդեցության մասին, ըստ որի՝ սփյուռքահայության գիտակցությունը, բարոյականությունը, փիլիսոփայությունը պիտի լցվի ցեղակրոնությամբ, քանզի միայն ցեղակրոնության շնորհիվ հնարավոր կլինի պաշտպանվել օտար միջավայրի բացասական ազդեցությունից, հաստատել ներքին հասարակական եւ քաղաքական համերաշխություն եւ ոչնչացնել թուրքական վտանգը՝ դամոկլյան սրի պես կախված մեր գլխին: Հակադրվելով

սփյուռքի այդ ժամանակվա թուրքոֆիլական հայ տրամադրություններին՝ ցեղակրոնությունն իր հետեւորդներին մատուցում է հետեւյալ ազգային վերաբերմունքը. «Ի՞նչն է հայորեն ճշմարիտը», - հարցին՝ ցեղակրոնը պետք է պատասխանե. Հայաստանը կար եւ պիտի վերականգնվի թուրքիայի անդամահատությամբ:

- Ի՞նչն է հայորեն բարին.

- Անընտրողաբար հարվածել թուրքն ու թուրքիան:

- Ի՞նչն է հայորեն գեղեցիկը.

- Ապրել լեգենդականության ոգով եւ հասունանալ ցեղի մղելիք ճակատամարտերի համար:

Թրքատյացությունը: Այո՛, կատաղի է մեր ատելությունը, քանզի կտառապենք որպես հայ եւ որպես մարդ: Մեր մեծ տառապանքն է պիտի ծներ մեր մեծ ատելությունը, որն այլ բան չէ, եթե ոչ հոգեբանական պատասխանը հայ տառապանքի»⁷:

Կարելու է նաեւ անդրադառնալ Նժդեհի մյուս հողվածներին, մասնավորապես՝ 1933թ. Բոստոնում, «Հայրենիք» օրաթերթում լույս տեսած՝ «Ցեղային արթնություն» հողվածաշարին: Նշված աշխատությունը մանրակրկիտ կերպով ներկայացնում է ցեղակրոնության գաղափարական եւ նպատակային ներկայանակը:

Իսկ «Մեր ապագան վտանգված» հողվածում խոսվում է պատմական եւ աշխարհաքաղաքական տեսանկյունից ցեղակրոնության անհրաժեշտության հիմնավորման մասին: Նժդեհը իր հիմնավորումները բերում է հենվելով այն ժամանակվա խորհրդային Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակի վրա:

Զնայած ԽՍՀՄ-ի փլուզումից հետո փոփոխություններն ակնհայտ են, սակայն ամեն ինչ մեծ մասամբ նույնն է մնացել՝ համապատասխանելով Նժդեհի բնութագրմանը: Արեւմտյան Հայաստանն այսօր անհայաբնակ է՝ կազմելով օրվա հանրապետական թուրքիայի մի մասը: Այսօրվա Հայաստանը Արարատյան դաշտի մի մասն է՝ ընկած Ադրբեջանի եւ թուրքիայի միջեւ: Հայության քաղաքական վիճակից բացի, կա նաեւ մեկ այլ խնդիր եւս, որը պակաս վտանգավոր եւ մտահոգիչ չէ. դա մեր աշխարհագրական դիրքն է. «Աչքի անցկացրեք այն գիծը, որը մեր այսօրվա սահմաններն են կազմում: Թուրքերը Իգդիրում՝ Էջմիածնի պատերի տակ: Թաթարը Շարուրում՝ Երեւանի պատերի տակ:

Նույնը Նախիջեւան-Օրդուբադում՝ դարանամուտ Սյունիքի թիկունքում: Արեւելքից էլ Ադրբեջանը: Տեսնում եք, դա այլ բան չէ՝ քան մի երկաթե օղակ հայ երկրի շուրջ»⁸: Վերլուծում է Նժդեհը եւ ապա տալիս է փրկվելու դեղատոմսը՝ գրելով, որ մեր ժողովրդի բնաջնջման վտանգն այսօր ամենամեծն է: Փոխվել են հայ ժողովրդի հոգեբանությունը, քաղաքական վիճակը, աշխարհագրական դիրքը, իհարկե՝ ի վնաս մեզ, եւ վտանգը գերագույն է: Սակայն Նժդեհը խուճապի չի մատնվում եւ փնտրում է փրկության ուղիներ՝ ասելով, որ տվյալ իրավիճակում հայ ժողովուրդը կարող է փրկվել միայն որդեգրելով իր իրական հոգեկան կառուցվածքը՝ ուժեղանալու եւ դրա հաշվին ապրելու համար, ապա Նժդեհը ավելացնում է, որ ուժը միայն նյութական կողմ չունի, այլ կա նաեւ հոգեբանական ուժը, որը կարող է փրկել մեզ:

Ցավոք, նույն աշխարհագրական սահմանները մեծ մասամբ նաեւ մեր այսօրվա սահմաններն են, հետեւաբար Նժդեհի մտահոգությունը տեղին է նաեւ այսօր, եւ չնայած դարաբաղյան հաղթանակի փաստին ու մեր հզոր բանակի առկայությանը, որը եւս մեր բարոյական ուժի արդյունքն էր, մեր ապագան նույն վտանգներով իրի է նաեւ այսօր: Նժդեհը տալիս է նշված վիճակում գոյատեւելու բանալին՝ հոգեբանական ուժը, եւ հենց այս հասկացողությամբ է ամբողջովին շաղախված ցեղակրոնությունը, ահա թե որն է ցեղակրոնության արդիականությունը՝ նրա միջոցով չկորցնել արիական քաջ հոգեբանությունը՝ չբնաջնջվելու համար: Այսպիսով, ցեղակրոնության սկզբունքները կարելի էր փոխել նաեւ ազգային անվտանգության տեսակետից:

Նժդեհը «Ցեղային արթնություն» հողվածում տալիս է նշվածի տրամաբանական շարունակությունը եւ նշում հոգեբանորեն, բարոյական հզորության եւ հայ հաղթանակի նախապայմանները:

Ինչպես արդեն նշեցինք, ցեղակրոնությունը հաղթանակի հասնելու համար ենթադրում է բարոյական ուժ, սակայն այդ ուժին տիրապետելու համար պետք է գիտակցել, թե ինչպիսի գորավոր կարողություններ կան թաքնված մեր ցեղի մեջ, բացահայտել դրանք, զինակցել դրանց հետ, սակայն այդ ուժերը բացահայտելու համար պետք է լինել ցեղաճանաչ: Միայն ինքնաճանաչ, ինքնացեղաճանաչ անհատների առջեւ են բացվում այդ գաղտնիքի դռները, միայն նրանք են կարողանում անգիտակցաբար

օգտվել այդ ուժերի զինակցությունից: Այսպիսով, Նժդեհը ցեղակրոնության միջոցով մեզ տալիս է հաղթանակի էլիքսիրը: Նժդեհի ուսմունքը մեզ հոգեբանորեն դարձնում է հաղթանակած եւ տալիս է հոգեբանական այն գործիքները, որոնք արթնացնում են ազգի պատմական ինքնագիտակցությունը:

Ցեղակրոնության շնորհիվ հայությունը տեր է դառնում ազգային աշխարհայեցողության, տալիս է ճիշտ դաստիարակություն մատաղ սերնդին:

Ցեղակրոնությունը մտահոգվում է մեր ազգային ճակատագրով եւ նշում կատեգորիաներ, որոնք պիտի կառավարեն մեր ազգային ճակատագիրը, այն հոգեբանորեն հնարավոր է դարձնում այդ ճակատագրի ղեկի հանձնումը հայ ժողովրդի ձեռքը: Անցեղաճանաչությունն ունի նաեւ կոնկրետ վտանգներ, ցեղաճանաչության բացակայության պատճառով ժողովուրդն իր երիտասարդությանը կդաստիարակի սխալ, որի հեռակա հետեւանքները կլինեն ազգի կողմից որդեգրվելիք սխալ քաղաքականությունն ու ռազմավարությունը, իսկ ազգի ճակատագրում դրանց խաղացած մեծ նշանակությունը կասկածից վեր է:

Ցեղակրոնության արդիականությունը եւ կարելիությունը նաեւ նրանում է, որ այն հստակ ըմբռնում ունի մեր ազգի անհատականության, առանձնահատկության եւ անաղարտության պահպանման գործում եւ որ իր հոգեբանական ազդեցության շնորհիվ ապահովում է նշված հասկացողությունների առկայությունը որպես բարոյական իմունիտետ: Նույն մտահոգությունն է արտահայտվում տարոնական աշխարհայեցողության մեջ, ըստ որի մենք, մեր պայքարի համար, մեզ անհրաժեշտ զենքերն ու մտքի մեր ղեկավար սկզբունքները պիտի առնենք ոչ թե օտար գաղափարներից, այլ մեր պատմության հավիտենական ոգուց:

Ցեղակրոնության մեջ խնդրին ավելի մանրակրկիտ է անդրադարձվում, ցեղակրոնությունը կոնկրետ վերաբերմունք ունի օտարամոլության հանդեպ, նշվածի մասին ցեղակրոնության տրամաբանությունն այն է, որ սեփական ցեղային արժեքներով չապրող ժողովուրդն օտար մշակույթն ընդունում է իր անհատականության հաշվին եւ ապազգայանում է, քանի որ նմանակումը ոչ մի կերպ չի ավելացնում ազգի հոգեւոր պաշարը, այլ հակառակը՝

խաթարում է ժողովրդի ազգային բնութագիրը, ուստի մեր ազգին անհրաժեշտ է ոչ թե եվրոպականացում, այլ՝ ցեղայնացում:

Այսպիսով, Նժդեհի գաղափարների միջոցով ազգը հեռու կմնա հոգեւոր ապականումից՝ կարելու անհրաժեշտություն ազգի անաղարտությունը պահելու գործում:

Նշված հարցի շուրջ արծարծում կա նաեւ Նժդեհի «Վտանգավոր մոլորություններ» հոդվածում. «Կոսմոպոլիտի հայրենիքը, իր հայտարարությամբ, համայն աշխարհն է, համայն մարդկությունը: Չկան ազգեր, կա մարդկությունը, - ասում է այդ երազատեսը եւ հայացքը ուղղում դեպի անորոշ հեռուները: Պիտ սիրել, - ասում է սա. պիտ սիրել բոլոր մարդկանց առանց ցեղի, գույնի, կուլտուրայի խտրության: Այո՛, պիտ սիրել, պիտ կարեկցել... Բայց միթե մեր դեպ մարդկությունն ունեցած սերը ազատում է մեզ եւ մեր ժողովուրդը սիրելուց, հայրենասեր լինելուց: Մերը պիտի չսիրել, որովհետեւ պետք է սիրել եւ օտարինը: Մի մասը պիտի չսիրել, որովհետեւ սիրում ենք ամբողջությունը: Անհեթեթություն չէ՞ դա... չէ, լրջորեն կաղում է այդ մոլար վարդապետությունը. նրան պակասում են տրամաբանությունը եւ բարոյականությունը: Յեռու մեզնից այդ մոլորությունը»⁹: Կոսմոպոլիտությունը եւս քարոզում է օտարաֆիլություն, ենթադրում է նմանողություն, բթամիտ կրկնողություն: Սա, տարածելով օտարահակություն, երկրորդ պլան է մղում ազգային լեզուն, ազգային միտքը, ազգային, տրամաբանությունը, ազգային կենցաղը, սա սպանում է ազգի անհատականությունը՝ նրան տանելով ձուլման ճանապարհով: Նժդեհը նշում է. «Ե. դարում կրակի բախտը փորձող պարսկականության խոփը քարին զարկողը հայոց թարմաշունչ ցեղայնությունն էր, որը այսօր կռվի պիտի կանչել հայասպան քրքության եւ ցեղամերժ լենինականության դեմ»¹⁰:

Տեսնում ենք, որ Նժդեհը պարսիկ Չազկերտի դիվային՝ հայոց ուժացման ծրագիրը վիժեցնողը ցեղն էր համարում: Ինչպես հիմա կոսմոպոլիտները, այնպես էլ նույն մեթոդներն էին բանեցնում նաեւ Ե. դարում պարսիկները՝ իրենց նիզակներն ուղղելով նախ հայ լեզվին, հայ դավանանքին ու հայ մտածումին, եւ միայն ցեղի ուժականության միջոցով ազգը փրկվեց իր գլխին կախված դամոկլյան սրից: Նույն մարտավարությունից օգտվեցին նաեւ ինտերնացիոնալ կոմունիստները՝ ազգը քայքայելու համար

քարոզելով աթեիզմ՝ հարված հայ դավանանքին, հայ հոգուն, մողայիկ ռուսականություն՝ հարված հայ լեզվին ու հայ տրամաբանությանը, մարքսիզմ ու մատերիալիզմ՝ հարված հայ ստեղծագործ ու իդեալիստ մտքին: Այժմ նույնը խաղարկում են մեր դեմ նույն քաղաքական նպատակին ձգտող այլ ուժեր՝ արդեն կոսմոպոլիտության տեսքով:

Կոսմոպոլիտությունը ռեալ վտանգ է, գործիք աշխարհը կառավարելու ձգտող մութ ուժերի ձեռքին, ովքեր ուզում են անասնացնել, կամազրկել, մթագնել ազգերի գիտակցությունը եւ նրանց դարձնելով տխմար ամբոխներից կազմված հավաքականություններ՝ կառավարել աշխարհը: Սա նկատի ունի Նժդեհը՝ խոսելով ցեղամերժ լենինականության մասին, այն եւս, ինտերնացիոնալիզմ քարոզելով, հանդիսանում էր աշխարհաքաղաքացիության ծնողա, սակայն, այնուամենայնիվ, ազգը նշված 70 տարիների ընթացքում մնաց ազգային աշխարհայացքի կրող եւ միակն էր, որ 3 անգամ ընդվզեց իր վզին փաթաթված ապագային վարչակարգի դեմ:

Այսօր նույն պլատոնական սիրո հիմար գաղափարը քարոզում են այլ ուժեր՝ ունենալով նույն նպատակը: Դիվային ծրագիրը մնացել է նույնը, փոխվել են այն խաղարկողները: Տեսնում ենք, որ Նժդեհի գաղափարների արդիականությունն ավելի որոշակի է դառնում: Սակայն Նժդեհի գաղափարները ենթադրում են նաեւ մեկ այլ կարելորագույն գործառույթ, որ այսօր դարձել է այդքան կարելու: Ղարաբաղյան շարժումից հետո սոցիալական անջրպետ առաջացավ ժողովրդի տարբեր հատվածների միջեւ, եւ ազատ շուկայական հարաբերությունների հաստատման հետեւանքով, բնականաբար, առաջացավ հարուստների եւ աղքատների խավային բաժանում, նյութական եւ կենցաղային հողի վրա ծայր առավ անհասկացողություն ազգի որդիների միջեւ, սկսվեց խավային շերտավորում, դասակարգում եւ այդ դասակարգերի միջեւ փոխադարձ անհասկացողություն, անվստահություն եւ այլ բացասական երեւույթներ: Դրանց ծանր հետեւանքներն ազգերի համար մեզ ծանոթ են պատմությունից. ապացույց՝ եվրոպական երկրների հեղափոխությունները եւ վերջապես հոկտեմբերյան կասկածելի հեղափոխությունը՝ հրահրված Ռուսաստանը տապալելու ձգտող ուժերի կողմից, որտեղ վարպետորեն խաղարկվեց եւ

օգտագործվեց հասարակության տարբեր շերտերի թշնամանքը միմյանց հանդեպ:

Ցեղակրոնությունը գալիս է մեզ զերծ պահելու նշվածից, այն քարոզում է ներցեղային բարոյական, որը ստեղծում է ներհասարակական բարոյական նորմեր եւ օրենքներ, որոնք պիտի գան ղեկավարելու եւ վերահսկելու ազգային հասարակական կյանքը, այն դատապարտում է եզոիզմը՝ այն դասելով վերը նշված վտանգավոր մոլորությունների շարքին: Ցեղակրոնությունը եսասերի մասին խոսում է որպես ուրիշների հաշվին ապրող, միայն իրավունքներ ունեցող եւ պարտականություններ չհանդուրժող, հասարակության միջոցներն առանց լրացնելու սպառող զզվելի էակի մասին եւ բանաձեւում, որ նա իր այդ հոգեկերտվածքով իրավամբ դառնում է շրջապատի թշնամին: Սրանց համար բարձրագույն արժեքը շահն է, եւ նույնիսկ հայրենիքը կարելի է տեղափոխել այնտեղ, որտեղ իր տաղտուկ կյանքի շահը մեծանում է: Դա է պսակագերծում սրբությունները, իղեալները, հայրենիքը - եզրափակում է ցեղակրոնությունը եւ իր խոսքն է ուղղում նաեւ հայ մեծահարուստներին, մատնանշելով.

– Նյութականացած բարեկեցիկները միջոցներ ունեն՝ օտար երկնքի տակ ըստ պահանջի ապրելու համար, եւ սրանք կարիք չունեն հոգեւոր արժեքների եւ բարձր բարոյական կերպարների, սրանց համար եթե կա հայրենիք – լավ, չկա – ոչինչ, առանց նրա էլ կյանքը հարմարավետ է, նրանք հայրենասիրության կարիք չեն զգում:

Ցեղակրոնությունը տալիս է նաեւ աշխարհի ռեալ իրական պատկերը, հանգամանքների իրական, ճշմարիտ դրվածքը, այն ցույց է տալիս իրական, դեպի փրկություն տանող ճանապարհը, այն հոգեբանորեն ձգտում է հային հանել այդ ճանապարհի վրա՝ նրա երթը հաղթական, խրոխտ եւ հարգանք պարտադրող դարձնելու համար: Նժդեհը բարձրացնում է նաեւ քաղաքական կողմնորոշման հարցը, որն այսօր այդքան մոդայիկ է դարձել հայ քաղաքական կյանքում: Հայ «քաղաքագետներն» ամեն օր աղմուկաղաղակ են բարձրացնում, բանավեճերի են բռնվում իրար հետ, թե որ կողմնորոշումն է ավելի ձեռնտու՝ ռուսականը, ամերիկյանը, թե եվրոպականը: Նշված տրամադրությունը միշտ էլ սնուցանել է հայոց ձախողումը: Պատահական չէ, որ Հ. Քաջագունին համե-

մատության եզրեր էր մտցնում թուրքական եւ ռուսական կողմնորոշումների միջեւ իր՝ «Ռուսիա, թե Թուրքիա» գրքույկում: Նժդեհը խաչ է քաշում նշված մտածողության վրա եւ ցույց է տալիս դրա կործանարար լինելը ինքնապաշտպանության վրա: Նախ, ըստ ցեղակրոնության, անհրաժեշտ է դրսից փրկություն չհուսալ, քանի որ թույլը փրկություն չունի, իսկ հույսն իր վրա չդնողը չի կարող ուժեղ լինել, ուստի պետք է ինքնապաշտպանության հույսը միայն սեփական ուժերի վրա դնել: Կա պատմության խրատը, որը սովորեցնում է, որ պետք է լինել այնքան ուժեղ, որ թշնամին չհանդգնի հարձակվել: Հաշվի առնելով մեր պետության այսօրվա իրավիճակը՝ Նժդեհի այս խոսքը կարելի է համարել մարգարեական: Չէ՞ որ մեր բանակի ուժն ու մարտունակությունն է սանձում թշնամուն, նրան ստիպում չհանդգնել առաջ խաղալ: Մեր այսօրվա ձեռքբերումներն ու մեր ուժը գալիս են գործով փաստացի ապացուցելու Նժդեհի գաղափարների իսկությունը: Նժդեհը պատգամում է, որ ուժն անհրաժեշտ եւ կարելորագույն պատգամ է անվտանգ եւ ապահով լինելու համար, եւ բացառիկ խելքն ու տաղանդը ի չիք են դառնում եւ կորցնում են իրենց արժեքը առանց ուժի զինակցության, հետեւաբար Նժդեհը պատգամում է լինել ուժեղ, էլի ուժեղ եւ միշտ ուժեղ:

Այսօրվա մեր հեռուստատեսային եթերը, մեր թերթերի բովանդակությունը, մեր հասարակության մեջ հնչող խոսքը եւ ընդհանուր բարոյաժողովրդական վիճակը լավագույնը չեն հայության համար: Այդ իրավիճակում տեղի է ունենում ազգի սթափ գիտակցության ժանգոտում, ազգը սկսում է այլեւս վտանգավոր չհամարել իր գլխին կախված վտանգը, մեր վզին փաթաթված նյութական ճահիճը կլանում է բոլոր բարձր նպատակներն ու ձգտումները, ուստի ցեղակրոնություն ենք քարոզում նշված վիճակը փոխելու համար, քանզի ցեղակրոնությունը կոնկրետ վերաբերմունք ունի նշված հարցերի շուրջ եւ դրա կապակցությամբ նշում է, որ ազգի տվյալ պահի իղեալը նրա ապագայի հայելին է: Բարձր բարոյականով օժտված նպատակները եւ դրանց հասնելու ձգտումը ազգերին հեռու են պահել բարոյական կործանումից: Ահա եւս մեկը ցեղակրոնության արդիականություններից՝ ցեղակրոնության համահայկական արժեքների եւ նպատակների միջոցով ազգը հանել առօրեական նյութական ու

ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՅԻ ՈՒՍՍՈՒՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վաղը ազգովին պիտի հնձենք այն,
ինչ որ սերմանում ենք այսօր:

Գարեգին Նժդեհ

ԽՍՀՄ փլուզումից եւ Չայաստանի անկախության վերականգնման առաջին իսկ օրվանից մտավորականության, առաջադեմ քաղաքական գործիչների կողմից բազմիցս խոսվել է ազգային գաղափարախոսության դերի մեծացման մասին: Այս ուղղությամբ քննարկումներ անցկացնելու եւ կոնկրետ քայլեր կատարելու անհրաժեշտությունը, ինչպես ցույց է տվել պատմությունը, առաջ է գալիս ազգային սուր ճգնաժամերի ընթացքում: Սակայն մեր օրերում, համընդհանուր համաշխարհայնացման կամ միօրինակացման ժամանակաշրջանում, այս ուղղությամբ իրականացվող քայլերն առավել քան արդիական են եւ հրատապ:

Այնինչ, Չայաստանի երրորդ Չանրապետության առաջացման շրջանում մեծ ուշադրություն չդարձվեց ազգային գաղափարախոսության խնդրին, որը կուղղորդեր մեր հանրապետության հետագա զարգացումը:

Ներկայիս որոշ գործիչներ, խոսելով ազգային գաղափարախոսության ստեղծման անհրաժեշտության մասին, մոռանում են այն իրողությունը, որ նման արժեհամակարգ մեզանում արդեն գոյություն ունի: Եվ մեր խնդիրը պետք է լինի այն ժամանակի պահանջներին համապատասխանեցնելը եւ մեր մատաղ սերնդի մեջ այդ գաղափարների տարածումն ու արմատավորումը:

Խոսքը վերաբերում է հայ ժողովրդի ականավոր զավակ Գարեգին Նժդեհի թողած գիտատեսական բացառիկ ժառանգությանը, որը հնարավորություն է տալիս զուգորդել արեւմտյան ժողովրդավարական արժեքային համակարգը՝ ազգային արժեհամակարգերի հետ:

Այս առիթով Նժդեհը նշել է, որ հայրենասիրությունն ու մարդասիրությունը համատեղելի են, եւ մարդասերը կարող է լինել նաեւ ազգասեր: Չեւտեաբար, անհիմն են բոլոր մեղադրանքները

գռեհիկ ճահճից ու տեր դարձնել համահայկական իդեալների: Չայության համար այդպիսի նպատակը մեկն է եւ համընդհանուր՝ հայոց աստվածատուր հայրենիքի քաղաքական եւ ազգային ազատագրումը:

Նժդեհի ուսմունքը գալիս է հայությանը տեր դարձնելու իր իրական ձգտմանն ու նպատակին, եւ այդ նպատակի ճանապարհին նա հայությանը հետ է պահում հոգեւոր փտախտից:

Այսպիսով, ցեղակրոնությունն ավելի սուր կերպով է արտահայտում իր անհրաժեշտությունը, քանի որ այսօրվա նյութականացվող եւ նյութական արժեքներ պաշտող աշխարհում հայությունը կարող է հոգեւոր հիվանդություններով տառապել:

¹ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Ցեղակրոնութիւնն իբր յաղթանակի գօրոյթ, էջ 485:

² Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Ցեղակրոնութիւնն իբր յաղթանակի գօրոյթ, էջ 484:

³ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Ինչո՞ւ ստեղծվեց ցեղակրոն շարժումը, էջ 474:

⁴ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Որդիների պայքարը հայրերի դեմ, էջ 75:

⁵ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Էջեր իմ օրագրեն, էջ 51-52:

⁶ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., Ցեղային արթնութիւն, 2006, էջ 498:

⁷ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Մեծ եղեռնի խորհուրդը, էջ 500-501:

⁸ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Մեր ապագան վտանգված, էջ 28:

⁹ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Վտանգաւոր մոլորութիւններ, էջ 31:

¹⁰ Գարեգին Նժդեհ, Չատընտիր, Եր., 2006, Ցեղակրոնութիւնն իբր յաղթանակի գօրոյթ, էջ 481:

այն մասին, թե իբր Գարեգին Նժդեհի ուսմունքի մեջ առանցքային տեղ է գրավում ազգայնամոլությունը: Մինչդեռ Նժդեհը առաջ է քաշում միայն պատմական հայրենիքի ազատագրման խնդիրը՝ բացառելով աստվածությունն այլ ազգերի ու մշակույթների նկատմամբ: Մուշեղ Լալայանի կարծիքով՝ Նժդեհի ուսմունքի համամարդկային արժեքը պակաս կարելու չէ, քան զուտ ազգայինը, եւ եթե մենք կարողանանք նաեւ Նժդեհին եւ նրա ուսմունքը ներկայացնել աշխարհին իբրեւ համամարդկային արժեք, ապա, վստահաբար, նա մի օր արժանի տեղ կգրավի աշխարհի մեծերի շարքում¹:

Վերը նշվածի վկայությունն են նաեւ Գ. Նժդեհի հետեւյալ խոսքերը. «ժողովուրդներն ապրում են իրենց, ստեղծագործում՝ մարդկության համար»²:

Որպես հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության հիմնական դրույթներ պարունակող համակարգ, Գարեգին Նժդեհի հայացքներն այսօր էլ խիստ արդիական են: Ուստի Նժդեհի «Ցեղակրոնություն» եւ «Տարոնականություն» ուսմունքները կարող են հանդիսանալ գաղափարական հզոր հիմք՝ ողջ հայությանը համախմբելու եւ համազգային խնդիրների նկատմամբ միասնական մոտեցում դրսևորելու համար:

Համաշխարհայնացման ընթացքում հաճախակի հանդիպող հոռի երեւույթների տարածումը հայ երիտասարդության շրջանում բացառելու համար կարելու է այնպիսի արժեքների պահպանումը, որոնք նշել է Նժդեհը իր Ցեղակրոն ուսմունքում:

Այս մասին իրավացիորեն նշել է Նժդեհը. «Հայրենիքի եւ հայրենասիրության թշնամին աշխարհաքաղաքացին է՝ կոսմոպոլիտը: Սրա հայրենիքը, իր հայտարարությամբ, համայն աշխարհն է, ազգը՝ համայն մարդկությունը... Բայց մի՞թե մեր դեպի մարդկությունն ունեցած սերը ազատում է մեզ ժողովուրդը սիրելուց, հայրենասեր լինելուց»³:

Նժդեհը որպես այդպիսի արժեքներ առանձնացնում է հայրենիքի, լեզվի, մեծ մեռելների ուժի եւ նախնիների պաշտամունքը: 1933թ. Գ. Նժդեհը ԱՄՆ-ում նախաձեռնեց Ցեղակրոն շարժումը եւ այն ընդլայնելու նպատակով հիմնադրեց Ցեղակրոն ուխտը, որի «Ծրագիր-Կանոնագրի» մեջ ամրագրված են հետեւյալ սկզբունքները. «Ստեղծել ցեղակրոն սերունդ մը, որուն անդամները ապրին եւ գործեն որպես ցեղի հպատակն ու մարտիկը, ուր որ էլ լինեն եւ ընկերային ինչ դիրք էլ ունենան»⁴:

Այս արժեքներն այսօր էլ կարող են մեծապես նպաստել երիտասարդներին ազգային ոգով դաստիարակելու համար, քանի որ հայրենիքի նկատմամբ սերը յուրաքանչյուր հայի համար պետք է լինի առաջնային՝ անկախ նրա կրոնական, քաղաքական պատկանելությունից: Նժդեհը կոչ է անում միմյանց հետ խոսել միայն հայրենի՝ հիշեցնելով, որ լեզվի կորուստը հանգեցնում է ժողովրդի հոգեւոր արժեքների թուլացմանը եւ անկմանը: Նժդեհը մեծապես կարելու է մեծ նահատակների հիշատակի պահպանումը, քանի որ մատաղ սերնդի դաստիարակման գործում այն ունի առանցքային նշանակություն: Նժդեհը նշում է. «Մի ժողովուրդ բարոյապես այնքան է ուժեղ, որքան ջերմ է նրա պաշտամունքը դեպի իր մեծ մեռելները: Իր նահատակների, իր անմահների դեմ մեղանչող ժողովուրդը մեծապես մեղանչում է իր ապագայի դեմ»⁵:

Ուստի, շատ կարելու է հայ երիտասարդության կողմից նախնիների պաշտամունքը. «որոնք առյուծացան իրենց արիության մեջ, աստվածացան իրենց հոյակապ նվիրումի մեջ, որոնք իրենց արյունը շռայլեցին մեր ցեղի գոյությունը եւ պատիվը հավիտենականացնելու համար»⁶:

Ցեղակրոն գաղափարախոսության արդիականությունը եւ բացառիկ կարեւորությունը նաեւ այն է, որ այս ուսմունքում ազգային միասնության պահպանման տեսակետից ուշադրություն է հատկացվում հայեցի եւ պետական մտածելակերպի դրսևորմանը՝ անկախ ազգի անդամների կրոնական եւ քաղաքական համոզմունքներից: Քանի որ մեր ժողովրդի պատմության մեջ, ցավոք, եղել են այնպիսի գործիչներ, որոնք կրոնական ու քաղաքական ուղղվածությանը ավելի մեծ կարեւորություն են տվել, քան պետության շահերին: Ներկայումս կարելու է նաեւ Տարոնականության գաղափարների տարածումը ողջ հայության շրջանում՝ որպես միավորիչ մեր ժողովրդի ողջ հատվածների համար: Տարոնական ուսմունքի հիմնաքարը Մամիկոնյանների Ուխտն է, սակայն այս ուսմունքում մեծ կարեւորություն է տրվում նաեւ քրիստոնեական արժեքներին: Ուստի, այդ ուսմունքի տարածումը հայության շրջանում կարելու է նաեւ հոգեւոր անվտանգության համար:

Տարոնականության շարժման հիմնադիրներից եւ Նժդեհի գաղափարակից Հայկ Ասատրյանը նշում է. «Տարոնականությունը հայ ցեղի հոգեբարոյականության ուժն է, որով դիմագծվում է մեր պատմական անցյալը»⁷:

Տարոնականության ուսմունքի հիմնաքարը Մամիկոնյանների Ուխտն է, սակայն նրա մեջ քրիստոնեական արժեքներին եւս մեծ կարեւորություն է տրվում: Արտաքին մարտահրավերներին դիմակայելու գործում չափազանց կարեւոր է նաեւ հայության հոգեւոր անվտանգությանն ուղղված սպառնալիքների դեմ պայքարը, եւ քանի որ մեզանում հոգեւոր անվտանգության ապահովումը պահանջում է եկեղեցու, պետության եւ հասարակության ողջ ներուժի օգտագործում, ապա այս համատեքստում Տարոնականությունը կարող է հանդիսանալ ամենաարդյունավետ ուսմունքը այս երեք օղակները միավորելու եւ ազգային, հոգեւոր արժեքները պահպանելու համար:

Արցախյան հիմնախնդրի չլուծված լինելու եւ դրանով պայմանավորված՝ Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսման վտանգի պայմաններում հայը, հետեւելով Մամիկոնյանների օրինակին, պարտավոր է գիտակցել, որ հայրենիքի վտանգի ժամանակ չպետք է խնայի անգամ իր կյանքը: Տարոնականությունը կոչ է անում հայ երիտասարդներին սրբությամբ վերաբերվել ազգային մշակույթին, ինչն այսօր նույնպես շատ կարեւոր է, քանի որ համաշխարհայնացումը մեծապես սպառնում է փոքր ժողովուրդների ազգային մշակույթին: Նժդեհը նշում է, որ Տարոնականությունը նոր ուխտ է՝ տարոնաշունչ Մեսրոպների, Պարթևների, Խորենացիների շնչով օծուն իմացական նոր առյուծներ հասցնելու⁶: Նժդեհը, դիմելով հայ երիտասարդությանը, նշում է, որ թե՛ եկեղեցին, թե՛ դպրոցը, թե՛ ընտրանին մեր ժողովրդի փրկությունը տեսել են վարդանատիպ քաջերի մեջ⁹: Մեզանում կարեւոր է նաեւ Տարոնականության այն գաղափարի ընկալումը, որ հայի տեսակի հավերժացումը ոչ թե Աստուծոց է կախված, այլ՝ գոյության կռվում նրա կենսունակությունից եւ Աստծո հետ կապից: Այստեղ տեղին է նշել Նժդեհի հետեւյալ արտահայտությունը. «Ես հարցնում եմ այնպես, ինչպես ոչ ոք դեռ չի հարցրել. ո՞ր եմք գնում: Մեզ համար տեղ կա՞ պատմության մեջ... Գիտե՞ մեկը, որ եթե դարձրենք գոյություն ունենալ, տիեզերաշենքի մեջ մի հատիկ հյուլե իսկ պիտի չչարժվի»¹⁰:

Իսկ մերօրյա իրադարձությունները եւս մեկ անգամ հաստատում են հետեւյալ ճշմարիտ կարգախոսը. «Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր կռվի»: Վերը նշվածի լավագույն հաստատումն է Գ. Նժդեհի հետեւյալ միտքը. «Պատերազմի դեմ մարգարեական խանդով ու զայրությամբ խոսել են մարդկության ամենաընտիր ներկայացուցիչները, բայց եւ այնպես, նա շարունակում է

պահել իր գոյությունը, հեգնելով իմաստասերների ճշմարիտ խոսքը, սրանց ոսկի երազը»¹¹:

Ուստի, արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար, նախ եւ առաջ, հային անհրաժեշտ է հայրենասեր լինել, քանի որ, ինչպես նշում է Նժդեհը. «հայրենիքներն ապրում են հայրենասիրության, ընկնում՝ նրանց պակասի պատճառով»¹²: Մինչդեռ մերօրյա որոշ գործիչներ, իրենց ներկայացնելով որպես իսկական հայրենասերներ, ազգային գաղափարախոսությունը համարում են կեղծ ու անհեռանկարային: Այստեղ տեղին է նշել Նժդեհի՝ «Երբ հայրենասիրությունը ցեղասիրություն չէ» աշխատանքում արտահայտած այն միտքը, թե «մեր հայրենիքի դժբախտության ներքին պատճառներից գլխավորը դա հայ մարդու օրվա ստահայրենասիրությունն է»¹³:

Հայկական սփյուռքի ծուլման աննախադեպ տեմպը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ Տարոնականության անգնահատելի նշանակությունն այսօր այն է, որ այս ուսմունքը կարող է մեծապես օգնել սփյուռքահայության նոր սերունդներին՝ մնալու իբրեւ հայ եւ նրանց շրջանում վառ պահելու կորուսյալ հայրենիքի ազատագրման համար պայքարելու գաղափարը:

Գարեգին Նժդեհի հայացքները դպրոցի, մամուլի, մտավորականության եւ առաջնորդի վերաբերյալ պահպանում են իրենց արդիականությունը նաեւ մեր օրերում: Ըստ Նժդեհի, դպրոցը պետք է հանդիսանա հայրենասիրության տաճար, որտեղ հայ պատանին պետք է դաստիարակվի հայրենասիրական ոգով¹⁴: Մեր կարծիքով, անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել հայկական դպրոցում իրականացվող հայրենասիրական դաստիարակության խնդրին, քանի որ ազգային ու պետական դաստիարակություն ստացած պատանին է դառնալու մեր երկրի լիարժեք քաղաքացին ու զինվորը:

Նժդեհը կարելուրում է նաեւ մամուլի դերը: Նրա համոզմամբ՝ ժողովրդին դաստիարակելու գործում մեծագույն դերը մամուլինն է: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է, որպեսզի մամուլը ժողովրդի շրջանում սերմանի միասնություն, այն, ինչ մենք տեսնում ենք այսօր, լիովին համապատասխանում է Նժդեհի արտահայտած հետեւյալ տեսակետին. «Ժողովրդի հավաքական սիրտը, նրա ինքնագիտակցութիւնը մշակելու փոխարէն, նրա մի մասը թշնամացնել միւսի հետ, նրա մի մասի անունից հայիոյել միւսին, յարձակել միւսի վրայ - դա առնազն հրէշութիւն է, դա ասել է՝

նորանոր աղետների համար նախապատրաստել հայրենի ժողովուրդը»¹⁵:

Արդի ժամանակաշրջանում էլ մենք հաճախ հանդիպում ենք այնպիսի թերթերի, որոնք այլասերում եւ պառակտում են հայությանը: Ցավոք, այս երեւոյթը նկատվում է նաև հեռուստատեսությունում, ինչն ավելի վտանգավոր է, եւ շատ քիչ են այն հեռուստաընկերությունները, որոնք հայրենասիրություն են տարածում հեռուստադիտողների շրջանում: Եվ այստեղ տեղին է նշել Գ. Նժդեհի հետեւյալ խոսքերը. «Թերթեր ունենք, որոնք ավելի օգտակար պիտի լինէին հայ ժողովրդին, եթե բնաւ լոյս չտեսնէին»¹⁶: Այսօր հետեւելով Նժդեհին՝ նույնը կարելի է ասել որոշ հեռուստահաղորդումների մասին:

Նժդեհի կարծիքով, մտավորականությունը պետք է առաջնորդի ժողովրդին. «Մի ժողովրդի ճակատագրի դարբինը նրա մտաւորականութիւնն է: Յանձին իրենց ժողովուրդների, միշտ էլ չափւում են իրենց մտաւորականութիւնները, յաղթում կամ պարտւում իրենց առաջնորդող տարրերը»¹⁷: Մտավորականության դերի բարձրացման մասին մեզանում բազմիցս խոսվել է: Բարձր գնահատելով մտավորականության դերը՝ Նժդեհը նշում է. «ժողովուրդները այն են, ավելի ճիշտ՝ դառնում են այն, ինչպիսին որ համարւում են իրենց մտաւորականութեան կողմից»¹⁸:

Նժդեհի կարծիքով, պարտվում է այն ժողովուրդը, որի մտավորականության մեջ գերիշխում են պարտվողական տրամադրությունները: Ուստի, շատ կարելոր է, որ հայ մտավորականությունը ազգային հարցերում հանդես գա միասնական եւ օրինակ հանդիսանա մեր ժողովրդի մյուս հատվածների համար:

Վաղվա առաջնորդի կերպարի ձեւավորումը նույնպես կարելոր է, քանի որ մեր ժողովրդի պատմության մեջ քիչ չեն եղել դեպքերը, երբ ապաշնորհ առաջնորդի պատճառով մեծ կորուստներ ենք ունեցել: Նժդեհն անդրադառնում է կատարյալ առաջնորդի կերպարին, որը, ըստ նրա, պիտի ծնի հայությունը, եթե չի ուզում մեռնել. նա հրամայաբար պիտի հայտնվի մեր կյանքում՝ կատարելով փրկարար դերը Լիկուրգոսի, Գանդիի եւ նմանների օրինակով:

Ըստ Նժդեհի՝ առաջնորդը պետք է ունենա առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, ադամանոյա ճակատ, եւ եթե նա չլինի, ապա ամբոխացած ու պարտվողական է լինելու մեր ժողովուրդը: Այսպիսով, Գարեգին Նժդեհի ստեղծած ուսմունքն այսօր էլ կարելի է համարել մեր ժամանակի առաջադիմական գաղափարներից

մեկը, քանի որ այն, պահպանելով հայի էթնիկ ինքնագիտակցությունն ու ազգային դիմագիծը, միաժամանակ հնարավորություն է տալիս ինտեգրվել ժամանակակից աշխարհում տեղի ունեցող մշակութային եւ ժողովրդավարական գործընթացներին՝ պահպանելով եւ հարստացնելով ազգային արժեհամակարգը:

¹ «Հանրապետական», Երեւան, թիվ 6 (37), 2006թ., էջ 3:

² Շարմազանով Է., Գարեգին Նժդեհը եւ ռազմական մանկավարժության հիմնահարցեր, Երեւան, 2006, էջ 51:

³ Նժդեհ Գ., Հատընտիր, Երեւան, 2001, էջ 32:

⁴ Բարսեղյան Ա., Ցեղակրոն շարժումը, Բոստոն, 1935, էջ 31:

⁵ Նժդեհ Գ., Հատընտիր, 2006, էջ 37:

⁶ Ն ժդեհ Գ., Ամերիկահայությունը-ցեղը եւ իր տականքը, Սոֆիա, 1935, էջ 78:

⁷ Ասատրյան Հ., Արթնացիր, հայ մարդ, Երեւան, 1998, էջ 87:

⁸ Նույն տեղում, էջ 39:

⁹ Նույն տեղում, էջ 40:

¹⁰ «Տարոնի արծիվ», Սոֆիա, 1939, թիվ 11, էջ 3-4:

¹¹ Նժդեհ Գ., Հատընտիր, Երեւան, 2006, էջ 24:

¹² Նույն տեղում, էջ 28:

¹³ Նույն տեղում, էջ 75:

¹⁴ Նույն տեղում, էջ 33:

¹⁵ Նույն տեղում, էջ 34:

¹⁶ Նույն տեղում, էջ 33:

¹⁷ Նույն տեղում, էջ 42:

¹⁸ Նույն տեղում, էջ 133:

Արմեն Սարգսյան. Ծնվել է 1979թ. Երեւանում: Ավարտել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության բաժինը: 2004թ. պաշտպանել է «Գարեգին Նժդեհի փիլիսոփայական հայացքները» թեմայով թեկնածուական թեզ՝ արժանանալով փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի դասախոս է:

Վարդան Աթոյան. Ծնվել է 1980թ. Երեւանում: Ավարտել է Երեւանի Պետական տնտեսագիտական ինստիտուտի «Կոմերցիա եւ ապրանքագիտություն» ֆակուլտետի մարքեթինգի բաժինը, ապա Ռուսաստանի Պլեխանովի անվան տնտեսագիտական ակադեմիայի լոգիստիկայի ամբիոնի ասպիրանտուրան: Ունի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ներկայում ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի-գլխավոր գանձապետի օգնականն է:

Հեղինակն է «Գարեգին Նժդեհի ուսմունքը եւ դրա արդիականությունը» ուսումնասիրության (Եր. 2007թ.):

Արսեն Բաբաջանյան. Ծնվել է 1986թ. Երեւանում: Ներկայում սովորում է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական բաժնի ասպիրանտուրայում:

Արմենուհի Սարգսյան. Ծնվել է 1986թ. Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Ավարտել է Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետի «Պատմություն եւ իրավունքի հիմունքներ» բաժինը:

Լեւոն Նազարյան. Ծնվել է 1989թ. Երեւանում: Ավարտել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության եւ քիմիայի ֆակուլտետը: Այդ ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահն է:

Գևորգ Մելքոնյան. Ծնվել է 1986թ. Լոռու մարզի Ախթալա քաղաքում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահն է:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
<i>Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ.</i> Գարեգին Նժդեհ. անցյալ, ներկա եւ ապագա	7
<i>Վարդան ԱԹՈՅԱՆ.</i> Նժդեհյան գաղափարախոսության ընդհանուր նկարագիրը եւ արդիականությունը	35
<i>Արսեն ԲԱԲԱՋԱՆՅԱՆ.</i> Նժդեհյան աշխատությունների այժմեականությունը	71
<i>Արմենուհի ՍԱՐԳՍՅԱՆ.</i> Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության արդիականությունը.....	95
<i>Լեւոն ՆԱԶԱՐՅԱՆ.</i> Ցեղակրոնության նշանակությունը հայ ազգային կյանքում	110
<i>Գևորգ ՄԵԼՔՈՆՅԱՆ.</i> Գարեգին Նժդեհի ուսմունքի արդիականությունը	135